Գ. — Περισμωμένη (῀) *ոլորակ.*

Շեշտը՝ բառի մը յանգին, վերջընթերին և նախավերջընթերին վրայ կրնայ դրուիլ, ինչպէս՝ ἀγαθός, μεγάλος, ἄξιος, *ևայլն.*

Բութը միայն բառի մը վերջը կրնայ դրուիլ շեշտին տեղն, եթէ այն բառը հետեւեալ բառին հետ կապակցութիւն մ'ունի, ինչպէս՝ καλὸς καὶ ἀγαθὸς μαθητής, *ևայլն.*

Ոլորակը՝ յանգին և վերջընթերին վրայ միայն կը դրուի, ինչպէս՝ ἀγαπῶ, μῆκος, χῶμα, *ևայլն.*

Իւրաքանչիւր բառ՝ վերոյիշեալ երեք շեշտերէն մին անպատճառ ունենալու է.

Յօդ. 44. — *Յոյն լեզուին մէջ կան նաեւ երկու տեսակ հնչման նշաններ, որոց մին* (᾿) Ψιλή

Նուրբ և միւսը (῾) Δασεῖα Թաւ կ'ըսուի, որք կը դրուին ձայնաւորով, երկբարբառով և ρ գրով սկսող բառից վերայ, ինչպէս՝ ἀληθής, εὐγενής, ἁγνός, ὁδός, ῥῆμα, ῥεῦμα, ևայլք։ Ասոնց իւրաքանչիւրին ուր դրուելուն և ինչպէս գործածուելուն վերայ, ստուգաբանական մասին մէջ երկարօրէն պիտի խօսուի։

Գիտ. Ա. — Երկբարբառներուն ձայնաւորները զատ զատ կը հնչուին, երբ անոնց երկրորդ ձայնաւորին վերայ այս (¨) Διαιρετικόν Տրոհական Նշանը գտնուի, ինչպէս՝ πυρκαϊά, ἄϋλος, ևայլք։

ԳԼՈՒԽ Բ.

ԱՆՈՒՆ

Յօդ. 45. — Անունը Κύριον Յատուկ կ'ըսուի, երբ մարդու, քաղաքի և կամ տեղւոյ մը անունն է, ինչպէս՝ Σωκράτης (Սոկրատ), Ἀθῆναι (Աթէնք), Αἴγυπτος (Եգիպտոս), ևայլք։

Անունը Προσηγορικόν Հասարակ կ'ըսուի, երբ շատ նոյնատեսակ իրերու վերաբերի, ինչպէս՝ τράπεζα (սեղան), ἄνθρωπος (մարդ), ἵππος (ձի), πόλις (քաղաք), ևայլք։ Այս անուանց երկու տեսակներն ալ Οὐσιαστικόν Գոյական են, վասն զի կ'անուանեն

նոյն իսկ իրն և անոր գոյութիւնն. իսկ Ἐπίθετον Ածական գոյականին որպիսութիւնը կամ վիճակը կը յայտնէ, ինչպէս՝ ὁ σοφός Σωκράτης (իմաստունն Սոկրատ), ἡ ὡραία πόλις (գեղեցիկ քաղաքն), ὁ καλός πατήρ (բարի հայրն), և այլք։

Յատուկ անուանք միայն մէկ սեռ ունին, որպէս՝ ὁ Δημήτριος, ἡ Ἀσία, τὸ Λονδῖνον, և այլք։ Իսկ հասարակ անուններէն անոնք, որք կենդանեաց կը վերաբերին, որոշ սեռ մը չունին և կ'ըսուին Ὁμογενῆ (Համասեռ) և որոց միայն յօդը կը փոխուի, ինչպէս՝ ὁ κύων (շուն), ἡ κύων (մատակ շուն), և այլք։ Ոմանք ալ մի և նոյն բառով և յօդով արական ալ կը նշանակեն իգական ալ և Ἐπίκοινα Զուգասեռ կ'ըսուին. ինչպէս՝ ὁ ἀετός (թէ արու և թէ էգ արծիւ), ἡ ἀλώπηξ (թէ արու և թէ էգ աղուէս), և այլք։ Սակայն կան մի քանի հասարակ անուններ, որք սեռի համեմատ թէ կազմութիւննին և թէ յօդերնին կը փոխեն և կ'ըսուին Διγενῆ (Կրկնասեռ). ինչպէս՝ ὁ λέων (արու առիւծ), ἡ λέαινα (մատակ առիւծ), ὁ λύκος (արու գայլ), ἡ λύκαινα (մատակ գայլ), և այլք։ Կենդանեաց անուան չեղող բոլոր բառերը մէկ սեռ միայն ունին։

Բոլոր ածական անուններն երեք սեռ ունին, որոց կանոնաւոր կազմակերպութեան վերայ վայելուչ տեղը պիտի խօսուի։

ՀԻՆԳ ՀՈԼՈՎՄԱՆՑ ՎԵՐԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 46. — *Բոլոր հոլովմանց մէջ յոգնակի սեռականն* ων *կը յանգի։*

Եզակի տրական հոլովներն ι *գրի կը յանգի. կամ յայտնի և կամ ստորագրեալ, որպէս են՝* ᾳ, ῃ *և* ῳ (§ 40)։

Չէզոք անուանց ուղղական, հայցական և կոչական հոլովները միշտ միանման են թէ եզակի և թէ յոգնակի թուոյ մէջ։

ԱՌԱՋԻՆ ՀՈԼՈՎՈՒՄՆ

Յօդ. 47. — *Որպէս տեսանք* (§ 3), *առաջին հոլովման վերայ կը հոլովուին* ας *և* ης *յանգող արական անուանք և որոց վերջաւորութիւնքն են*

	Եզակի		*Յոգնակի*
Ուղ.	ας,	ης,	αι,
Սեռ.	ου,	ου,	ῶν,
Տրկ.	ᾳ,	ῃ,	αις,
Հայց.	αν,	ην,	ας,
Կոչ.	α,	α,	αι,

Դիտ. Ա. — ης *յանգեալ անուանց կոչականը սովորաբար սուղ* α *ի կը վերջանայ և ուղղականին չեշտն որ վանկին վերայ ալ ըլլայ, կոչականին մէջ ևս նոյն վանկին վերայ կը մնայ. օրինակ,* ὁ.

στρατιώτης (*զինուոր*), *կոչ.* ὦ στρατιῶτα. ὁ προφήτης (*մարգարէ*), *կոչ.* ὦ προφῆτα. ὁ πατριάρχης (*պատրիարք*), *կոչ.* ὦ πατριάρχα, *եւայլք*։ *Կը բացառուի* δεσπότης (*տէր*) *բառը՝ որ կոչականին մէջ* δέσποτα *կըլլայ*։

Գիտ. Բ. — *Յոգնակի սեռականը միշտ իր յանգին վրայ ոլորակ շեշտը կընդունի. ինչպէս,* τῶν προφητῶν, τῶν λῃστῶν, τῶν ταμιῶν, *եւայլք*։

Գիտ. Գ. — ας *յանգեալ անուանց* α *տառը, բոլոր հոլովներուն մէջ երկար է. ինչպէս,* ὁ ταμίας, τὸν ταμίαν, τοὺς ταμίας. *իսկ* ης *յանգեալներուն՝ միայն յոգնակի հայցականին* α *երկար է*։

Գիտ. Դ. — ας *յանգեալ անուանց կոչականին* α *գիրն երկար է, իսկ* ης *յանգեալներունը՝ սուղ է*։

Գիտ. Ե. — *Այն անուններն՝ որք ամփոփեալ ըլլալով իրենց վերջաւորութեան վրայ կը շեշտուին, միշտ այս* (′) *շեշտը կ'ընդունին*։

ԵՐԿՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

Յօդ. 48. — *Երկրորդ հոլովման վրայ կը հոլովուին* (§ 4) α *եւ* η *յանգեալ իգական անուանք եւ որոց վերջաւորութիւնքն են*

	Եզակի		Յոգնակի
Ուղ.	α,	η,	αι,
Սեռ.	ας,	ης,	ων,
Տրկ.	ᾳ,	ῃ,	αις,
Հայց.	αν,	ην,	ας,
Կոչ.	α,	η,	αι

Գիտ. Ա. — Սեռականնին ης յանգող բոլոր բառից α վերջաւորութիւնը սուղ է. ինչպէս, ուղ. θάλασσα, սեռ. θαλάσσης. μέλισσα, μελίσσης, ևայլք. (§ 4, Գիտ. Ա.)։

Գիտ. Բ. — Հայցական և կոչական հոլովներուն α վերջաւորութիւնը սուղ է. ինչպէս, τὴν μοῦσαν, ὦ μοῦσα. τὴν γλῶσσαν, ὦ γλῶσσα, ևայլք։

Գիտ. Գ. — Յոգնակի հայցականնին ας յանգն երկար է. ինչպէս, τὰς μούσας, τὰς γλώσσας, τὰς θαλάσσας. ևայլք։

Գիտ. Դ. — Ո և է ρα վերջացող երկվանկ անուանց վերջընթերն եթէ ձայնաւոր մ'ըլլայ, α յանգն երկար է, իսկ եթէ երկբարբառ ըլլայ՝ սուղ է. զորօրինակ, ὥρα, χήρα, μοῖρα, σφαῖρα, πεῖρα, և այլք։

Գիտ. Ե. — Այս հոլովման վերայ ձևացող անուանց յոգնակի սեռականին ων յանգն ոլորակ նշան կ'ընդունի միշտ. ինչպէս, τῶν θαλασσῶν, τῶν μουσῶν, τῶν τιμῶν, τῶν γλωσσῶν, ևայլք։

Ծանօթ. Ա. — *Այս կանոնէն կը բացառուին բոլոր* ος *յանգող արական ածականաց իգականները, որք յոգնակի սեռականին մէջ՝ իրենց շեշտը վերջընթերնուն վրայ կը պահեն. զորօրինակ,* ὁ ξένος, *իգ.* ἡ ξένη, *յգ. սեռ.* τῶν ξένων. ὁ ἅγιος, *իգ.* ἡ ἁγία, *յգ. սեռ.* τῶν ἁγίων, *եայլք*:

ԵՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

Ցոյց. 49. — *Այս հոլովման վրայ կը հոլովուին* ος *յանգեալ արական և իգական և* ον *յանգեալ չէզոք անուանք և որոց վերջաւորութիւնքն են.*

	Ար. իգ.	Չէզոք	Ար. իգ.	Չէզոք
	Եզակի		Յոգնակի	
Ուղ.	ος,	ον,	οι,	α,
Սեռ.	ου,	ου,	ων,	ων,
Տրկ.	ῳ,	ῳ,	οις,	οις,
Հայց.	ον,	ον,	ους,	α,
Կոչ.	ε,	ον,	οι,	α,

Դիտ. Ա. — *Այս հոլովման արականներն իգականներէն յօդով միայն կը տարբերին. ինչպէս,* ὁ ἔμπειρος, *իգ.* ἡ ἔμπειρος. ὁ ἄδολος, *իգ.* ἡ ἄδολος. ὁ αἴτιος, *իգ.* ἡ αἴτιος, *եայլք* (§ 5):

Դիտ. Բ. — *Չէզոք անուանց ուղղականը, հայցականն և կոչականը մի և նոյն վերջաւորութիւնը ունին միշտ:*

Դիտ. Գ. — Չէզօք անուանց α յանգը միշտ սուղ է։

Ծանօթ. Ա. — Չէզօք դերանուններն՝ որք այս հոլովման վերայ կը հոլովուին, եզակի ուղղականին և հայցականին մէջ իրենց վերջին ν գիրը կը թողուն. ինչպէս, αὐτό, ἐκεῖνο, τοῦτο, ἄλλο, և այլք մի քանի ուրիշ դերանուանք։

ՉՈՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

Յօդ. 50. — Այս հոլովումն՝ Ἀττική Κλίσις Ատտիկեան հոլովում կ'անուանի, և արդի յունական լեզուին մէջ գրեթէ բոլորովին անգործածելի է, բաց 'ի մի քանի բառերէ և յատուկ անուններէ, որք այս հոլովման վերայ կը ձևանան. (§ 6. Դիտ. Ա.)։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄՆ

Յօդ. 51. — Այս հոլովման վերայ հոլովուող անուանք արական, իգական և չէզօք են, որոց եզակի ուղղականն α, ι, υ, ω ձայնաւորներուն և ν, ρ, ς կամ ξ, ψ բաղաձայններուն միովը կը յանգի (§ 7)։

Այս հոլովմունքն Աւելորդավանկ Περιττοσύλλαβος կ'անուանի, վասն զի հոլովեալ անուանք՝ միւս հոլովներուն մէջ, ուղղականին վերայ վանկ մը կը յաւելուն և վերջաւորութիւններն ասոնք են.

	Ար. Իգ.	Չէզոք	Ար. Իգ.	Չէզոք
	Եզակի		*Յոգնակի*	
Ուղ.	—	—	ες,	α,
Սեռ.	ος,	ος,	ων,	ων,
Տրկ.	ι,	ι,	σι,	σι,
Հայց.	α,	—	ας,	α,
Կոչ.	—	—	ες,	α,

Գիտ. Ա. — *Այս հոլովման վերայ ձեւացող միավանկ անունները՝ թէ եզակի և թէ յոգնակի սեռական և տրական հոլովներուն մէջ՝ իրենց յանգերուն վերայ կը շեշտուին. ինչպէս, ուղ.* μήν (*ամիս*), *սեռ.* μηνός, *տրկ.* μηνί, *յգ. սեռ.* μηνῶν, *տրկ.* μησί. *ուղ.* χείρ (*ձեռք*), *սեռ.* χειρὸς, *տրկ.* χειρί *յգ. սեռ.* χειρῶν, *տրկ.* χερσὶ, *ևայլք*։

Ծանօթ. Ա. — *Կը բացառուին այս կանոնէն* παῖς (*տղայ*). φῶς (*լոյս*) *և* δᾷς (*ջահ*) *միավանկ բառերուն յոգնակի սեռականներն, որք փոխանակ ըստ կանոնի* παιδῶν, φωτῶν, δαδῶν *ըլլալու*, παίδων, φώτων *և* δάδων *կըլլան, որպէս նաև* πάνπων, ὤτων, Τρώων *բառերն ալ*։

Ծանօթ. Բ. — *Այս հոլովման վերայ հոլովուող բառից արմատները դիւրաւ կը գտնուին, երբ անոնց սեռական հոլովոյն վերջաւորութիւնները հանուին. զորօրինակ,* Ἄραψ (*Արաբացի*), *սեռ.* Ἄραβ-ος. ἅρπαξ (*յափշտակիչ*); *սեռ.* ἅρπαγ-ος. λέων (*առիւծ*),

սեռ, λέοντ-ος *բառերուն արմատներն են* Ἄραβ, ἅρπαγ, λέοντ *ևայլք*։

Գիտ. Բ. — *Ցոգնակի տրականն եզակի տրականէն կը շինուի անոր ւ վերջաւորութեան վրայ* σ *գիր մ՚աւելցնելով, սակայն երբ յաւելեալ* σ *գրէն առաջ* δ, θ, ν, τ *գրերէն մին գտնուի, կը բարձուի. զորօրինակ, ուղ.* ῥήτωρ, *եզ. տրկ.* ῥήτορι, *յգ. տրկ.* ῥήτορσι. *ուղ.* λαμπάς, *եզ. տրկ.* λαμπάδι, *յգ. տրկ.* λαμπᾶσι. *ուղ.* μὴν, *եզ. տրկ.* μηνί, *յգ. տրկ.* μησί. *ուղ.* σῶμα, *եզ. տրկ.* σώματι, *յգ. տրկ.* σώμασι, *և այլք*։

Գիտ. Գ. — *Եզակի տրականին* οντι *յանգեալ անուանց յոգնակի տրականն՝* ουσι *կը յանգի. ինչպէս, ուղ.* λέων, *եզ. տրկ.* λέοντι, *յգ. տրկ.* λέουσι, γράφων, *եզ. տրկ.* γράφοντι, *յգ. տրկ.* γράφουσι *ևայլք*։ *Իսկ՝ երբ եզակի տրականին* εντι *յանգի, յոգնակի տրականն* εισι *կ՚ըլլայ. ինչպէս, ուղ.* λυθείς, *եզ. տրկ.* λυθέντι, *յգ. տրկ.* λυθεῖσι. *ուղ.* χαρίεις, *եզ. տրկ.* χαρίεντι, *յգ. տրկ.* χαρίεισι, *ևայլք*։

Ծանօթ. Գ. — *Այս հոլովման վրայ հոլովուող անուանց իգականները յօդով միայն կը տարբերին արականներէն. զորօրինակ,* ὁ εὐδαίμων *և* ἡ εὐδαίμων (*երջանիկ*), ὁ ἐλεήμων *և* ἡ ἐλεήμων (*ողորմած*), ὁ ἀληθής *և* ἡ ἀληθής (*ճշմարիտ*), *ևայլք*։

Գիտ. Դ. — *Ընդհանրապէս բոլոր* ων *յանգեալ ներգործական ընդունելութիւնք և նոյն վերջաւորութեամբ մի քանի անուանք հոլովուած ատեններին,* ν *գրէն յետոյ* τ *գիր մը եւս կը յաւելուն. ինչպէս,* *ուղ.* ὁ γράφων, *սեռ.* γράφοντος, *տրկ.* γράφοντι, *հայց.* γράφοντα. *յգ. ուղ.* γράφοντες, *սեռ.* γραφόντων. *ուղ.* ὁ λέων, *սեռ.* τοῦ λέοντος, *տրկ.* τῷ λέοντι, *հայց.* τὸν λέοντα, *յգ. ուղ.* λέοντες, *սեռ.* λεόντων, *եւայլք։* *Նմանապէս* ας *յանգեալ ներգործական ընդունելութիւններն իրենց վերջին* ς *գիրը* ν *գրի փոխելով՝* τ *գիրը կ'առնուն, ինչպէս,* *ուղ.* ὁ γράψας, *սեռ.* τοῦ γράψαντος, *տրկ.* τῷ γράψαντι, *հայց.* τὸν γράψαντα. *յգ. ուղ.* οἱ γράψαντες, *սեռ.* τῶν γραψάντων, *եւայլք։*

Ծանօթ. Դ. — *Այն ածական անուանք՝ որք* ας *և* αν *կը յանգին, հոլովուած ատեններին* τ *գիրը չեն ընդունիր. զորօրինակ,* *ուղ.* ὁ μέλας (*սև*), *սեռ.* τοῦ μέλανος, *տրկ.* τῷ μέλανι, *հայց.* τόν μέλανα. *յգ. ուղ.* μέλανες, *եւայլք։*

Գիտ. Ե. — *Սովորաբար* ην *յանգեալ անուանք, իրենց միւս հոլովներուն մէջ* η *գիրը* ε *գրի կը փոխեն. ինչպէս,* *ուղ.* ὁ λιμήν (*նաւահանգիստ*), *սեռ.* τοῦ λιμένος, *տրկ.* τῷ λιμένι, *հայց.* τόν λιμένα. *ուղ.* ὁ ποιμήν (*հովիւ*) — ποιμένος. *յգ.* ποιμένες, *եւայլք։*

Գիտ. Զ. — *Բոլոր* αρ *յանգեալ անունները չէ-*

զոք են և իրենց միւս հոլովներուն մէջ ք գիրը τ գրի կը փոխեն. ինչպէս, ուղ. τό φρέαρ (ջրհոր), սեռ. τοῦ φρέατος, տրկ. τῷ φρέατι. յգ. ուղ. τὰ φρέατα, սեռ. τῶν φρεάτων. τό στέαρ (ճարպ), սեռ. τοῦ στέατος, տրկ. τῷ στέατι. յգ. ուղ. στέατα, սեռ. στεάτων, ևայլն:

Ծանօթ. Դ. — Այս կանոնէն կը բացառուին ἔαρ (գարուն) և νέκταρ (նեկտար) բառերն, որոց սեռ. ἔαρος և νέκταρος, տրկ. ἔαρι և νέκταρι կ'ըլլայ, և յոգնակի թիւ չունին:

Գիտ. Է. — Այն բառերն՝ որոնք εις վերջաւորութիւնն ունին, իրենց միւս հոլովներուն մէջ ι գիրը կը թողուն միշտ. ինչպէս, ուղ. χαρίεις (շնորհալի), սեռ. χαρίεντος, տրկ. χαρίεντι, հայց. χαρίεντα. յգ. χαρίεντες. ուղ. λυθείς (քակուած), սեռ. λυθέντες, տրկ. λυτέντι, հայց. λυθέντα. յգ. λυθέντες, ևայլն. սակայն այսպիսեաց յոգնակի արականներն՝ ըստ կանոնի (Գիտ. Գ.) εισι կը վերջանան:

Գիտ. Ը. — Բոլոր μα յանգեալ անուանք չէզոք և առաւելավանկ են, որոց սեռական և տրականն, որպէս նաև յոգնակի ուղղական հոլովները τ գիրը կ'առնուն իրենց վերջաւորութենէն առաջ. ինչպէս, ուղ. τὸ βῆμα (քայլ), սեռ. τοῦ βήματος, տրկ. τῷ βήματι. յգ. ուղ. τὰ βήματα, սեռ.

τῶν ῥημάτων, *տրկ.* τοῖς ῥήμασι (*Տես Գիտ. Բ.*), *հայց.* τά ῥήματα, *ևայլք*։

Գիտ. Թ. — ας *յանգեալ դոյական չէզոք անուններն առաւելավանկ են, որք նոյնպէս հոլովուած ատեննին վերջին* σ *գիրը թողլով՝* τ *գիրը կ'առնուն. ինչպէս.* τὸ τέρας (*վիշապ*), τοῦ τέρατος, τῷ τέρατι. *յգ.* τὰ τέρατα, τῶν τεράτων. τό πέρας (*վախճան*), τοῦ πέρατος. *յգ.* τὰ πέρατα, *ևայլք*։

Ծանօթ. Ե. — *Բոլոր* ηρ *յանգեալ անուանք արական կամ իգական լինելով՝ կոչականնին սովորաբար* ερ *կը յանգի, և եթէ երկվանկ են՝ վերջընթերին, իսկ եթէ եռավանկ կամ բազմավանկ՝ մակվերջընթերին վերայ կը շեշտուին. զոր օրինակ,* σωτήρ (*փրկիչ*), *կոչ.* σῶτερ. πατήρ (*հայր*), *կոչ.* πάτερ. θυγάτηρ (*դուստր*), *կոչ.* θύγατερ, *ևայլք*։

Յօդ. 52. — *Շատ անգամ* ων *վերջացող առաւելավանկ անուանք հոլովուած ատեն,* ω *գիրերնին* ο *գրի կը փոխեն. ինչպէս, ուղ.* λέων, *սեռ.* λέοντος, *տրկ.* λέοντι, *հայց.* λέοντα. *յգ.* λέοντες, *ևայլք. ուստի այս փոփոխումն որ բառերու վերայ լինելը, հետեւեալ կանոններէ կը տեսնուի*։

1. *Իրենց վերջընթերին վերայ շեշտուող դոյական անուանք. ինչպէս, ուղ.* τέκτων (*հիւսն*), *սեռ.* τέκτονος, *տրկ.* τέκτονι, *հայց.* τέκτονα. *յգ.*

τέκτονες, ἄκμων (սալ), ἄκμονος – ἄκμονι – ἄκμονα, յգ. ἄκμονες – ἀκμόνων, եւայլն։

Ծանօթ. Ա. — Այս կանոնէն կը բացառուին այս κλύδων, πώγων, ῥώθων, κώδων և Πλάτων բառերն, որք իրենց ω գիրն անփոփոխ կը պահեն։

2. Իրենց յանգին վերայ շեշտուող անուանք. ինչպէս, ἡ ἀηδών (սոխակ) – τῆς ἀηδόνος – τῇ ἀηδόνι – τὴν ἀηδόνα. յգ. αἱ ἀηδόνες – τῶν ἀηδόνων. ἡ εἰκών (պատկեր) – τῆς εἰκόνος – τῇ εἰκόνι – τὴν εἰκόνα. յգ. αἱ εἰκόνες – τῶν εἰκόνον, եւայլն։

3. Բոլոր ըթանչան ներգործական ընդունելութեանց ներկայ և ապառնի ժամանակներն և γέρων (ծեր), δράκων (վիշապ) և θεράπων (ծառայ) գոյական անուններն, որք իրենց ω գիրն ο գրի փոխելէ զատ, τ գիրն ևս կը յաւելուն. ինչպէս, ὁ γράφων (գրող) – τοῦ γράφοντος – τῷ γράφοντι – τόν γράφοντα. յգ. οἱ γράφοντες – τῶν γραφόντων. ὁ γράψων (գրելու) – τοῦ γράψοντος – τῷ γράψοντι – τόν γράψοντα. յգ. οἱ γράψοντες. ὁ γέρων – τοῦ γέροντος. ὁ δράκων – τοῦ δράκοντος. ὁ θεράπων – τοῦ θεράποντος – τῷ θεράποντι, եւայլն։

4. Բոլոր ωρ յանգեալ անուններն այս փոփոխումը կը կրեն. ինչպէս, ῥήτωρ (ճարտասան) – ῥήτορος – ῥήτορι – ῥήτορα. յգ. ῥήτορες. αὐτοκράτωρ (ինքնակալ) – αὐτοκράτορος – αὐτοκράτορι, եւայլն։

Գիտ. Ա. — *Այն անուններն որք* ις, υς, ους *և* αυς *կը յանգին, երբ իրենց սեռականին վերջաւորութիւնը ձայնաւոր* (§ 4, *Գիտ. Ա.*) *է, հայցականնին* ν *գրի կը յանգի, ինչպէս, ուղ.* πόλις, *սեռ.* πόλεως, *հայց.* πόλιν. βότρυς — βότρυος — βότρυν. νοῦς — νοὸς — νοῦν. γραῦς — γραός — γραῦν, *և այլք. սակայն նոյն վերջաւորութիւններն ունենալով՝ եթէ ձայնաւոր սեռականի չյանգին, յայնժամ հայցականին* α *գրին և կրնայ վերջանալ. ինչպէս,* χάρις (*շնորհ*), *սեռ.* χάριτος, *հայց.* χάριτα *և* χάριν. ποῦς (*ոտք*), *սեռ.* ποδός, *հայց.* πόδα *և* ποῦν *կրնայ գործածուիլ։*

Ծանօթ. Բ. — *Իրենց* ω *յանգն* ο *ի փոխող անուանց կոչականին մէջ ալ փոխեալ կը մնայ. զորօրինակ,* ὁ λέων — τοῦ λεοντος, *կոչ.* ὦ λέον. ὁ τέκτων — τοῦ τέκτονος, *կոչ.* ὦ τέκτον, *և այլք։ Այս կանոնէն սակայն կը բացառուին բթանշան ընդունելութեանց կոչականներն, որք ուղղականնին պէս կը վերջանան, զորօրինակ,* ὁ γράφων — τοῦ γράφοντος, *կոչ.* ὦ γράφων. ὁ λέγων — τοῦ λέγοντος, *կոչ.* ὦ λέγων, *և այլք։*

Ծանօթ. Գ. — *Առաւելավանկ անուանց վերջին* ς *գիրը, թէ ամփոփեալ լինին անոնք և թէ անամփոփ, սովորաբար կոչականին մէջ կը վերցուի. զորօրինակ,* ὁ παῖς (*տղայ*) — ὦ παῖ. ὁ βοῦς (*կով*) — ὦ βοῦ. ὁ βασιλεύς (*թագաւոր*) — ὦ βασιλεῦ. ὁ Ἄτλας (*Ատղաս*) — ὦ Ἄτλα, *և այլք։*

Գիտ. Բ. — Այս առաւելավանկ հոլովման վերայ հոլովուող ընդունելութեանց և արական անուանց ας վերջաւորութիւններն երկար են . ինչպէս, ὁ Αἴας , ὁ ποιήσας , ὁ τιμήσας , ὁ γράψας, ևայլք։ Սակայն յոգնակի հայցականներունը սուղ է. ինչպէս, τοὺς ποιήσαντας , τοὺς τιμήσαντας , τοὺς γράψαντας , և այլք։ Նմանապէս սուղ է եզակի հայցականին վերջին α գիրն . ինչպէս , τὸν γράψαντα , τὸν ποιήσαντα, τὸν προεστῶτα , τὴν ὡραιότητα , τὴν χεῖρα , ևայլք . Նմանապէս բոլոր չէզոք անուանց α, ι և υ վերջաւորութիւնքը սուղ են . ինչպէս , σῶμα, μέλι, ἄστυ, ևայլք։

ԳԼՈՒԽ Գ.

ԱՄՓՈՓԵԱԼ ԱՆՈՒԱՆՔ

Յօդ. 53. — Առաջին մասին (§ 8 , Գիտ. Ա.) մէջ ըսինք թէ՝ այն անուններն որոց բոլոր հոլովներու վերայ ամփոփումը կը տեսնուի , ὁλοπαθῆ համակէր կ'ըսուին . իսկ անոնք որք մի քանի հոլովներու վերայ կը կրեն այս ամփոփումը , կ'ըսուին ὀλιγοπαθῆ սակաւակէր ։

Գիտ. Ա. — ης *յանգեալ սակաւավանկ ամփոփ-եալները մեծաւ մասամբ ածական լինելով՝ սովորաբար իրենց վերջաւորութեանց վերայ շեշտը կ՚առնուն . ինչպէս .* εὐγενής (*ազնիւ*), εὐσεβής (*բարեպաշտ*), μονογενής (*միածին*), ἀμαθής (*տգէտ*), *և այլք ։ Ասոնց արականն իգականէն յօդով միայն կը տարբերին ։*

Գիտ. Բ. — ις *յանգեալ անուանք ևս սովորաբար իգական գոյական են, որոց յոգնակիններն* ει *երկբարբառով կը գրուին . ինչպէս ,* ἡ φύσις (*բնութիւն*), *յգ.* αἱ φύσεις , ἡ λέξις (*բառ*), *յգ.* αἱ λέξεις , ἡ πρᾶξις (*գործ*), *յգ.* αἱ πράξεις , *ևայլք ։*

Գիտ. Գ. — ος *յանգեալ չէզոքներն ալ գոյական են . ինչպէս ,* τό γένος (*սեռ, ցեղ*), τὸ κλέος (*փառք*), τό χρέος (*պարտք*), τό τέλος (*վերջ*), τό πάθος (*կիրք*), *ևայլք ։*

Գիտ. Դ. — ευς *յանգեալները սովորաբար իրենց վերջաւորութեան վերայ կը շեշտուին , որոց յոգնակի տրականը միշտ* εῦσι *կը վերջանայ ։*

Ծանօթ. Ա. — ἄνθος (*ծաղիկ*) *և* ὄρος (*լեռ*) *բառերուն յգ. սեռականը* τῶν ἀνθέων , τῶν ὀρέων *կ՚ըլլայ , և ոչ ըստ կանոնի* τῶν ἀνθῶν , τῶν ὀρῶν .

ԳԼՈՒԽ Դ.

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՔ

Յօդ. 54. — *Ածականն* Ἐπίθετον *գոյական անուան քով դրուելով՝ անոր ինչպէս ըլլալն, այսինքն որպիսութիւնը կը յայտնէ. զորօրինակ*, ὁ σοφός πατήρ (*իմաստուն հայրն*), ἡ καλή μήτηρ (*բարի մայրն*), τό ὑψηλόν δένδρον (*բարձր ծառն*), *եւայլք*։

Ածականը պարտ է իւր գոյականին հետ սեռով, թուով և հոլովով միշտ համաձայնիլ, վասն որոյ և երեք սեռի կերպարանք կ'առնու՝ իւր վերջաւորութիւնն երեք կերպի փոխելով, այսինքն՝ καλός *արական ածականն իգական ընելու համար* ος *յանգն* η *գրի, և չէզոք ընելու համար* ον *ի փոխելու է. ինչպէս*, ὁ καλός πατήρ, ἡ καλή μήτηρ, τὸ καλόν ζῶον. *և այս կարգի ածականները Եռայանգ* Τρικατάληκτα *կ'ըսուին*։

Սակայն այնպիսի ածականներ ալ կան, որք՝ թէ արական և թէ իգական գոյականներու քով միևնոյն վերջաւորութեամբ կը գործածուին՝ միայն յօդերնին փոխելով, իսկ չէզոքները զատ վերջաւորութեամբ. ինչպէս, ὁ ἀληθής ἄνθρωπος (*ճշմարիտ մարդն*), ἡ ἀληθής γυνή (*ճշմարիտ կինն*), τὸ

ἀληθές παιδίον (*ճշմարիտ տղան*), *եւայլք. այս տեսակ ածականներն ալ կ'ըսուին* Երկայանգ Δικατάληκτα.

ԵՌԱՅԱՆԳ ԱԾԱԿԱՆՔ

Յօդ. 55. — *Բարդ չեղող բոլոր ածականներն եռայանգ են և վերջաւորութիւններն կը փոխեն այսպէս.*

	Ար.	Իգ.	Չէզոք	*ինչպէս*
1.	ος	η	ον.	καλός—ή—όν.
2.	ιος	ία	ιον.	ἅγιος—ία—ιον.
3.	ρος	ρα	ρον.	καθαρός—ά—όν.
4.	ους	η	ουν.	χρυσοῦς—ῆ—οῦν.
5,	ρους	ρα	ρουν.	ἀργυροῦς—ᾶ—οῦν.
6.	υς	εια	υ.	γλυκῦς—εῖα—ύ.
7.	εις	εσσα	εν.	χαρίεις—εσσα—εν.
8.	ας	αινα	αν.	μέλας—αινα—αν.

Այս ածականներուն արական և չէզոքներն երրորդ, իսկ իգականներն երկրորդ հոլովման վերայ կը հոլովուին:

ԵՐԿԱՅԱՆԳ ԱԾԱԿԱՆՔ

Յօդ. 56. — 1. *Բոլոր բարդ եղող ածականներն երկայանգ են. զորօրինակ, ար.* ὁ ἔντιμος, *իգ.* ἡ ἔντιμος, *չէզ.* τὸ ἔντιμον. ὁ διάφορος — ἡ διάφορος — τὸ διάφορον, *եւայլք:*

2. — ων յանգեալ առաւելավանկ ածականները՝ որոց չէզոքն ον կ'ըլլայ, չեշտերնին մակվերջընթերին վրայ տեղափոխելով. զորօրինակ, ար. ὁ ἐλεήμων, իգ. ἡ ἐλεήμων, չէզ. τὸ ἐλέημον. ὁ εὐδαίμων – ἡ εὐδαίμων – τὸ εὔδαιμον, եւայլք:

3. ης յանգեալ սակաւակիր ածական ամփոփեալները՝ որոց չէզոքները ες կը վերջանան. զորօրինակ, ար. ὁ εὐγενής, իգ. ἡ εὐγενής, չէզ. τὸ εὐγενές. ὁ εὐσεβής – ἡ εὐσεβής – τὸ εὐσεβές, եւայլք:

4. ις յանգեալ ածականները՝ որոց չէզոքն ι կը վերջանայ. զորօրինակ, ար. ὁ ἄχαρις, իգ. ἡ ἄχαρις, չէզ. τό ἄχαρι. ὁ ἄπατρις – ἡ ἄπαπρις – τό ἄπατρι, եւայլք:

5. υς յանգեալ բարդերը. զորօրինակ, ὁ ἔνδακρυς, ἡ ἔνδακρυς, τὸ ἔνδακρυ, եւայլք:

Ծանօթ. Ա. — Երկայանգ կը գործածուին մի քանի բարդ չեղող ածականներ, որոց՝ եթէ ըստ կանոնի իգականը չինուի, վերացեալներուն կերպարանքը կ'առնուն. ինչպէս, ὁ ἐλευθέριος (ազատաձեռն), ἡ ἐλευθέριος, τὸ ἐλευθέριον, եւ ոչ ὁ ἐλευθέριος, իգ. ἡ ἐλευθερία, եւայլք:

Ծանօթ. Բ. — ιμος յանգեալք եւ մի քանի ուրիշ պարզ ածականք՝ հակառակ վերոյիշեալ քերականական կանոնաց, իբր երկայանգ կը գործածուին. ինչպէս, ὁ եւ ἡ ὠφέλιμος (օգտակար) – τὸ ὠ-

φέλιμον. ὁ և ἡ γνώριμος (ծանօթ), τὸ γνώριμον, ὁ և ἡ ἄρτιος (ամբողջ) — τό ἄρτιον. ὁ և ἡ ἥσυχος (հանդիստ) — τό ἥσυχον, ևայլք։

Ծանօթ. Գ. — Այս ἄρρην կամ ἄρσην (արու) բառին չէզոքն ἄρρεν կամ ἄρσεν կ'ըլլայ։

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՑ ՎԵՐԱՑ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդ. 57. — 1. ρος կամ մաքուր ος յանգեալ ածականներուն իգականներն երկար α ի կը վերջանան. ինչպէս, πονηρός — πονηρά. μέτριος — μετρία. ἅγιος — ἁγία, ևայլք։

2. Եռայանգ ածականաց իգականները յոգնակի սեռականին յանգին վրայ չեն շեշտուիր, այլ իրենց արականին շեշտն անփոփոխ կը պահեն. ինչպէս, ὁ ἄξιος, էգ. ἡ ἀξία, յգ. սեռ. τῶν ἀξίων և ոչ τῶν ἀξιῶν ՝ըստ կանոնի (§ 48, Ե.)։

3. υς յանգեալ արական ածականաց իգականներուն α վերջաւորութիւնը սուղ է. ինչպէս, ὁ ἡδύς. էգ. ἡ ἡδεῖα, ὁ πλατύς, ἡ πλατεῖα, ևայլք։

4. ικος յանգող ածականները՝ բարդ ալ ըլլան, միշտ եռայանգ են. ինչպէս, ἐπιδεκτικός — ἐπιδεκτική — ἐπιδεκτικόν. προοδευτικός — προοδευτική — προοδευτικόν, ևայլք։ Այս կանոնէն կը խոտորին բացասական α գրով բարդեալները. զորօրինակ. ὁ ἄδικος, էգ. ἡ ἄδικος, չէզ. τὸ ἄδικον (անիրաւ)։

Որպէս բայից խոնարհմանց մէջ տեսանք, թէ ներգործական և թէ կրաւորական ընդունելութիւնք՝ իբր ածական եռայանգ են. ինչպէս, ὁ λύων — ἡ λύουσα — τό λύον, ὁ λύσας — ἡ λύσασα — τὸ λῦσαν. ὁ λύσων — ἡ λύσουσα — τό λῦσον. Կր. ὁ λυόμενος — ἡ λυομένη — τὸ λυόμενον. ὁ λυθείς — ἡ λυθεῖσα — τό λυθέν, *ևայլք*։

Ծանօթ. Ա. — *Այս* πᾶς ἅπας *և* σύμπας (*բոլոր, համայն*) *բառից իգականները* πᾶσα, ἅπασα *և* σύμπασα *կ'ըլլան, նոյնպէս և* ἐχών (*կամաւ*), Իգ. ἐχοῦσα, Չէզ. ἐχόν. ἄχων (*ակամայ*), Իգ. ἄχουσα, Չէզ. ἆχον *կ'ըլլայ. իսկ* πολύς *և* μέγας *բառերուն իգականներն* ἡ πολλή, ἡ μεγάλη *և չէզոքները* τό πολύ, τό μέγα *կ'ըլլայ*։

Ծանօթ. Բ. — *Մի քանի առականներ ալ կան, որք չէզոք չունենալով՝ արական և իգականները մի և նոյն վերջաւորութեամբ կը գործածուին և* Διγενῆ Μονοκατάληκτα Երկսեռ Միայանգ *կը կոչուին. զորօրինակ,* ὁ *և* ἡ μακρόχειρ (*երկայնաձեռն*), ὁ *և* ἡ ὁμῆλιξ (*հասակակից*), *նաև մի քանի ածականներ ալ կան՝ որք միայն մէկ սեռ ունին. զորօրինակ,* ὁ πένης (*աղքատ*), ὁ πρέσβυς *կամ* πρεσβύτης (*ծեր, դեսպան*), *և կամ միայն իգական սեռն ունին,* ἡ ὕπανδρος (*ամուսնացեալ կին*)։

Աստ ուսանողաց վարժութեանը համար, եռայանգ և երկայանգ ածականաց մի քանի օրինակներ դնել պատշաճ համարեցինք, որոց իգական և չէզոքները, պարտ է՝ ըստ վերոյիշեալ կանոնաց, իրենք ձևացնել։

Ἀγαπητός	սիրելի.	διάφορος	տարբեր.
ἄδικος	անիրաւ.	δυνατός	զօրաւոր.
ἄξιος	արժանի.	δίκαιος	արդար.
ἀσθενής	տկար.	εὐγενής	ազնիւ.
ἀπρεπής	անվայել.	εὐσεβής	բարեպաշտ.
βαρύς	ծանր.	ζηλότυπος	նախանձոտ.
βέβαιος	ստոյգ.	ζήδωρος	կենսապարգեւ
γυμνός	մերկ.	ἡμίγυμνος	կիսամերկ.
γεώδης	հողուտ.	ἥμερος	հեզ, ընդել.
θεῖος	աստուածային.	σεμνός	պարկեշտ.
θετός	դասեալ.	σοφός	իմաստուն.
ἱερός	նուիրական.	στενός	նեղ.
ἱκανός	բաւական.	τάλας	թշուառ.
καθαρός	մաքուր.	τυφλός	կոյր.
καινός	նոր.	ὑάλινος	ապակեղէն.
κενός	պարապ, սին.	ὑψηλός	բարձր.
λευκός	ճերմակ.	φανερός	յայտնի.
λεῖος	հարթ,	φαεινός	փայլուն.
μόνος	մինակ.	χαρίεις	շնորհալի.
μαλακός	կակուղ.	χωλός	կաղ.
νεόφυτος	նորատունկ.	χρηστός	բարի.
νόμιμος	օրինաւոր.	ψυχολόγος	հոգեբան.
νέος	երիտասարդ,	ψιλός	բարակ.

ξένος	օտար.	ψάλλων	երգող.
ξανθός	խարտեաշ.	ψάλας	երգած.
ὀκνηρός	ծոյլ.	ψαλείς	երգեալ.
ὀρθόδοξος	ուղղափառ.	ὠφέλιμος	օգտակար.
παλύγλωσσος	բազմալեզու.	ὠμός	հում, վայրագ.
πορφυροῦς	ծիրանեգոյն.	ὡραῖος	գեղեցիկ.

ԳԼՈՒԽ Ե.

ԱՍՏԻՃԱՆՔ ԱԾԱԿԱՆԱՑ

Յօդ. 58. — *Ածականը գոյականի մը որպիսութիւնն երեք աստիճաններով կրնայ յայտնել, որք* Θετικόν Դրական, Συγκριτικόν Բաղդատական *և* Ὑπερθετικόν Գերադրական *կ'ըսուին։*

Հելլէն լեզուին մէջ τερος *և* τατος *մասնիկները կան, որոնք դրական ածականաց վերայ դրուելով՝ բաղդատական և գերադրական աստիճանները կու տան անոնց. ինչպէս,* ὑψηλός (*բարձր*) Դրակ. ὑψηλότερος (*բարձրագոյն*) Բաղ. ὑψηλότατος (*ամենաբարձր*). πονηρός (*խորամանկ*) Դրակ. πονηρότερος (*խորամանկագոյն*), πονηρότατος (*ամենախորամանկ*), *ևայլք։*

ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

ԱԾԱԿԱՆԱՑ ԱՍՏԻՃԱՆՆԵՐՈՒ ՎԵՐԱՅ

Ցոդ. 59. — *Այն դրական ածականներուն՝ որք* ος *և* υς *կը յանգին, բաղդատական և գերադրական աստիճանները տալու համար պէտք է* ς *գիրը վերցնել և* τερος τατος *մասնիկներն աւելցնել. Ինչպէս,* σκληρός (*կարծր*) — σκληρότερος — σκληρότατος. φωτεινός (*լուսաւոր*) — φωτεινότερος — φωτεινότατος, πλατύς (*լայն*) — πλατύτερος — πλατύτατος, *և այլք։*

Գիտ. Ա. — ος *յանգեալ դրական ածականաց վերջընթերն երբ սուղ ձայնաւոր մ'ըլլայ, բաղդատական և գերադրական աստիճաններուն մէջ* ο *գիրն* ω *գրի կը փոխուի. Ինչպէս,* σοφός — σοφώτερος — σοφώτατος. ἐλεύθερος — ἐλευθερώτερος — ἐλευθερώτατος, *և այլք։ Սակայն երբ վերջընթերն երկար ձայնաւոր գիր մը և կամ* ος *յանգէն առաջ երկու բաղաձայն գրեր կամ* ζ, ξ, ψ, *կրկիններէն մին ունենայ, այն ատեն* ο *գիրն անփոփոխ կը մնայ. Ինչպէս,* σκοτεινός — σκοτεινότερος — σκοτεινότατος. πονηρός — πονηρότερος — πονηρότατος. φαιδρός — φαιδρότερος — φαιδρότατος, ἔνδοξος — ἐνδοξότερος — ἐνδοξότατος. γαμψός — γαμψότερος — γαμψότατος. πεζός — πεζότερος — πεζότατος, *և այլք։*

2. Դրականն ους յանգելոց վերայ միայն τερος և τατος մասնիկները դրուելով՝ բաղդատական և գերադրական կը շինուի , ինչպէս , ἁπλοῦς – ἁπλού-στερος – ἁπλούτατος. ἀγχίνους – ἀγχινούστερος – ἀγχινού-στατος և այլք ։

3. Այն դրականներն որք ης կամ εις կը յանգին , վերջաւորութիւննին ες ի փոխելով՝ բաղդատական և գերադրական կ'ըլլան . ինչպէս . ἀληθής – ἀληθέστερος – ἀληθέστατος . εὐσεβής – εὐσεβέστερος – εὐσεβέστατος. χασίεις – χαιέστερος – χαριέστατος, և այլք.

4. Երբ դրականն ων կը յանգի , ω գիրն ο ի փոխելէ յետոյ , έστερος և έστατος վերջաւորութիւնքը կ'աւելցուին բաղդատականն և գերադրականը ձեւացնելու համար . ինչպէս , εὐδαίμων – εὐδαιμονέτσε-ρος – εὐδαιμονέστατος. ἐλεήμων – ἐλεημονέστερος – ἐλεη-μονέστατος , և այլք ։

5. Դրականներն ις յանգեալ ածականք՝ առանց փոփոխութիւն մը կրելու , τερος և τατος վերջաւորութիւնը կ'ընդունին . ինչպէս , ἄχαρις – ἀχαρίστε-ρος – ἀχαρίστατος , և այլք.

6. Դրականներն ας յանգելոց ς գիրը ν գրին փոխուելով . ինչպէս , μέλας – μελάντερος – μελάντα-τος , և այլք ։

Ծանօթ. Ա. — Որպէս յայտնի է , այս բաղդատական և գերադրական ածականաց իգական և

չէզոքներին ըստ կանոնի (§ 59, 1.) կը ձեւանան և իրենց պատկանած հոլովմանց վերայ կը հոլովուին։

Մի քանի դրական ածականաց բաղդատական և գերադրական աստիճաններն անկանոն կերպիւ ձեւանալնուն պատճառաւ՝ պատշաճ համարեցինք զանոնք ևս հոս նշանակել։

ἀγαθός (բարի) – βελτίων – βέλτιστος և ἄριστος.

ἄκρατος (անխառն) – ἀκρατέστερος – ἀκρατέστατος,

ἅρπαξ (յափշտակիչ) – ἁρπαγίστερος – ἁρπαγίστατος.

ἄσμενος (սիրալիր) – ἀσμενέστερος – ἀσμενέστατος.

ἐρρωμένος (զօրեղ) – ἐρρωμενέστερος – ἐρρωμενέστατος.

κακός (գէշ) – χειρότερος – χείριστος և κάκιστος.

καλός (աղէկ) – καλλίτερος – κάλλιστος.

μέγας (մեծ) – μεγαλήτερος կամ μείζων – μέγιστος.

μικρός (փոքր) – μικρότερος – μικρότατος և ἐλάσσων – ἐλάχιστος.

ὀλίγος (սակաւ) – ὀλιγώτερος – ὀλίγιστος.

πεπαιδευμένος (կրթեալ) – πεπαιδευμενέστερος – πεπαιδευμενέστατος.

πολύς (շատ) – πλείων – πλεῖστος.

φίλος (սիրելի) – φίλτερος – φίλτατος.

Գիտ. Բ. — Թէ նախադրութիւններէ և թէ մակբայներէ կրնայ կանոնաւորապէս բաղդատական

և գերադրականներ ձեւացուին. ինչպէս, ἄνω (վեր) ἀνώτερος – ἀνώτατος. κάτω (վար) – κατώτερος – κατώτατος – ἐγγύς (մօտ) – ἐγγύτερος – ἐγγύτατος. πρό (նախադր.) – πρότερος – πρότιστος կամ πρώτιστος. ὑπέρ (նախադր.) – ὑπέρτερος – ὑπέρτατος, ևայլք:

Ուսանողը՝ վարժութեան համար, պարտ է՝ ըստ վերոյիշեալ կանոնաց, հետեւեալ դրական ածականաց բաղդատական և գերադրական աստիճանները ձեւացնել:

ἀληθής	ճշմարիտ.	νόμιμος	օրինաւոր.
ἀηδής	գգուելի.	πονηρός	խորամանկ.
βραδύς	դանդաղ.	σώφρων	խոհեմ.
γηραλαῖος	ծերունի:	τέλειος	կատարեալ.
νέος	երիտասարդ.	τάλας	խեղճ.
δεκτός	ընդունելի	ταπεινός	խոնարհ.
ἐλεύθερος	ազատ.	τλήμων	ողորմելի.
εὔμορφος	բարեգեղ.	ὑψηλός	բարձր.
θερμός	ջերմ.	φρικτός	սարսափելի
ἱερός	նուիրական.	φρόνιμος	խելացի.
καλός	աղէկ.	χρήσιμος	պիտանի.
λευκός	սպիտակ.	χρηστός	բարի.
λαμπρός	պայծառ	ψηλαφητός.	շօշափելի.
μικρός	պզտիկ.	ψητός	եփեալ.
μέγας	մեծ.	ὠμός	վայրակ.
μέλας	սեւ.	ὠφέλιμος	օգտակար.
μακρός	երկայն.		

ԳԼՈՒԽ Զ.

ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՔ

Յօդ. 60. — *Թուական անունները հինգ տեսակներու կը բաժնուին, այսինքն՝* 1. Բացարձակ Ἀπόλυτα, 2. Դասական Τακτικά, 3. Ժամանակական Χρονικά, 4. Կրկնական *կամ* Բազմապատկական Διπλασιατικά *կամ* Πολλαπλασιαστικά, *և* 5. Համեմատական Ἀναλογικά.

Բացարձակները հինգէն մինչև հարիւր անհոլով լինելով՝ գոյականի մը պարզապէս թիւը կը յայտնեն։ Իսկ հարիւրէն աւելի եղող բացարձակները՝ իբր ածական սեռերնին փոխելով, ըստ կանոնի, իրենց յատկացեալ հոլովմանց յոգնակի թուովը կը հոլովուին. ինչպէս, ար. οἱ διακόσιοι – τῶν διακοσίων – τοῖς διακοσίοις – τοὺς διακοσίους. էգ. αἱ διακόσιαι – τῶν διακοσίων – ταῖς διακοσίαις – τὰς διακοσίας, *ևայլն.*

Դասականները մի քանի կամ բազում իրերու միջև եղած դասակարգութիւնը կը յայտնեն, որք մէկէն մինչև քսան τος *և քսանէն անդին* στος *կը վերջանան, բաց ի* δεύτερος, ἕβδομος *և* ὄγδοος *բառերէն. ինչպէս,* τρίτος, τέταρτος, πέμπτος, εἰκοστός, *ևայլն։ Սակայն երկու հարիւրէն աւելի թիւ նշա-*

նակող դասականներուն վերջին ι գիրը պակսեցը-նելով՝ στος վերջաւորութիւնն աւելցնել պէտք է: ինչպէս, διακόσιο-ι — διακοσιοστός, τριακόσιο-ι — τριακο-σιοστός, ևայլք:

Ժամանականներն օրուան կարգ կը յայտնեն և αῖος կը յանգին. ինչպէս, δευτεραῖος (երկօրեայ), τριταῖος (երրօրեայ), τεταρταῖος (քառօրեայ), ևայլք:

Բազմապատկականները կը ցուցնեն թէ բան մը քանի՛ անգամ կը պարունակուի ուրիշ բանի մը մէջ, և πλοῦς կը վերջանան, հայկականին կին մաս-նիկին պէս. ինչպէս, δεπλοῦς (կրկին); τριπλοῦς (ե-րեքկին), τετραπλοῦς (չորեքկին), ևայլք:

Համեմատականները կը յայտնեն իրի մը միւս իրէն քանիցս մեծագոյն լինելը, և πλάσιος կը վեր-ջանան, հայկականին պատիկ մասնիկին պէս. ինչպէս, διπλάσιος (երկպատիկ), τριπλάσιος (երրապատիկ), εἰ-κοσαπλάσιος (քսանապատիկ) ևայլք:

Գոյական թուականներն իգական լինելով՝ ի-րաց քանակութիւնը կը յայտնեն և άς սեռ. άδος վերջաւորութիւնը կ'ունենան, որպէս հայկական եակ մասնիկը. ինչպէս, μονάς (միակ), διάς (երկեակ), τριάς (երրեակ), τετράς (քառեակ), ἑβδομάς (եօթն-եակ), χιλιάς (հազարեակ), μυριάς (բիւրեակ), ևայլք:

Մակբայական թուականներն ալ կան որք կը

նշանակեն մի բանի քանի՛ անգամներ կրկնուիլը ժամանակամիջոցի մը մէջ և ἀκις կը վերջանան, որպէս հայկականին էցս մասնիկն. ինչպէս, τετράκις (քառիցս), ἑπτάκις (եօթնիցս), δεκάκις (տասնիցս) և այլք: Կը բացառուին ἅπαξ (միանգամ), δίς (երկիցս) և τρίς (երիցս) բառերը:

Նախնի Հելլէնացիք մասնաւոր թուանշաններ չ՚ունէին, այլ այբուբէնի տառերը կը գործածէին միաւոր, տասնաւոր և հարիւրաւոր թիւերը յայտնող տառերուն առջևուն և հազարաւոր նշանակող տառերուն ետև մէկ մէկ չեշտ դնելով՝ այսպէս.

α′ = 1.	ι′ = 10.	ρ′ = 100.	͵α = 1000.
β′ = 2.	κ′ = 20.	σ′ = 200.	͵β = 2000.
γ′ = 3.	λ′ = 30.	τ′ = 300.	͵γ = 3000.
δ′ = 4.	μ′ = 40.	υ′ = 400.	͵δ = 4000.
ε′ = 5.	ν′ = 50.	φ′ = 500.	͵ε = 5000.
ϛ′ = 6.	ξ′ = 60.	χ′ = 600.	͵ϛ = 6000.
ζ′ = 7.	ο′ = 70.	ψ′ = 700.	͵ζ = 7000.
η′ = 8.	π′ = 80.	ω′ = 800.	͵η = 8000.
θ′ = 9.	ϟ′ = 90.	ϡ′ = 900.	͵θ = 9000.

Ծանօթ. Ա. — Իննսուն և ինն հարիւր թիւերը ցուցնելու համար գործածուած նշանները տառ չեն, այլ մասնաւոր թուանշաններ են՝ առաջինը կօ՛ֆֆա և երկրորդը սամփի՛ անուամբ: Ստորիկեցիք բանի մը

Թիւը յայտնելու համար այսպէս ալ կը գրէին 𐅄 𐅆, այսինքն՝ հինգ անգամ տաս, հինգ անգամ հազար, եւայլն։

ԳԼՈՒԽ. Է.

ԲԱՑ

Ցող. 61. — Սահմանական եղանակին ներկան Θέμα Արմատ կ'ըսուի. վասն զի բոլոր միւս ժամանակներն անկէ կը ձեւանան։

Ու և է բային առաջին գիրն ʼΑρχικόν γράμμα Սկզբնատառ կ'ըսուի. ինչպէս, λύα, τρέχω, ἀκούω բայից սկզբնատառերն են λ, τ և α գրերը։

Բայից ω վերջաւորութենէ յառաջ գտնուող գիրը Χαρακτήρ Նկարագիր կ'ըսուի, ինչպէս λέγω, λύω, κρούω բայից նկարագիրներն են, γ, υ, և ου գրերը, սակայն κτω և πτω յանգեալներուն κ և π գրերը նկարագիր են։

ԱՃՈՒՄՆ ԲԱՑԻՑ

Ցող. 62. — Բայ մը բաղաձայնով սկսած ա-

տեն, անկատար և կատարեալ ժամանակներուն մէջ՝ ε գիր մը կ'աւելցընէ իրէն սկզբնատառէն առաջ, որ կ'ըսուի Συλλαβική αὔξησις, Հեգական աճում, ինչպէս, λύω, անկ. ἔλυον, կատ. ἔλυσα, κρούω — ἔκρουον, ἔκρουσα, և այլք։

Գիտ. Ա. — Բային սկզբնատառն եթէ ρ գիրն ըլլայ, աճման հետ ρ գիրն ալ կը կրկնուի. ինչպէս, ῥίπτω — ἔῤῥιπτον, ἔῤῥιψα և այլք։

Ծանօթ. Ա. — Այս երկու βούλομαι (կամենամ) և δύναμαι (կարողանամ) բայերն, անկատար և կատարեալ ժամանակներուն մէջ՝ փոխանակ ըստ կանոնի ε առնելու, η գիրը կ'առնուն շատ անգամ, և ἠβουλόμην, ἠδυνάμην կ'ըլլան։

Երբ բայը ձայնաւորով սկսի, անոր անկատար և կատարեալ ժամանակներն ուղիղ չինելու համար պարտ է հետեւեալ կանոնները գիտնալ։

Բային սկզբնատառն երբ α կամ ε գիրերն են, անկատար և կատարեալին մէջ η գիր կը փոխուին. ինչպէս, ἀκούω — ἤκουον — ἤκουσα. ἐλπίζω — ἤλπιζον — ἤλπισα, և այլք։

Ծանօթ. Բ. — Այս կանոնին չեն հետեւիր ἔχω (ունիմ), ἑλκύω և ἕλκω (քաշեմ), ἕρπω (սողամ), ἐθίζω (վարժեցնեմ), ἕπομαι (հետեւիմ), և ἐργάζομαι (աշխատիմ) բառերն, որք փոխանակ իրենց ε

սկզբնատառն η *գրի փոխելու*, ει *երկբարբառի կը փոխեն. այսինքն* εἶχον, εἵλκυον — εἵλκυσα. εἱπόμην, εἰργαζόμην — εἰργάσθην *կըլլան*։ *Նմանապէս կը բացառուին մի քանի* εο *գրերով սկսող բայեր*, *որոց* ε *սկզբնատառն անփոփոխ մնալով՝ երկրորդ* ο *գիրն* ω *ի կը փոխուի. ինչպէս*, ἑορτάζω — ἑώρταζον — ἑώρτασα, *ևայլք*։

2. *Բային* ο *սկզբնատառն անկատար և կատարեալին մէջ* ω *գրի կը փոխուի. ինչպէս*, ὀνομάζω — ὠνόμαζον — ὠνόμασα, ὁμοιάζω — ὡμοίαζον — ὡμοίασα, *ևայլք*։

3. *Երբ բայն* αι, αυ, ευ *և* οι *երկբարբառներուն մէկովը կ'ըսկսի*, *յայնժամ* αι — ῃ, αυ — ηυ, ευ — ηυ *և* οι — ῳ *ի կը փոխուին անկատար և կատարեալներուն մէջ. ինչպէս*,

Ներկ. αἰσθάνομαι, անկ. ᾐσθανόμην, կատ. ᾐσθάνθην. Ներկ. αὐθαδιάζω, անկ. ηὐθαδίαζον, կատ. ηὐθαδίασα. Ներկ. εὔχομαι, անկ. ηὐχόμην, կատ. ηὐχήθην. Ներկ. οἰκίζω, անկ. ᾤκιζον, կատ. ᾤκισα։ *Զայնաւորաց այս փոփոխմանն ալ* Χρονική αὔξησις ժամանակի աճում *կ'ըսուի*։

Ծանօթ. Գ. — ευ *երկբարբառով սկսեալ բայերն՝ իրենց խոնարհման ատեն*, *շատ անգամ* ευ *սկզբնատառն անփոփոխ ալ կը պահեն. ինչպէս*, εὔχομαι (*մաղթեմ*), *անկատար* ηὐχόμην *և կատար-*

ձայն ηὐχήθην *ըսուելու տեղ*, εὐχόμην εὐχήθην *ալ կ'ըսուի*։

Վերոյիշեալ ձայնաւոր կամ երկբարբառ սկզբնատառերէ զատ, երբ ո և է ուրիշ սկզբնատառով սկսի բայ մը՝ բնաւ փոփոխութիւն չը կրեր։

ԱՃՈՒՄՆ ԲԱՐԴԵԱԼ ԲԱՅԻՑ

Յօդ. 63. — *Նախադրութիւններով բարդեալ բայերուն աճումը, նախադրութենէ ետքն՝ այսինքն՝ դարձեալ արմատին վերայ կը դրուի. ինչպէս*, προ-λέγω — προ-έλεγον — προ-έλεξα, παρ-ακούω — παρ-ή-κουον — παρ-ήκουσα, *ևայլն*։

Ծանօթ. Ա. — *Այս* ἀνορθῶ (*ուղղել*), ἐνοχλῶ (*ձանձրացնել*) *և* ἀνέχομαι (*հանդուրժել*) *բայից աճումը կրկին կ'ըլլայ, այսինքն թէ նախադրութենէ յառաջ և թէ արմատին վերայ. զորօրինակ*, ἠνώχλουν — ἠνώχλησα, ἠνώρθουν — ἠνώρθωσα, ἠνειχόμην.

Գիտ. Ա. — *Բարդութեանց մէջ նախադրութեանց վերջին ձայնաւոր գիրը կը ջնջուի, բացի* πρό *և* περί *նախադրութիւններէ. ինչպէս*, προγράφω — προέγροφον — προέγραψα. περιγράφω — περιέγραφον — περιέγραψα, *ևայլն*։

Գիտ. Բ. — *Այն բայերն՝ որք* ευ *և* δυς *մա-*

նիկներով բարդեալ են և փոփոխելի, ձայնաւոր-ները (§ 62. Գիտ. Ա. Բ. Գ.) կսկսին, աճումն ի-րենց արմատին վերայ կ'ընդունին, իսկ եթէ բա-ղաձայնէ կամ անփոփոխ ձայնաւորներու միոյն սկսին, յայնժամ աճումը դրսէն կ'առնուն. ինչ-պէս, δυσαρεστῶ — δυσηρέστουν — δυσηρέστησα. εὐεργε-τῶ — εὐηργέτουν — εὐηργέτησα. δυσημερῶ — ἐδυσημέρουν — ἐδυσημέρησα. εὐδοκιμῶ — ηὐδοκίμουν — ηὐδοκίμησα, *եւայլք*։

Ծանօթ. Բ. — ευ *մասնիկը բառի մը վերայ դրուելով՝ դէ-չէնի կամ բարւոյն իմաստը կը յաւելու, իսկ* δυς *մասնիկն անոր հակառակ, Հայ լեզուին դժ մասնիկին նշանակութիւնը կ'ուտայ. զորօրինակ*, εὔκολος (*դիւրին*), δύσκολος (*դժուար*). εὔστροφος (*դիւ-րադարձ*), δύστροφος (*դժուարադարձ*)։ *Այս և ասոր նման ուրիշ մասնիկներուն վերայ պատշաճ տեղը պիտի խօսուի*.

Գիտ. Գ. — *Նմանապէս աճումը դրսէն կ'ըն-դունին այն բայերն, որք բարդ ածականներէ ձե-ւացեալ են*. μελοποιῶ (μελοποιός *ածականէն*) — ἐμε-λοποίουν — ἐμελοποίησα. δεινοπαθῶ (δεινοπαθής *ածա-կանէն*) — ἐδεινοπάθουν — ἐδειονπάθησα, *եւայլք*։

Դիտողութիւն — *Աշխարհիկ լեզուի մէջ բայե-րը միշտ առանց ժամանակի աճման* (§ 62. 3.) *կը գոր-*

ժամուլին. *օրինակ*, ἀκούω, *կոչ.* ἄκουσα. ἐλπίζω — ἔλπισα, *փոխանակ* ἤκουσα, ἤλπισα *ըսելու.* *իսկ հեգական աճում* (§ 62.), *առանց բացառութեան, բարդուած նախդիրէն առաջ կը դրուի.* *օրինակ*, παρακαλῶ — ἐπαρακάλεσα. προτρέπω — ἐπρότρεψα *կ'ըսուի, փոխանակ՝* παρεκάλεσα, προέτρεψα *ըսելու։* *Սակայն ուսանողն ուղիղ խօսելու և գրելու համար, պարտի վերոյիշեալ քերականական կանոնաց հետեւիլ։*

ԳԼՈՒԽ Ը.

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՑԻՑ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՁԵՒԱՑՈՒՄԸ

Ցոյ. 64. — *Ներկայ, անկատար և կատարեալ ժամանակներն* Ἁπλοῖ χρόνοι *Պարզ ժամանակներ կ'ըսուին, իսկ յարակատար, գերակատար և երկուսապատճենները* Σύνθετοι *Բարդ կ'ըսուին օժանդակ բայերով ձեւանալնուն համար։*

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ցոյ. 65. — *Ներգործական բայից սահմանա-*

կան ներկան միշտ ω գրի կը յանգի • ինչպէս , λύω , τρέχω , τιμῶ , πατῶ եւայլք , բացի մի քանի ներգործականներէն , որք կրաւորականի ձեւով կը խոնարհուին ։

Անկատարը՝ ներկայ ժամանակէն կը ձեւանայ աճումն առնելով՝ և բթանշան բայից մէջ ω յանգն ον ի , ոլորանշաններուն ալ երկրորդ լծորդութեանն ων ի և առաջինն ու երրորդինն ουν ի փոխելով • ինչպէս , λύω — ἔλυον , ἀγαπῶ(άω) — ἠγάπων • ποιῶ(έω) — ἐποίουν , δηλῶ(όω) — ἐδήλουν , եւայլք ։

Կատարեալն ալ ներկայ ժամանակէն կը ձեւանայ՝ նոյնպէս աճումն առնելով և վերջաւորութիւնը σα ի փոխելով • ինչպէս , λύω — ἔλυσα , ἀκούω — ἤκουσα ։ Բայց այս ժամանակն ուղիղ ձեւացնելու համար պարտ է հետեւեալ կանոնաց հետեւիլ ։

1. Ոլորանշան կամ ձայնաւոր և կամ δ, θ, τ, նկարագիր ունեցող բայից կատարեալ ժամանակը σα ի կը յանգի • ինչպէս , ποιῶ — ἐποίησα, λύω — ἔλυσα, σπεύδω — ἔσπευσα , πείθω — ἔπεισα , θέτω — ἔθεσα , և այլք ։

2. Երբ բթանշան բայի մը նկարագիրը β, π, φ կամ πτ ըլլայ , կատարեալ ժամանակը ψα կը յանգի • ինչպէս , τρίβω — ἔτριψα , τρέπω — ἔτρεψα , γράφω — ἔγραψα , τύπτω — ἔτυψα, եւայլք ։

3. Նմանապէս երբ բթանշան բայի մը նկա-

բաղերը γ, κ, χ կամ κτ ըլլայ, կատարեալը ξα ի կը յանգի. ինչպէս, ἀνοίγω – ἤνοιξα, πλέκω – ἔπλεξα, τρέχω – ἔτρεξα, τίκτω – ἔτεξα, ևայլն։

4. Իսկ երբ բային նկարագիրը ζ, σσ կամ ττ ըլլայ, կատարեալն երբեմն ξα ի և երբեմն σα ի կը յանգի, ինչպէս, κράζω – ἔκραξα, δανείζω – ἐδάνεισα, τάσσω կամ τάττω – ἔταξα, ևայլն։

Ծանօթ. Ա. — Այս տեսակ նկարագիր ունեցող բայից կատարեալն երբ σα կամ ξα յանգիլը կրնայ նոյն բայերուն գոյական անուանց վերջաւորութիւններէն որոշուիլ, զորօրինակ, πράττω (գործել), կատ. ἔπραξα, (գոյական πρᾶξις, գործ), ἐκφράζω (բացատրել), կատ. ἐξέφρασα (գոյական φράσις, բացատրութիւն) ևայլն։

Յօդ. 66. — Այն բայերն որք λ, μ, ν, ρ նկարագիր ունին, կատարեալին մէջ σα չեն յանգիր, այլ հետևեալ կանոնաց համեմատ կը ձևանան։

1. αίνω յանգեալ բայից կատարեալն ανα կը վերջանայ. ինչպէս, μαραίνω – ἐμάρανα, ξηραίνω – ἐξήρανα, ևայլն։

2. έλλω և έμω յանգելոց կատարեալն ειλα և ειμα կը վերջանայ. ինչպէս, στέλλω – ἔστειλα, νέμω – ἔνειμα, ևայլն։

Ծանօթ. Ա. — Յորոց αίνω յանգեալ բայից վեր-

ջընթերն αι երկբարբառով կը գրուի, միայն այս μένω (մնամ) բայը կը բացառուի, որուն կատարեալն ἔμεινα (մնացի) կըլլայ. Նախնի յունականին մէջ նոյնատեսակ մի քանի բառեր ևս կան, սակայն արդի լեզուին մէջ անգործածելի ըլլալնուն, զանոնք չը նշանակեցինք աստ:

3. ρω յանգեալ բայից կատարեալը ρα կը վերջանայ. ինչպէս, σπείρω — ἔσπειρα, φθείρω — ἔφθειρα, ևայլք:

Յօդ. 67. — Բթանշան բայից կատարեալը՝ ներկայ ժամանակին վերջընթերն անփոփոխ կը պահէ միշտ. ինչպէս, λύω — ἔλυσα, ἀκούω — ἤκουσα, βρέχω — ἔβρεξα, ևայլք:

2. Ոլորանշան առաջին և երկրորդ լծորդութեանց վերջընթերը միշտ η գիրն է, իսկ երրորդինն ω. ինչպէս, ποιῶ (έω) — ἐποίησα, τολμῶ (άω) ἐτόλμησα, χρυσῶ (όω) — ἐχρύσωσα[1]. բացի մի քանի բայերէն, որք անկանոններուն մէջ նշանակեալ են:

Գիտ. Ա. — Երկրորդ լծորդութեան, այսինքն

---

(1) Ուսանողը պարտ է գիտնալ թէ՝ արդի յունականին մէջ երրորդ ոլորանշան լծորդութիւնն իբր բթանշան կը գործածեն, անոր անամիջի όω վերջաւորութեան միջեւ ν գիր մ'աւելցնելով, որուն կատարեալը դարձեալ ωσα՝ կըլլայ. զորօրինակ, χρυσόω կ'ըլլայ χρυσόνω, կտր. ἐχρύσωσα, δηλόω — δηλόνω, կտր. ἐδήλωσα, եւայլք:

άω էն ῶ յանգեալ բայից վերջընթերն երբ ε, ι, λ, ρ գրերուն մէկն իբր նկարագիր ունենայ, յայնժամ կատարեալին վերջընթերն ασα կը մնայ. ինչպէս, ἐῶ (άω) (թողում), կտր. ἔασα. μειδιῶ (άω) (ժպտիմ), կտր. ἐμειδίασα. θλῶ (άω) (բեկանեմ), կտր. ἔθλασα. δρῶ (άω) (ազդեմ), կտր. ἔδρασα և ոչ ըստ վերոյիշեալ կանոնի ἔησα, ἐμειδίησα, ἔθλησα, ἔδρησα.

Ծանօթ. Ա. — *Ոլորանչան առաջին լծորդութեան վերայ*, այսինքն έω էն ῶ յանգեալ բայերէն այս ἀρχῶ (բաւեմ), ἐμῶ (փսխեմ), χαλῶ (կոչեմ), τελῶ (կատարեմ), φορῶ (հագնիմ), πονῶ (ցաւիմ), ἐμπορῶ (կարենամ), ἀφαιρῶ (պակսեցնեմ) բայերն իրենց կատարեալին վերջընթերն անփոփոխ կը պահեն. ինչպէս, ἤρχεσα, ἤμεσα, ἐκάλεσα, ἐτέλεσα, ἐφόρεσα, ἐπόνεσα, ἠμπόρεσα, ἀφήρεσα, և ոչ ἤρχησα, ἤμησα ըստ վերոյիշեալ կանոնի. (§ 67. 3)։ Նոյնպէս այս հինգ բթանչան ῥέω (հոսեմ), χαίω (այրեմ), πνέω (շնչեմ), χλαίω (լամ) և πλέω (նաւեմ) բայից կատարեալ ժամանակներն ἔρρευσα, ἔχαυσα, ἔπνευσα, ἔχλαυσα և ἔπλευσα կ՚ըլլան. (Տես և անկանոն բայից ցուցակը)։

Յարակատարն ἔχω բային ներկայ ժամանակովն և խոնարհեալ բային աներևոյթ կատարեալովը կը ձևանայ. ինչպէս, ἔχω λύσει(ν) (քակած եմ), ἔχω πατήσει(ν) (կոխած եմ), ևայլք։

Ծանօթ. Բ. — *Արդի յունականին մէջ սովորաբար յարակատարին տեղ կատարեալ ժամանակը կը գործածուի և փոխանակ* ἔχω λύσει *(քակած եմ) ըսելու,* ἔλυσα *(քակեցի) կ'ըսեն։*

Գերակատարն ἔχω *բային անկատարէն և խոնարհեալ բային աներեւոյթ կատարեալէն կը ձեւանայ. ինչպէս,* εἶχον λύσει(ν), εἶχον πατήσει(ν).

Ապառնի Անտեւը՝ θέλω *բային և աներեւոյթին կատարեալ ժամանակն առնելով կը ձեւանայ. ինչպէս,* θέλω λύσει(ν), θέλω πατήσει(ν).

Ապառնի Տեւողն ալ նոյնպէս θέλω *բային և խոնարհեալ բային աներեւոյթ ներկան առնելով կը ձեւանայ. ինչպէս,* θέλω λύει(ν), θέλω πατεῖ(ν).

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ցոզ. 68. — *Բթանշան բայից հրամայականներկան (կամ Ապառնի Տեւողն), սահմանական ներկային* ω *յանգն* ε *ի փոխելով կը ձեւանայ. ինչպէս,* λύω — λύε, ἀκούω — ἄκουε, τρέχω — τρέχε, *եայլք։*

Ոլորանշան բայից մէջ 1. *ծորդութեան* ω *յանգն* ει *ի.* 2. *ծորդութեան* α *ի և* 3. *ծորդութեան* ου *ի փոխելով և շեշտը վերջընթերին վրայ առնելով կը ձեւանայ. ինչպէս,* ποιῶ(έω) — ποίει, τρυπῶ(άω) — τρύπα, χρυσῶ(όω) — χρύσου.

Նմանապէս կատարեալ (կամ Ապառնի Անտեւն)

ժամանակը սահմանական կատարեալէն կը ձեւանայ անոր աճումը թողլով և α յանգն ον ի փոխելով. ինչպէս, ἔλυσα – λῦσον, ἐποίησα – ποίησον, ἐτρύπησα – τρύπησον, ἐχρύσωσα – χρύσωσον.

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Յօդ. 69. — *Ստորադասական ներկան* (*Ապառնի Տեւողն*) *սահմանական ներկային նման է, միայն* ἐὰν (*եթէ*) *մասնիկը կ'աւելցընէ և անոր սուղ ձայնաւորները երկարի կը փոխէ. ինչպէս*, ἐάν λύω – λύῃς – λύῃ, *յգ.* λύωμεν – λύῃτε – λύωσι, *ևայլք*։

Նմանապէս կատարեալն (*Ապառնի Անցեալն*) *սահմանական կատարեալէն կը ձեւանայ անոր աճումը թողլով և α վերջաւորութիւնն* ω *ի փոխելով. ինչպէս*, ἐὰν λύσω – λύσῃς – λύσῃ, *յգ.* λύσωμεν – λύσητε – λύσωσι, *ևայլք*։

ԱՆԵՐԵՒՈՅԹ ԵՂԱՆԱԿ

Յօդ. 70. — *Աներեւոյթ ներկան՝ սահմանական ներկային* ω *յանգն* ειν *ի փոխելով կը ձեւանայ. ինչպէս*, λύω – λύειν, τρέχω – τρέχειν։ *Սակայն ոլորանշան բայից* 1. *լծորդութեան* ῶ *յանգն* εῖν *ի*, 2. *լծորդութեան* ᾶν *ի և* 3. *լծորդութեան* οῦν *ի փոխելով. ինչպէս*, ποιῶ(έω) – ποιεῖν, τρυπῶ(άω) – ᾶν, χρυσῶ(όω) – χρυσοῦν.

Նմանապէս կատարեալը սահմանական կատարեալէն՝ կը ձեւանայ անոր աճումը թողլով և α *վերջաւորութիւնն* ειν *ի փոխելով. ինչպէս*, ἔλυσα – λύσειν, ἐποίησα – ποιήσειν, ἐτρύπησα – τρυπήσειν, ἐχρύσωσα – χρυσώσειν, *ևայլք* :

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Յօդ. 71. — *Ընդունելութիւն ներկան սահմանական ներկայէն կը ձեւանայ անոր* ω *յանգին* ν *գիր մ'աւելցնելով. ինչպէս*, λύω – λύων, ποιῶ – ποιῶν, τρυπῶ – τρυπῶν, χρυσῶ – χρυσῶν.

Նմանապէս կատարեալը սահմանական կատարեալէն կը ձեւանայ անոր աճումը թողլով և վերջաւորութեան վրայ ς *գիր մ'աւելցնելով. ինչպէս*, ἔλυσα – λύσας, ἐποίησα – ποιήσας. ἐτρύπησα – τρυπήσας, ἐχρύσωσα – χρυσώσας, *ևայլք. Նոյնպէս ապառնին՝ սահմանական կատարեալին աճումը թողլով և անոր* α *վերջաւորութիւնն* ων *ի փոխելով կը ձեւանայ. ինչպէս*, ἔλυσα – λύσων, ἐποίησα – ποιήσων, *ևայլք* :

Ծանօթ. Ա. — *Ընդունելութիւնք՝ որպէս ածական, սեռ, թիւ և հոլով ունին, որոց արական և չէզոքները հինգերորդ հոլովման* (§ 51. Գլու Գ.) *իսկ իգականներն երկրորդ հոլովման վրայ կը հոլովուին* :

Ուսանողք, վարժութեան համար, պարտին՝ ըստ վերոյիշեալ քերականական կանոնաց, ամբողջացնել գրել հետեւեալ մի քանի ներգործական բայերը։

Բրանեան Բայեր

τρέχω (*վազեմ*). μαραίνω (*թառամեցնեմ*).
τρίβω (*շփեմ*). ἐλπίζω (*յուսամ*).
μολύνω (*աղտեղեմ*). ἐξάγω (*արտադրեմ*).
ἀλέθω (*աղամ*). κρίνω (*դատեմ*).

Ոլորանեան Բայեր

Ա. Լծորդութիւն

πατῶ(έω) (*կոխեմ*). κρατῶ(έω) (*բռնեմ*).
φιλῶ(έω) (*սիրեմ*). μισῶ(έω) (*ատեմ*).

Բ. Լծորդութիւն

μειδιῶ(άω) (*ժպտիմ*). τιμῶ(άω) (*պատուեմ*)
ἀγαπῶ(άω) (*սիրեմ*). τολμῶ(άω) (*համարձակիմ*).

Գ. Լծորդութիւն

ῥιζῶ(όω) (*արմատացնեմ*). δηλῶ(όω) (*յայտնեմ*).
δουλῶ(όω) (*գերեմ*). πτερῶ(όω) (*թեւաւորեմ*)։

ԳԼՈՒԽ Թ.

ՁԵՒԱՑՈՒՄՆ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՑԻՑ

Յօդ. 72. — *Արդի յունականին մէջ բայից անկանոնութիւնը միայն կատարեալ ժամանակին վերայ կը տեսնուի, որով և՝ եթէ անկանոն բայի մը կատարեալը գիտցուի, միւս ժամանակները դիւրաւ կը ձևացուին, ըստ որում Տեւողները Ներկայէն և Անորոշները՝ Կատարեալէն կը կազմուին, ըստ կանոնի՝ վերջաւորութիւններին փոխելով։*

Աստ յարմար դատեցինք, ուսանողաց դիւրութեանը համար, անկանոն բայի մը ամբողջ խոնարհումը դնել։

Δίδω (*տամ*) : *կատր.* ἔδωσα (*տուի*).

Սահմանական

Ներկայ

Δίδω — εις — ει. *Յգ.* δίδομεν — ετε ουσι(ουν).

Անկատար

ἔδιδον—ες—ε. *Յգ.* ἐδίδομεν—ετε—ον.

Կատարեալ

ἔδωσα–ας–ε. Յգ. ἐδώσαμεν–ατε–αν.

Յարակատար

ἔχω δώσει(ν). Յգ. ἔχομεν δώσει(ν).

Գերակատար

εἶχον δώσει(ν). Յգ. εἴχομεν δώσει(ν).

Ապառնի Անտեւ

θέλω δώσει(ν). Յգ. θέλομεν δώσει(ν).

Ապառնի Տեւող

θέλω δίδει(ν). Յգ. θέλομεν δίδει(ν).

Հրամայական
Ներկայ (կամ Ապառնի Տեւող)

δίδε. Յգ. δίδετε *կամ* δότε.
ἄς δίδῃ. ἄς δίδωσι.

Կատարեալ
(կամ Ապառնի Անտեւ)

δῶσε. (*կամ* δός) Յգ. δώσατε.
ἄς δώσῃ. ἄς δώσωσι.

Ստորադասական
Ներկայ (կամ Ապառնի Տեւող)

ἐὰν δίδω–ῃς–ῃ. Յգ. δίδωμεν–δίδητε–δίδωσι.

Աներեւոյթ

Ներկայ. δίδειν. *Կատարեալ* δώσειν.

Ընդունելութիւն

Ներկայ

ὁ δίδων, — ἡ δίδουσα, — τό δίδον.

Կատարեալ

ὁ δώσας, — ἡ δώσασα, — τό δῶσαν.

Ապառնի

ὁ δώσων, — ἡ δώσουσα, — τό δῶσον.

Ուսանողաց վարժութեանը համար յարմար դատեցինք դնել աստ մի քանի անկանոն բայից օրինակներ, զորս պարտին խոնարհել վերոգրեալ ձեւին համաձայն։

Ներկայ	Ζευγνύω	(*Լծեմ*).	Կատար.	ἔζευξα.
»	Κλαίω	(*Լամ*).	»	ἔκλαυσα.
»	Ἁμαρτάνω	(*Մեղանչեմ*).	»	ἡμάρτησα.
»	Δάκνω	(*Խածանեմ*).	»	ἔδηξα.
»	Αὐξάνω	(*Աճիմ*).	»	ηὔξησα.

ԳԼՈՒԽ Ժ.

ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՑԻՑ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՁԵՒԱՑՈՒՄԸ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Յօդ. 73. — *Բթանչան ներգործական բայի մը կրաւորականի ձեւը տալու համար, պարտ է անոր* ω *յանգն* ομαι *վերջաւորութեան, իսկ պարանչաններուն առաջին և երրորդ լծորդութեանցը՝* οῦμαι *և երկրորդին* ῶμαι *ի փոխել. ինչպէս,* λύω – λύομαι, ποιῶ(έω) – ποιοῦμαι. χρυσῶ(όω) – χρυσοῦμαι, τρυπῶ(άω) – τρυπῶμαι, *եայլք*։

Կրաւորական Անկատարը՝ ներգործական Անկատարին ν *գիրը* μην *ի փոխելով կը ձեւանայ. ինչպէս,* ἔλυον – ἐλυόμην, ἐποίουν – ἐπιούμην, ἐχρύσουν – ἐχρυσούμην. ἐτρύπων – ἐτρυπώμην։

Կրաւորական կատարեալը՝ նմանապէս, ներգործական կատարեալին σα *յանգը* θην *վերջաւորութեան փոխելով կը ձեւանայ. ինչպէս,* ἔλυσα – ἐλύθην, ἐποίησα – ἐποιήθην, ἐτρύπησα – ἐτρυπήθην, ἐχρύσωσα – ἐχρυσώθην։ *Բայց ըստ որում կրաւորական կատարեալը* θην *վերջաւորութենէն յառաջ ու-*

թիչ բաղաձայն գրեր ալ կ'առնու, պարտ է հետեւեալ քերականական կանոնները գիտնալ:

1. Երբ ներգործական կատարեալը ξα յանգի, կրաւորականը χθην ի կը վերջանայ. ինչպէս, ἀνοίγω — ἤνοιξα, կր. կտր. ἠνοίχθην. πλέκω — ἔπλεξα, կր. կտր. ἐπλέχθην. βρέχω — ἔβρεξα, կր. կտր. ἐβρέχθην:

2. Երբ ներգործական կատարեալը ψα յանգի, կրաւորականը φθην'ի կը վերջանայ. ինչպէս, τρίβω — ἔτριψα, կր. կտր. ἐτρίφθην. τύπτω — ἔτυψα, կր. կտր. ἐτύφθην. γράφω — ἔγραψα, կր. կտր. ἐγράφθην.

3. Այն բայերուն՝ որոց նկարագիրը δ, θ, ζ գրերէն մին է, կրաւորական կատարեալ θην վերջաւորութենէ յառաջ σ գիրը կ'առնուն. ինչպէս, πείθω, կր. կտր. ἐπείσθην. σπεύδω, կր. կտր. ἐσπεύσθην, δανείζω, կր. կտր. ἐδανείσθην. բացի σώζω (փրկել) բայէն, որուն կրաւորական կատարեալն ἐσώθην կ'ըլլայ և ոչ ἐσώσθην. Նոյնպէս այս σ գիրը θην վերջաւորութենէ յառաջ կընդունին այն բայերն՝ որոց վերջընթերն երկբարբառներուն մին է. (բացի ευ երկբարբառէն). ինչպէս, ἀκούω, կր. կտր. ἠκούσθην. κλείω, կր. կտր. ἐκλείσθην. իսկ παιδεύω, կր. կտր. ἐπαιδεύθη կ'ըլլայ, և ոչ ἐπαιδεύσθην նկարագիրն ευ երկբարբառը լինելուն պատճառաւ,

4. Այն երկվանկ բայերն՝ որք ίνω և ύνω կը յանգին, կրաւորական կատարեալն θην վերջաւո-

թէթանէ յառաջ ν գիրը կը կորսնցանեն. Ինչպէս, χρίνω – ἔχρινα, կր. կտր. ἐχρίθην. πλύνω – ἔπλυνα, կր. կտր. ἐπλύθην. Սակայն նոյն վերջաւորութեամբ եռավանկ կամ բազմավանկ բայից որոց նաև αίνω յանգաւորեալներուն ν գիրը կը պահուի. Ինչպէս, μολύνω – ἐμόλυνα, կր. կտր. ἐμολύνθην. μακρύνω – ἐμάκρυνα, կր. կտր. ἐμακρύνθην. μαραίνω – ἐμάρανα, կր. կտր. ἐμαράνθην, εὐφραίνω – ηὔφρανα, կր. կտր. ηὐφράνθην.

Յօդ. 74. — Բայերէն ոմանք կրաւորականին կատարեալին մէջ θ գիրը կը թողուն և միայն բային նկարագիրը կ'առնուն. Ինչպէս, μαίνομαι, կտր. ἐμάνην. χαίρομαι, կտր. ἐχάρην, և ոչ ἐμάνθην, ἐχάρθην: Այս կատարեալը՝ Յոյն քերականները Δεύτερος Ἀόριστος Երկրորդ Կատարեալ կը կոչեն: Այս տեսակ կատարեալը միայն հետեւեալ վերջաւորութիւններն ունեցող բայից մէջ կը գտնուի. —

1. ἔλλω և είρω յանգեալ երկվանկ բայերը θ գիրը կը թողուն և իրենց ε և ει վերջընթերն ալ α ի կը փոխեն. Ինչպէս, Ներգ. στέλλω, կր. στέλλομαι, կտր. ἐστάλην. φθείρω, կր. φθείρομαι, կտր. ἐφθάρην. σπείρω, կր. σπείρομαι, կտր. ἐσπάρην, ևայլն:

Ծանօթ. Ա. — Արդի յունական լեզուաւ գրող նշանաւոր հեղինակներ ալ կան, որք θ գիրը չեն պակսեցներ, այլ ըստ կանոնի ἐσπάρθην, ἐφθάρθην կը գործածեն:

Նմանապէս αίνω յանգեալ բայերուն մի քանին ալ θ գիրը կը թողուն. ինչպէս, φαίνομαι, կտր. ἐφάνην. μαίνομαι, կտր. ἐμάνην, և այլք:

Ծանօթ. Բ. — Այս երկրորդ կոչեալ կատարեալին գործածութիւնը հին հեղինականին մէջ շատ է, բացի δω, θω և ζω վերջացող բայերէն. սակայն արդիին մէջ վերոյիշեալներէն զատ, երկրորդ կատարեալ ունեցող քիչ բայեր կան:

Յարակատարն ἔχω բայով և խոնարհեալ բային աներևոյթ կատարեալով կը ձևանայ. ինչպէս, ἔχω λυθῆν, ἔχω ποιηθῆν,

Գերակատարն ալ ἔχω բային անկատարով և խոնարհեալ բառին աներևոյթ կատարեալով կը ձևանայ. ինչպէս, εἶχον λυθῆν, εἶχον ποιηθῆν, և այլք:

Ապառնի անտեւը θέλω բայով և խոնարհեալ բառին աներևոյթ կատարեալովը կը ձևանայ. θέλω λυθῆν, θέλω ποιηθῆν, և այլք:

Նմանապէս ապառնի տեւողը θέλω բայով և խոնարհեալ բառին աներևոյթ ներկայով կը ձևանայ. ինչպէս, θέλω λύεσθαι, θέλω ποιῆσθαι, և այլք:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Յօդ. 75. — Բթանչան հրամայական ներկան

(կամ ապառնի տեւողն) սահմանական ներկայէն ομαι վերջաւորութիւնն ου ի փոխելով կը ձեւանայ. ինչպէս, λύομαι — λύου, πλέκομαι — πλέκου, նոյնպէս և ողորանչաններուն, միայն շեշտի տարբերութեամբ. ինչպէս, ποιοῦμαι — ποιοῦ, τρυπῶμαι — τρυπῶ, χρυσοῦμαι — χρυσοῦ, ևայլն.

Կատարեալն ալ (կամ ապառնի անցեալ), սահմանական կատարեալին անցումը թողլով և վերջին ν գիրն տեղ τι յանգն աւելցնելով կը ձեւանայ. ինչպէս, ἐλύθην — λύθητι, ἐποιήθην — ποιήθητι, ἐτρυπήθην — τρυπήθητι, ևայլն։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Յօդ. 76. — *Ստորադասական ներկան* (կամ ապառնի տեւողն), սահմանական ներկային կը նմանի ἐὰν մասնիկն առնելով՝ և անոր սուղ գրերն երկարի փոխելով (§ 69.). ինչպէս, ἐὰν λύωμαι — λύησαι — λύητε, յգ. λυώμεται — λύησθε — λύωνται, ևայլն։

Նմանապէս կատարեալն ալ (ապառնի անցեալ) սահմանական կատարեալին անցումը թողլով՝ և θην վերջաւորութիւնը θῶ ի փոխելով կը ձեւանայ. ինչպէս, ἐὰν λυθῶ — λυθῇς — λυθῇ, յգ. ἐὰν λυθῶμεν — λυθῆτε — λυθῶσι, ևայլն։

ԱՆԵՐԵՒՈՅԹ ԵՂԱՆԱԿ

Յօդ. 77. — *Բթանշան բայից աներեւոյթ ներկան (տեւողն), սահմանական ներկային* ομαι *վերջաւորութիւնն* εσθαι *ի փոխելով կը ձեւանայ. ինչպէս*, λύομαι – λύεσθαι, τρέπομαι – τρέπεσθαι. *իսկ ոլորանշաններուն Ա. լծորդութիւնն* εῖσθαι, *Բ. լծորդութիւնն* ᾶσθαι *և Գ. լծորդութիւնն* οῦσθαι *կը վերջանան. ինչպէս*, ποιοῦμαι – ποιεῖσθαι, τολμῶμαι – τολμᾶσθαι, χρυσοῦμαι – χρυσοῦσθαι.

Կատարեալ (կամ անտեն) ժամանակը, սահմանական կատարեալին աճումը թողլով և անոր վերջաւորութեան վրայ ոլորակ (῀) նշանը առնելով կը ձեւանայ. ինչպէս, ἐλύθην – λυθῆν, ἐτρυπήθην – τρυπηθῆν, ἐποιήθην – ποιηθῆν, *եւայլք*:

Ծանօթ. Ա. — *Արդի Յունարէնին մէջ աներեւոյթ ժամանակներն օժանդակ բայերով միայն երկու ապառնիները չինելու համար կը գործածուին, վասն զի անոնց տեղ* να *մասնիկով ստորադասական ժամանակները սովորաբար կը խոնարհին. ինչպէս*, θέλω νὰ λύσω (*կուզեմ քակել*), θέλεις νὰ τρυπήσῃς (*կուզես ծակել*), θέλει νὰ ποιήσῃ (*կուզէ գործել*), θέλομεν νὰ λύσωμεν (*կուզենք քակել*), *եւայլք*:

Ծանօթ. Ա. — *Աներեւոյթին ժամանակները*

չէզոք յօդով կը գործածուին առանց յանգերնին փոխելու. ինչպէս, τό λύειν (լ—ծել), τοῦ λύειν (լ—ծելոյն). τὸ λύεσθαι (լ—ծ—ուիլ), τοῦ λύεσθαι (լ—ծ—ուելոյն), ևայլն։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Ցող. 78. — Ընդունելութեան ներկան՝ սահմանական ներկային μαι յանգը μενος վերջաւորութեան փոխելով կ'ըլլայ. ինչպէս, λύομαι – λυόμενος, ποιοῦμαι – ποιούμενος, τρυπῶμαι – τρυπώμενος, ևայլն։

Կատարեալն ալ՝ սահմանական կատարեալին աճումը թողլով և անոր θην վերջաւորութիւնը θείς ի փոխելով կը ձևանայ. ինչպէս, ἐλύθην – λυθείς, ἐποιήθην – ποιηθείς, ևայլն։

Նմանապէս ապառնի ժամանակն ալ սահմանական կատարեալին աճումը թողլով՝ և անոր θην յանգը θησόμενος ի փոխելով կըլլայ. ինչպէս, ἐλύθην – λυθησόμενος, ἐποίηθην – ποιηθησόμενος, ևայլն։

Ցող. 79. — Որպէս տեսանք՝ արդի Յունականին մէջ ներգործական ընդունելութիւնները յարակատար ժամանակ չունին, այլ անոր տեղ կատարեալ ժամանակը կը գործածուի (§ 67. Ծան Բ.), մինչդեռ կրաւորական ընդունելութեանց մէջ շատ գործածելի է յարակատար ժամանակը; զոր ու-

գիր ձեւացնելու համար ուսանողը պարտ է հետեւեալ կանոնները գիտնալ. —

1. Ցարակատարը՝ սահմանական կատարեալին θην վերջաւորութիւնը μένος ի փոխելով և անոր աճումը պահելով կը ձեւանայ. ինչպէս, ἀγαπῶμαι, Կտր. ἠγαπήθην, Ցրկ. ἠγαπημένος. ἀπελπίζομαι, Կտր. ἀπηλπίσθην — ἀπηλπισμένος.

2. Բայ մը բաղաձայնով սկսած ատեն, յարակատարը սոյն բաղաձայնը շատ անգամ կը կրկնէ աճումէն յառաջ, որ կ'ըսուի Διπλασιασμός Կրկնութիւն. ինչպէս, λύομαι, Կտր. ἐλύθην, Ցրկ. λελυμένος. τιμῶμαι, Կտր. ἐτιμήθην, Ցրկ. τετιμημένος եւայլն։ Այս կրկնութիւնն եւս ուղիղ ընելու համար պարտ է հետեւեալ կանոնաց հետեւիլ, —

Ա. Երբ բայը θ, φ, χ բաղաձայններուն մէկովը սկսի, կը կրկնէ զայն, բայց θ գիրը τ ի, φ գիրը π ի և χ գիրը κ ի կը փոխէ. ինչպէս, θλίβομαι — τεθλιμένος, φράττομαι — πεφραγμένος, χρίομαι — κεχρισμένος, եւայլն։

Բ. Բային երկու բաղաձայններով սկսած ատեն եւս այս կրկնութիւնը կը լինի, սակայն երկրորդ բաղաձայնը պէտք է Հեղ. (ὑγρα) կոչեալ բաղաձայններուն, այսինքն λ, μ, ν, ρ գրերուն մին ըլլայ. ինչպէս, γλύφομαι — γεγλυμμένος, γράφομαι — γεγραμμένος, τρίβομαι — τετριμμένος, πνίγομαι — πεπνιγμένος,

եւայլք ։ Այս կանոնէն կը բացառուի γν *գրերով սկըսողներն որք միայն կատարեալին աճումը կը պահեն և* γ *գիրը չեն կրկներ. զորօրինակ,* γνωρίζομαι — ἐγνωρισμένος *և ոչ* γεγνωρισμένος. *Նոյնպէս չեն ընդունիր այս կրկնութիւնն այն բայերն, որք* ζ, ξ, ψ, *և* ρ *գրերուն մէկովը կսկսին. ինչպէս.* ζητοῦμαι — ἐζητημένος, ξενίζομαι — ἐξενισμένος, ῥάπτομαι — ἐρραμμένος, ψήνομαι — ἐψημένος, *եւայլք ։*

3. *Յարակատարը միշտ անփոփոխ կը պահէ կատարեալին վերջընթերն, ինչպէս,* ἠγαπήθην — ἠγαπημένος, ἐλύθην — λελυμένος, *եւայլք ։ Սակայն գիտնալու է նաև թէ.* —

Ա. Երբ կատարեալը σθην *յանգի, յարակատարը* σμένος *կը վերջանայ. ինչպէս,* ἐχρίσθην — χεχρισμένος, ἐπλάσθην - πεπλασμένος.

Բ. Երբ կատարեալը φθην *յանգի, յարակատարը* μμένος *կը վերջանայ. ինչպէս,* τρίβομαι — ἐτρίφθην — τετριμμένος, γράφομαι — ἐγράφθην — γεγραμμένος.

Գ. Եթէ կատարեալը χθην *յանգի, յարակատարը* γμένος *կը վերջանայ. ինչպէս,* βρέχομαι — ἐβρέχθην — βεβρεγμένος, ἀνοίγομαι — ἠνοίχθην — ἠνοιγμένος.

Ուսանողը՝ վարժութեան համար, պարտի հետեւեալ օրինակաց յարակատարները ձեւացնել ըստ վերոյիշեալ կանոնաց.

Ներկայ	Կատարեալ	
ὀργίζομαι	ὠργίσθην	բարկանամ.
ἀκούομαι	ἠκούσθην	լսուիմ.
ψεύδομαι	ἐψεύσθην	ստիմ.
θραύομαι	ἐθραύσθην	բեկանիմ.
πείθομαι	ἐπείσθην	համոզուիմ.
τάττομαι	ἐτάχθην	դասուիմ.

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

Յօդ. 80. — Անկանոն ʼΑνώμαλα կ'ըսուին այն բայերն, որք չեն հետեւիր՝ ըստ ամենայնի, վերոյիշեալ քերականական կանոնաց։ Այսպիսի բայից անկանոնութիւնն արդի Յունականին կատարեալներուն վրայ կը տեսնուի, և որպէս 72 յօդուածին մէջ ըսինք, եթէ անկանոն բայի մը սահմանական կատարեալը գիտցուի, միւս ժամանակները դիւրաւ կրնան ձեւացուիլ, տեւող ժամանակները՝ ներկայէն և անտեմները՝ կատարեալէն, ըստ կանոնի, ձեւացնելով։

Մեր այս վաստակը կատարելագոյն կացուցանելու համար, արդի Յունականին մէջ գտնուող անկանոն բայից ցուցակ մը պատրաստելով՝ պատշաճ համարեցինք յաւելուլ այս տեղ։

ՅՈՒՑԱԿ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԻՑ

(Այբ ու Բենի կարգով)

A

Ἀγαλλιῶ(άω) Ἀγάλλομαι	(բերկրիմ)	կտր.	ἠγαλλίασα.
Ἄγω	(բերեմ, ածեմ)	»	ἤγαγον.
Ἄδω	(երգեմ)	»	ἔψαλον.
Αἰδοῦμαι (έομαι)	(ամաչեմ)	»	ᾐδέσθην.
Αἰνῶ(έω)	(գովեմ)	»	ᾔνεσα.
Ἀκροάζομαι եւ Ἀκροῶμαι (άομαι)	(ունկն դնեմ)	»	ἠκροάσθην.
Ἁμαρτάνω	(մեղանչեմ)		ἥμαρτον եւ ἡμάρτησα.
Ἀναγινώσκω	(վերծանեմ)		ἀνέγνων եւ ἀνέγνωσα.
Ἀναιρῶ	(եղծանեմ)	»	ἀνῄρεσα.
Ἀναλίσκω	(սպառեմ)	»	ἀνήλωσα.
Ἀναμιμνήσκω	(յիշեցնեմ)	»	ἀνέμνησα.
Ἀναπετῶ	(պարզեմ)		ἀνεπέταξα եւ ἀνεπέτασα.
Ἀνέχομαι	(հանդուրժեմ)	կտր.	ἠνέχθην.
Ἀνήκω	(պատկանիմ)		(այս բային միայն առանձնական ներկայն գործածելի է)

Ἀνοίγομαι	(բացուիմ)	նոր. ἠνοίχθην եւ ἠνεώχθην.
Ἀνοίγω	(բանամ)	» ἤνοιξα եւ ἠνέωξα.
Ἀποδιδράσκω	(խուսափիմ)	նոր. ἀπέδρασα.
Ἀποθνήσκω	(մեռանիմ)	» ἀπέθανον.
Ἀπόλλυμαι	(կորնչիմ)	» ἀπωλέσθην.
Ἀπολλύω	(կորուսանեմ)	» ἀπώλεσα.
Ἀποκάμνω	(յոգնիմ)	» ἀπέκαμα.
Ἀπολαμβάνω	(վայելեմ)	» ἀπήλαυσα.
Ἀρέσκω	(հաճոյ ըլլամ)	» ἤρεσα.
Ἀρκοῦμαι (έομαι)	(բաւականանամ)	» ἠρκέσθην.
Ἀρκῶ(έω)	(բաւեմ)	» ἤσκεσα.
Ἀρύομαι	(քաղեմ)	» ἠρύσθην.
Αὐξάνω	(աճեցնեմ)	» ηὔξησα.
Ἀφικνοῦμαι(έομαι)	(ժամանեմ)	» ἀφίχθην.
Ἀφίπταμαι	(սաւառնիմ)	» ἀπέπτην.

B

Βαίνω	(քայլեմ)	նոր. ἔβην.
Βάλλομαι	(դրուիմ)	» ἐβλήθην.
Βάπτω	(ներկեմ)	» ἐβάφην.
Βαστῶ(άω)	(դիմանամ)	» ἐβάστασα.
Βαστάζω	(կրեմ)	» ἐβάσταξα.
Βλαστάνω	(բողբոջեմ)	» ἐβλάστησα.
Βλέπω	(տեսնեմ)	» εἶδον(1).
Βόσκω	(արածել)	» ἐβόσκησα.

(1) Բարդութեամբ գտնուած ատեն կանոնաւորապէս ալ կրնայ խոնարհիլ βλέπω բայն. ինչպէս, ἀποβλέπω, նոր. ἀπέβλέψα. ἀναβλέπω, նոր. ἀνέβλεψα, եւայլք։

Βούλομαι (կամիլ) Յոր. ἐβουλήθην եւ ἠβουλήθην.
Βρέχομαι (թրջիմ) Յոր. ἐβράχην.
Βυζάνω (ծծեմ) » ἐβύζαξα,

Γ

Γέμω (լնում) Յոր. ἐγέμησα.
Γηράσκω (ծերանամ) » ἐγήρασα.
Γείνομαι եւ Γίγνομαι (եղանեմ) » ἔγεινα.
Γιγνώσκω եւ Γινώσκω (ճանաչեմ) » ἔγνων.

Δ

Δαγκάνω եւ Δάκνω (խածանեմ) Յոր. ἐδάγκασα եւ ἔδηξα.
Δαγκάνομαι եւ Δάκνομαι (խածանիմ) Յոր. ἐδήχθην.
Δεικνύω եւ Δείχνω (ցուցանեմ) » ἔδειξα.
Δένω, տե՛ս Δέω
Δέρω եւ Δέρνω (ծեծեմ) » ἔδειρα.
Δέρομαι եւ Δέρνομαι (ծեծուիմ) Յոր. ἐδάρην եւ ἐδάρθην.
Δέω (կապեմ) » ἔδεσα.
Διδάσκω (ուսուցանեմ) » ἐδίδαξα.
Δύναμαι (կարողանամ) » ἐδυνήθην

Ε

Εἰξεύρω	(գիտենալ)	կտր. ἔμαθον.
Ἐλαύνω	(քշել)	» ἔλασα.
Ἑλκύω եւ Ἕλκω	(ձգել , քաշել)	» εἵλκυσα,
Ἐμῶ(έω)	(փսխել)	» ἔμεσα, ἤμεσα
Ἐργάζομαι	(գործել)	» εἰργάσθην.
Ἕρπω	(սողալ)	» εἵρπυσα.
Ἔρχομαι	(գալ)	» ἦλθον.
Ἐρῶμαι(άομαι)	(սիրահարիլ)	» ἠράσθην.
Εὑρίσκομαι	(գտնուիլ)	» εὑρέθην.
Εὑρίσκω	(գտնալ)	» εὗρον եւ ηὗρα
Ἔχω	(ունիլ)	» ἔσχον, ἔλαβον

Ζ

Ζευγνύω	(լծել)	կտր. ἔζευξα.
Ζῶ(άω)	(կեալ) կտր. ἔζησα, հր. կտր. ζῆθι, ζήτω	
Ζωννύομαι	(գօտեւորիլ)	կտր. ἐζώσθην.
Ζωννύω	(գօտեւորել)	» ἔζωσα.

Θ

Θάπτομαι	(թաղուիլ)	կտր. ἐτάφην.
Θέλω	(ուզել) անկ. ἤθελον, »	ἠθέλησα.
Θνήσκω	(մեռնիլ)	տե՛ս Ἀποθνήσκω.
Θύομαι	(զոհուիլ)	կտր. ἐτύθην
Ἱλάσκομαι	(քաւել)	» ἱλάσθην.
Ἵπταμαι	(թռչիլ)	տե՛ս Πετῶ

Ἰῶμαι(άομαι)	(բժշկուիմ)	կտր. ἰάθην.

Κ

Καθαίρω	(մաքրեմ)	կտր. ἐκάθηρα.
Κάθημαι	(նստիմ)	կտր. ἐκάθησα եւ ἐκαθέσθην.
Καίομαι	(այրիմ)	» ἐκάην եւ ἐκαύθην:
Καίω	(այրեմ)	կտր. ἔκαυσα.
Κάμνω	(տանեմ, ընեմ)	» ἔκαμον.
Κεῖμαι(1)	(կամ, մնամ)	
Κερνῶ(άω)	(խառնեմ, արբուցանեմ)	» ἐκέρασα.
Κήδομαι(1)	(խնայեմ)	
Κλαίω	(լամ)	» ἔκλαυσα.
Κλέπτομαι	(գողցուիմ)	» ἐκλάπην.
Κορεννύω	(յագեցուցանեմ)	» ἐκόρεσα.
Κρέμαμαι	(կախուիմ)	» ἐκραμάσθην.
Κρεμνῶ եւ Κρεμῶ	(կախեմ)	» ἐκρέμασα.

Λ

Λαγχάνω եւ Λαχαίνω	(դիպեմ)	կտր. ἔλαχον.
Λαμβάνομαι	(առնուիմ)	» ἐλήφθην.
Λαμβάνω	(առնում)	» ἔλαβον
Λανθάνω	(սխալիմ, մոռանամ)	» ἔλαθον

---

(1) Այս Κεῖμαι եւ Κήδομαι բայից սահմանական ներկայն, անկատարն եւ ընդունելութեան ներկայն միայն գործածելի են։

Λέγω[1]	(ասել, խօսիլ)	» εἶπον եւ εἶπα

M

Μαίνομαι	(մոլեգնիլ)	կտր. ἐμάνην.
Μανθάνω	(սորվիլ, ուսանիլ)	» ἔμαθον.
Μεθύσκω	(արբեցուցանել)	» ἐμέθυσα.
Μεθύω	(արբենալ)	» ἐμέθυσα
Μένω	(մնալ)	» ἔμεινα
Μιγνύω	(խառնել)	» ἔμιξα.

N

Νέμω	(բաշխել)	» ἔνειμα.

Ξ

Ξέομαι եւ Ξύομαι	(քերիլ)	կտր. ἐξύθην եւ ἐξέσθην.

O

Οἶδα [2]	(գիտել)	
Ὀλισθαίνω	(սահիլ)	կտր. ὠλίσθησα.

---

(1) Λέγω բարդ եղած ատեն կանոնաւորապէս նաեւ կը խոնարհի. ինչպէս, προλέγω (կանխասել), կտր. προέλεξα. ἐκλέγω (ընտրել), կտր. ἐξέλεξα, եւայլք։

(2) Այս բայն պակասաւոր է եւ միայն սահմանական ներկային եղակի դէմքերն կը գործածուին. οἶδα, οἶδας, οἶδε. (Κύριος οἶδε. Տէրն գիտէ), եւայլք։

’Ομνύω եւ ’Ομόνω	(երդնում)	»	ὤμωσα.
‘Ορῶ(άω)	(տեսանեմ)	»	εἶδα.
‘Ορῶμαι(άομαι)	(տեսնուիմ)	յոր.	ἑωράθην եւ ὤφθην.
’Οφείλω	(պարտիմ)	յոր.	ὤφελον.

Π

Πετῶ(άω)	(թռչիմ)	յոր.	ἐπέταξα.
Πηγνύω	(թանձրացուցանեմ)	»	ἔπηξα.
Πίνομαι	(ըմպիմ)	»	ἐπόθην.
Πίνω	(ըմպեմ)	»	ἔπιον.
Πίπτω	(անկանիմ)	»	ἔπεσα,
Πλέκομαι	(հիւսուիմ)	յոր.	ἐπλέχθην եւ ἐπλάκην.
Πλέω	(լողամ)	»	ἔπλευσα.

Ρ

Ρέω	(հոսեմ)	յոր.	ἔῤῥευσα.
‘Ρηγνύω	(կոտորեմ)	»	ἔῤῥηξα.

Σ

Σβεννύω եւ Σβένω	(շիջուցանեմ)	յոր.	ἔσβυσα եւ ἔσβεσα.
Σέβομαι	(պատկառիմ)	յոր.	ἐσεβέσθην.
Σήπομαι	(փտիմ)	յոր.	ἐσάπην եւ ἐσάπησα.
Σπένδω	(սրսկեմ)	յոր.	ἔσπεισα.
Στρέφομαι	(ոլորիմ, դառնամ)	»	ἐστράφην.
Συμβαίνω	(պատահիմ)	»	συνέβην.
Σώζομαι	(փրկուիմ)	»	ἐσώθην.

T

Τέμνομαι	(հատանիմ)	էոր.	ἐτμήθην
Τέμνω	(հատանեմ)	էոր.	ἔτεμα եւ ἔταμον.
Τήκομαι	(հալիմ)	էոր.	ἐτάκην.
Τήκομαι	(հալիմ)	»	ἐτάκην.
Τίκτομαι[1]	(ծնանիմ)	»	ἐτέχθην.
Τίκτω[1]	(ծնանեմ)	»	ἔτεξα.
Τιτρώσκομαι	(վիրաւորիմ)	»	ἐτρώθην.
Τιτρώσκω	(վիրաւորեմ)	»	ἔτρωσα.
Τρέπομαι	(դառնամ)	»	ἐτράπην.
Τρέφομαι	(սնանիմ)	»	ἐτράφην,
Τρέφω	(սնուցանեմ)	»	ἔθρεψα.
Τρέχω	(վազեմ)	էոր.	ἔτρεξα եւ ἔδραμον.
Τρώγω	(ուտեմ)	էոր.	ἔφαγον.

Υ

Ὑπισχνοῦμαι(έομαι) Ὑπόσχομαι	(խոստանամ)	էոր.	ὑπεσχέθην.

Φ

Φαίνομαι	(երեւիմ)	»	ἐφάνην.
Φείδομαι	(խնայեմ)	»	ἐφείσθην.
Φέρομαι	(վարուիմ, բերուիմ)	էոր.	ἐφέρθην եւ ἠνέχθην.

---

[1] Այս Τίκτομαι եւ τίκτω բառերն միայն կանանց կը վերաբերին. ինչպէս, ἐτέχθην ὑπὸ τῆς μητρός μου (մօրմէս ծնայ), μὲ ἔτεξεν ἡ μήτηρ μου (զիս մայրս ծնաւ):

Φέρω	(բերեմ, տանիմ)	կտր.	ἔφερα և ἤνεγκα.
Φεύγω	(փախչիմ)	»	ἔφυγον.
Φθάνω	(հասանեմ)	»	ἔφθασα.
Φθείρομαι	(ապականիմ)	»	ἐφθάρην.
Φύομαι	(բուսանիմ)	»	ἐφύην.

X

Χαίρω	(ուրախանամ)	»	ἐχάρην.
Χέω և Χύνω	(թափեմ)	կտր.	ἔχυσα.

Ψ

Ψεύδομαι	(ստեմ)	կտր.	ἐψεύσθην.
Ψήνω	(եփեմ)	»	ἔψησα.

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՄԱԿԲԱՅՔ

Յօդ. 81. *Ո և է ածական անուն մը մակբայի նշանակութիւն կ'առնու, երբ անոր յոգնակի սեռականին* ν *գիրը* ς *գրի փոխուի. ինչպէս,* ἀληθής, *յգ. սեռ.* ἀληθῶν, *մակբայ* ἀληθῶς (*ճշմարտապէս*). σώφρων – σωφρόνων – σωφρόνως (*խոհեմաբար*), καλός – καλῶν – καλῶς (*բարեպէս*), *և այլք*։

2. *Շատ անգամներ՝ թէ եզակի և թէ յոգնակի չէզոք ածականները մակբայօրէն կը գործածուին. ինչպէս,* καλόν *կամ* καλά (*բարեպէս*), ὀλίγον (*քիչ*), ταχύ (*շուտ*), μικρόν *կամ* μικρά (*պզտիկ*), *և այլք*։

3. *Նոյնպէս ածական կամ գոյական անուանց տրականը կամ առանձին և կամ* ἐν *նախդիրով. ինչպէս,* πάντι (*բոլորովին*), φύσει (*բնապէս*), ἐν γένει (*ընդհանրապէս*), *և այլք*։

4. *Տեղական մակբայներու կամ գոյական անուանց վերջաւորութեան վերայ* θεν *մասնիկն աւելցնելով՝ հայերէն ուստ, էն յանգերու նշանակու-*

թիւնը կ'ունենան. ինչպէս, ἄνω (վեր), ἄνωθεν (վերուստ). ἔξω (արտաքս, դուրս), ἔξωθεν (արտաքուստ). οὐρανός (երկինք). οὐρανόθεν (երկնուստ), μακρός (երկար, հեռու), μακρόθεν ('ի հեռուստ), և այլք։

5. Նոյնպէս ազգային անուանց վերջաւորութիւններուն վերայ ιστί մասնիկն կ'աւելցուի, և այն ատեն Հայկական երէն մասնիկին նշանակութիւնը կ'առնուն. ինչպէս, Ἕλλην (Հելլէն), Ἑλληνιστί (Հելլեներէն). Ἀρμένιος (Հայ), Ἀρμενιστί (Հայերէն). Γάλλος (Գաղղիացի), Γαλλιστί (Գաղղիերէն). Ἄγγλος (Անգղիացի), Ἀγγλιστί Անգղիերէն, և այլք։ Այս և ուրիշ նոյնօրինակ մասնիկներուն վերայ գործոյս ստուգաբանական մասին մէջ երկարօրէն պիտի խօսուի։

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 82. — *Համաձայնութիւն* Σύνταξις, *քերականութեան այն մասն է, որ խօսք մը կազմելու համար, մասանց բանին կանոնաւոր կերպիւ քովէ քով գալ հիւսուիլը կը սորվեցնէ։*

Յունական լեզուին համաձայնութիւնը մեծաւ մասամբ Հայկականին նման լինելով՝ ջանացինք միայն այն բաներու վերայ խօսիլ աստ, որք ուսանողաց համար յոյժ հարկաւոր են։

ԳԼՈՒԽ Ա.

ՅՕԴԻ ՎԵՐԱՅ

Յօդ. 83. — *Յօդն անուններէ յառաջ դրուելով՝ պարտ է սեռով, թուով և հոլովովը համաձայնիլ անոնց. ինչպէս*, ὁ πατήρ, τοῦ πατρός. ἡ μή-

τηρ, τῆς μητρός. τὸ ξύλον, τοῦ ξύλου, ևայլք։

2. Յօդն՝ որոշ նշանակութիւն ունեցող անուններէ յառաջ կը դրուի միշտ. ինչպէս, ὁ Πέτρος ἦλθε (Պետրոսն եկաւ), ὁ Ἰωάννης εἶναι καλὸς μαθητής (Յովհաննէսն աղէկ աշակերտ է), ևայլք։ Այս ὁ յօդը կը ցուցնէ թէ՝ այն Պետրոսին և Յովհաննէսին վրայ է խօսքն, որք մեզի արդէն ծանօթ են, ինչպէս Հայկական լեզուն՝ այսպիսի պարագայից մէջ ն կամ ը գիրը կ'աւելցնէ անուանց վերջաւորութեան վրայ։

3. Ածական մը գոյականէն նախադաս գըտնուած ատեն, յօդն ածականէն յառաջ կը դրուի. ինչպէս, ὁ καλὸς ἄνθρωπος (բարի մարդն), ὁ δίκαιος κριτής (արդար դատաւորն), ևայլք։

Ծանօթ. Ա. — Յօդն՝ երբեմն սաստկութեան կամ ստուգութեան պատճառաւ, կը կրկնուի, այսինքն թէ ածականին և թէ գոյականին վրայ կը դրուի. ինչպէս, ὁ καλός ὁ γείτων (այն յոյժ բարի դրացին,) ὁ σοφός ὁ Σωκράτης (այն ստուգիւ իմաստուն Սոկրատէսն), ևայլք։

4. Յօդ՝ շատ անգամներ յատուկ անուններէն յառաջ չդրուիր, այլ զանոնք որոշող յետադաս ածականներէն. ինչպէս, Νερσές ὁ Χαρίεις (Ներսէս Շնորհալին), Δημοσθένης ὁ ῥήτωρ (Դեմոսթենէս ճարտասանն)։

5. Յօդն երբեմն պարբերութեան մէջ իմաստէն հասկցուող պակաս անուան մը տեղը կը դրուի. ինչպէս, Ἰωάννης ὁ τοῦ Πέτρου (Յովհաննէս Պետրոսինն), οἱ ἐν τῇ πόλει (քաղաքիններն), փոխանակ ὁ υἱὸς τοῦ Πέτρου (Պետրոսին որդին), οἱ εὐσισκόμενοι ἐν τῇ πόλει (քաղաքին մէջ գտնուողներն) ըսելու։

Ծանօթ. Բ. — *Առածներուն մէջ երբեմն յօդը չդրուիր, նոյնպէս նաև բայն, որք իմաստէն կը հասկցուին. զորօրինակ,* ἀρχὴ σοφίας φόβος Κυρίου *փոխանակ ըսելու* ἡ ἀρχὴ τῆς σοφίας εἶναι ὁ φόβος τοῦ Κυρίου (*սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն*)։

6. Յօդերը շատ անգամներ իրարու ետեւէ դրուելով՝ յետադաս բառից հետ կը համաձայնին. ինչպէս, ὁ τῆς φιλίας νόμος, ἡ τοῦ Θεοῦ χάρις. փոխանակ ըսելու, ὁ νόμος τῆς φιλίας (օրէնքը բարեկամութեան), ἡ χάρις τοῦ Θεοῦ (շնորհն Աստուծոյ)։

7. Ընդունելութիւնք ևս, որպէս ածականք, իրենց յօդերովը կը համաձայնին. ինչպէս, ὁ ποιῶν τὰ ἀγαθά (զբարիս գործողն), ὁ λατρεύων τὸν Θεόν (զԱստուած պաշտողն), οἱ πράττοντες τὴν ἀρετὴν (զառաքինութիւն գործողներն), ևայլք։

8. Յօդերը շատ անգամներ բայերէն յառաջ կը դրուին և յարաբերական դերանուանց իմաստը կուտան. նոյնպէս ստացական դերանուանց տեղ կը գործածուին՝ անուններէն ետ դրուելով. ինչ-

պէս, τόν γνωρίζω (զայն կը ճանաչեմ), τὴν εἶδα (զայն տեսայ), τὸ ἔλαβον (զայն առի), τοὺς կամ τὰς կամ τὰ ἤκουσα (զայնս լսեցի), ὁ ἄνθρωπός του (իւր մարդն), ἡ γυνή του (իւր կինն), τὸ τέκνον του կամ της (իւր զաւակն), եայլք։

ԳԼՈՒԽ. Բ.

ԱԾԱԿԱՆԻ ՎԵՐԱՅ

Յօդ. 84. — *Ածական անուանք եւ՝ յօդերու նման, պարտ է իրենց գոյականին հետ սեռով, թուով եւ հոլովով համաձայնին. ինչպէս*, ὁ καλὸς ἄνθρωπος (*բարի մարդն*), ἡ καλὴ γυνή (*բարի կինն*), τὸ καλὸν παιδίον (*բարի տղայն*), *եայլք*։

2. *Ածականը թէ նախադաս եւ թէ յետադաս լինի, երբ շատ գոյականներու կը պատկանի, միշտ յոգնակի թուով կը դրուի. ինչպէս*, οἱ καλοί γέροντες (*բարի ծերունիները*), ὁ Γεώργιος καὶ Νικόλαος εἶναι πιστοὶ φίλοι (*Գէորգն ու Նիկողայոսը հաւատարիմ բարեկամներ են*)։

3. *Երբ ածական մը սեռով իրարմէ տարբեր գոյականներու պատկանի, յայնժամ նախապատիւ*

սեռով յոգնակի կը դրուի, վասն զի արականն իգականէ և իգականը չէզոքէ նախապատիւ կը համարուի. ինչպէս, ὁ Ἰωάννης καὶ ἡ Μαρία εἶναι καλοί, ἡ μήτηρ καὶ τὸ τέκνον εἶναι ἀγαθαί. Սակայն երբ զանազան սեռ ունեցող գոյականներն անշունչ իրեր կը նշանակեն, յայնժամ ածականը յոգնակի չէզոք կը գործածուի. ինչպէս, ὁ ἀήρ, ἡ φωτία καὶ τὸ ὕδωρ εἶναι καλὰ καὶ ἀναγκαῖα (օդը, կրակն եւ ջուրը աղէկ և պիտանի են).

4. Ընդունելութիւններն ևս նոյն կանոններուն կը հետեւին, οἱ ἄνθρωποι βλέποντες τὰς δυστυχίας ἀπελπίζουσι (մարդիկ՝ տեսնելով դժբաղդութիւնները կը յուսահատին), αἱ γυναῖκες ἔχουσαι ὑπομονὴν γενναίως φέρουσι τὰς δυστυχίας (կիներն ունենալով համբերութիւն, քաջութեամբ կը տանին դժբաղդութիւնները), ևայլք.

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԳՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՑ

Ցոց. 85. — Այն ածական կամ գոյական անուններն, որք որ՞ն կամ ինչ՞ն հարցմանց կը պատասխանեն, սեռական հոլովով կը դրուին. ինչպէս, ἡ εὐλογία τοῦ Θεοῦ (օրհնութիւնն Աստուծոյ), ὁ πατὴρ τοῦ Νικολάου (Նիկողայոսին հայր), οἶκος πλήρης ἀνθρώπων (տուն լի մարդկան), ποτήριον πλήρες οἴνου (գաւաթ լի գինւոյ), ևայլք.

Ծանօթ. Ա. — Աշխարհիկ լեզուին մէջ փոխանակ ποτήριον πλῆρες οἴνου ըսելու, սովորաբար՝ πλῆρες ἀπὸ οἶνον կամ μὲ οἶνον կ'ըսեն. ճիշդ Հայկականին աշխարհաբարին պէս, ἡ ἐκκλησία εἶναι πλήρης ἀπὸ կամ μὲ ἀνθρώπους (եկեղեցին մարդոցմէ կամ մարդոցմով լի է) եւայլն։

2. Այն ածական անուններն, որք ո՞ր կամ ի՞նչ բանի հարցմանց պատասխան կը պահանջեն, որական հոլով կ'առնուն. ինչպէս, ὁ Πέτρος εἶναι ὅμοιος τῷ Ἰωάννῃ (Պետրոսը Յովհաննէսին նման է)։

Ծանօթ. Բ. — Շատ անգամներ որականին տեղ սեռական հոլով ալ կը դրուի խօսակցութեան մէջ. ինչպէս, ὁ Πέτρος εἶναι ὅμοιος τοῦ Ἰωάννου.

3. Այն ածականներն որք ի՞նչ հարցման պատասխան կը պահանջեն, հայցական կ'առնուն. ինչպէս, ὁ ἀδελφός μου εἶναι μικρὸς τὴν ἡλικίαν (եղբայրս հասակով պզտիկ է), ὁ Ἄραψ εἶναι μαῦρος τὸ χρῶμα (Արաբացին գունով սեւ է), եւայլն. բայց շատ անգամներ ալ εἰς կամ κατά նախդիրներով հայցական կը գործածուի. ինչպէս, ὁ ἀδελφός μου εἶναι μικρὸς εἰς կամ κατὰ τὴν ἡλικίαν, ὁ Ἄραψ εἶναι μαῦρος εἰς կամ κατὰ τὸ χρῶμα.

Բաղդատական և գերադրական ածականները սեռական հոլով կ'առնուն. ինչպէս, ὁ λίθος εἶναι σκληρότερος τοῦ ξύλου (քարը կարծրագոյն է փայ-

տէ), ὁ Σωκράτης ἦτο σοφώτατος πάντων τῶν φιλοσόφων (*Սոկրատէսն էր գերիմաստ ամենայն իմաստնոց*), *եւայլք*։

Ծանօթ. Գ. — *Շատ անգամներ փոխանակ սեռականի, Հայերէն աշխարհաբառին պէս, խօսակցութեան մէջ,* ἀπό *նախդիրով հայցական կը գործածեն. ինչպէս,* ὁ λίθος εἶναι σκληρότερος ἀπὸ τὸ ξύλον, ὁ Σωκράτης ἦτο σοφώτατος ἀπὸ πάντας τοὺς φιλοσόφους.

ԳԼՈՒԽ Գ.

ԲԱՅԻ ՎԵՐԱՅ

Յօդ. 86. — *Անձը կամ իրն, որ բային իբր ներգործողը կ'իմացուի,* Ὑποκείμενον *Անուն Բայէ կ'ըսուի։ Բային՝ Անուն բային հետ պէտք է դէմքով և թուով համաձայնի. ինչպէս,* ἐγὼ γράφω (*ես կը գրեմ*), σὺ τρέχεις (*դու կը վազես*), ὁ παῖς τιμωρεῖται (*տղայն կը պատժուի*), *եւայլք*։

Ըստ որում առաջին դէմքն [երկրորդէն, և երկրորդն՝ երրորդէն նախապատիւ կը համարուին

վասնորոյ երբ բայը զանազան անձերու վերաբերի, այն ատեն նախապատիւ դէմքով յոգնակի կը դրուի. ինչպէս, ἐγὼ καὶ σὺ παίζομεν (*ես և դու կը խաղանք*), σὺ καὶ ὁ παῖς τρέχετε (*դու և տղայն կը վազէք*), ὁ Γεώργιος καὶ ὁ Ἰωάννης ἔρχονται (*Գէորգն և Յովհաննէսը կ'ուգան*), *և այլք*.

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԲԱՅԻՑ

Յօդ. 87. — *Ներգործական բայերն, որք զ՞ն կամ զի՞ն հարցումները կը յարուցանեն, միշտ հայցական հոլով խնդիր կ'առնուն. ինչպէս*, ἀγαπῶ τὸν Θεόν (*սիրեմ զԱստուած*), καλλιεργῶ τὴν γῆν (*մշակեմ զերկիրն*), κόπτω τὸν ἄρτον (*կտրեմ զհացն*), *և այլք*.

2. *Կրաւորական բայերն որք ումէ՞ կամ ինչէ՞ հարցումները կը յարուցանեն, սովորաբար* ὑπὸ *նախադրութեամբ սեռական հոլով խնդիր կ'առնուն. ինչպէս*, ἀγαπῶμαι ὑπὸ τοῦ Θεοῦ (*սիրուիմ Աստուծմէ*), ἡ γῆ καλλιεργεῖται ὑπὸ τοῦ γεωργοῦ (*երկիրը կը մշակուի երկրագործէն*), *և այլք*:

Ծանօթ. Ա. — *Խօսակցութեան մէջ շատ անգամներ, և երբեմն գրութեանց մէջ*, ὑπὸ *նախդիրին տեղ* ἀπὸ *նախդիրը հայցականով կը գործածեն. ինչպէս*, ἀγαπῶμαι ἀπὸ τὸν Θεόν, ἡ γῆ καλλιεργεῖται ἀπὸ τὸν γεωργόν, *բայց այս գործածութիւնը քերականական կանոնաց հակառակ է*.

3. Այն բայերն որք որո՞յ կամ ինչի՞ հարցումները կը յարուցանեն, տրական հոլով խնդիր կ'առնուն. ինչպէս, πείθομαι τοῖς νόμοις (հնազանդիմ օրինաց), δίδω σοὶ ἄρτον (կուտամ քեզ հաց), և այլք։

Ծանօթ. Բ. — *Որպէս խօսակցութեան նոյնպէս և գրութեանց մէջ փոխանակ տրական հոլովի,* εἰς *նախդիրով հայցական կը գործածուի. ինչպէս,* πείθομαι εἰς τοὺς τόμους, δίδω εἰς σέ, *և այլք։*

4. Երբ որո՞յ կամ ինչի՞ կամ ո՞ւր, մի՞նչ հարցումները կրկնուին, այն ատեն ուրիշ հայցական հոլով մ'ալ կը դրուի. ինչպէս, διδάσκω τὸν παῖδα τὴν կամ εἰς τὴν γραμματικήν (կուսուցանեմ տղուն քերականութիւն, այսինքն զքերականութիւնն) և այլք։

5. Էական բայերը միշտ ուղղական հոլով խնդիր կ'առնուն. ինչպէս, ἐγώ εἶμαι δίκαιος (ես արդար եմ), σὺ εἶσαι καλός (դու բարի ես), ἐκεῖνος εἶναι ἄδικος (այն անիրաւ է), և այլք։ Սակայն շատ անգամներ՝ երբ պարբերութեան մը մէջ անուն մը պակասի, պակասեալն իմաստէն հասկցուելով՝ սեռական հոլով խնդիր կ'առնուն, որպէս և Հայերէնին մէջ. զորօրինակ, ὁ οἶκος οὗτος εἶναι τοῦ ἀδελφοῦ μου (այս տունն եղբօրս է), փոխանակ ըսելու՝ εἶναι κτῆμα τοῦ ἀδελφοῦ μου, այսինքն եղբօրս ստացուածքն է։

Գիտ. Ա. — Բայերը Յունարէնի մէջ, սովորաբար, խօսքի պարբերութեան մը մէջ առաջ կը դրուին և ոչ Հայերէն աշխարհաբառին պէս ետքը. զորօրինակ, ἔχω μίαν σφαῖραν (գունդ մ'ունիմ), τρέχω πρὸ τοῦ ἀδελφοῦ σου (եղբօրմէդ յառաջ կը վազեմ), ևայլք։

ԱՆԵՐԵՒՈՅԹԻ ՎԵՐԱՅ

Ցող. 88. — Որպէս (§ 77. Ա. և Բ. Ծան.) մէջ ըսինք, աներևոյթը՝ շատ անգամներ, թէ արդի և թէ նախնի Յունականին մէջ, իբր չէզոք անուն կը գործածուի առանց վերջաւորութիւնը փոխելու՝ միայն չէզոք յօդերն առնելով. ինչպէս, τὸ μανθάνειν εἶναι καλόν (սորվիլն աղէկ է), εἶναι ἐπαινετὴ ἡ ἐπιθυμία τοῦ μανθάνειν (սորվելու փափաքը գովելի է), ևայլք. Հոս ևս կրկնելով կըսենք թէ, արդի Յունարէնին մէջ աներևոյթ եղանակին տեղ, νὰ կամ ἵνα մասնիկներով՝ բայից ստորադասական եղանակը կը գործածուի. ինչպէս, θέλω νὰ σὲ ϐλέπω (քեզ տեսնել կ'ուզեմ), ἐπιθυμῶ νὰ ὑπάγω (երթալ կը փափաքիմ), θέλομεν ἵνα τρέξωμεν (վազել կ'ուզենք կամ կ'ուզենք որ վազենք), ևայլք։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

Ցող. 89. — Բայ մի՝ ինչ հոլով խնդիր պա-

հանջէ, անոր ընդունելութիւնն ալ նոյն հոլովը կը պահանջէ. ինչպէս, ὁ ἀγαπῶν τὸν Θεόν (զԱստուած սիրողն), ὁ ἀγαπώμενος ὑπὸ τοῦ Θεοῦ (Աստուծմէ սիրուողն), ὁ πειθόμενος τοῖς νόμοις (օրինաց հնազանդողն), ὁ δίδων τῷ ἀδελφῷ σου (եղբօրդ տուողն), ևայլք։

2. Բայեր՝ շատ անգամներ, համաձայնութեան կանոնաց համեմատ, այլևայլ հոլովներով ընդունելութիւն խնդիր ալ կ՚առնուն, ինչպէս, σὲ βλέπω κοιμώμενον (զքեզ քնացեալ կը տեսնեմ), σᾶς εἶδα περιπατοῦντας (զձեզ քայլող տեսայ), փոխանակ ըսելու, σὲ βλέπω ὅτι κοιμᾶσαι, σᾶς εἶδα ὅτι περιεπατεῖτε, այսինքն՝ (քեզ տեսայ որ կը քնաս ձեզ տեսայ որ կը քալէիք), ևայլք։

3. Երբեմն ընդունելութիւնն, անուան հետ միասին՝ սեռական հոլովով կը գործածուի. ինչպէս, πάντων τῶν φίλων σιωπώντων σὺ μόνον ὁμιλεῖς (բոլոր բարեկամաց լռելովը՝ դու միայն կը խօսիս), փոխանակ ըսելու, ἐνῷ πάντες οἱ φίλοι σιωπῶσι σὺ μόνον ὁμιλεῖς, այսինքն՝ (մինչդեռ բոլոր բարեկամները կը լռեն, դու միայն կը խօսիս)։ Ընդունելութեան այսպիսի գործածութիւնը Γενικὴ ἀπόλυτος Բացարձակ սեռական կ՚ըսուի Յոյն քերականութեան մէջ։

ԳԼՈՒԽ Դ.

ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅ

Ցոց. 90. — *Որպէս՝ գործոյս առաջին մասին մէջ տեսանք, Յոյն լեզուն տասնեւութը Նախադրութիւններ ունի, վեցը միավանկ* ἐν, εἰς, ἐκ, σὺν, πρὸς, πρό, *և տասն երկուքն երկվանկ,* ἀνά, κατά, διά, μετά, παρά, ἀντί, ἐπί, περί, ἀμφί, ἀπό, ὑπό *և* ὑπὲρ. *Այս տասն և ութ Նախադրութիւնքը Յունական քերականութեան և լեզուին յոյժ կարեւոր մասը կը կազմեն, վասն զի արմատ բառերուն վերայ դըրուելով՝ տասն և ութ անգամ անոնց իմաստը կը փոխեն, և հետեւեալ կանոններով կը համաձայնին։*

ՄԻԱՎԱՆԿ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Ցոց. 91. — ἐν *միշտ տրական հոլովով կը գործածուի. և Հայերէն է,* մէջ (ներգոյական դադարում) *զօրութիւնն ունի. ինչպէս,* ἐν τῇ οἰκίᾳ (*'ի տան, տունին մէջ*), ἐν τῇ πόλει (*'ի քաղաքի, քաղաքին մէջ*), *և այլք։*

Սոյն Նախադրութիւնը բարդութեամբ գըտնուած ատեն ալ միեւնոյն նշանակութիւնն ունի

(ներ)․ ինչպէս, ἐν-εργῶ (ներգործեմ), οἰκῶ (բնակիմ); ἐν-οικῶ (մէջը բնակիմ)․ ἀέριος (օդային), ἐν-αέριος (օդին մէջ կամ օդին մէջը գտնուող)։ Շատ անգամներ վերոյիշեալ նշանակութիւններէ զատ՝ սաստկութեան իմաստ եւ կը յաւելուն բարդեալ բառին վերայ․ ինչպէս, θερμός (ջերմ), ἔνθερμος (ջերմաջերմ)․ ἄστρον (աստղ), ἔναστρος (աստղալի), եւայլք։

Յօդ․ 92․ — εἰς նախադրութիւնը հայցական հոլովով կը դրուի եւ Հայերէն ի, — տրական կամ ներգոյական շարժում կը նշանակէ․ ինչպէս, ὑπάγω εἰς τὸν οἶκον (կ'երթամ 'ի տուն), δίδω εἰς σέ (տամ քեզի), τρέχω εἰς τοὺς δρόμους (ճանբաներու մէջ կը վազեմ), εἰς τὸν πατέρα μου εἶναι (հօրս քովն է), եւայլք։

Բարդութեամբ եւս նոյն նշանակութիւնը կ'ու-տայ բարդեալ բառից․ ինչպէս, ἔρχομαι (գամ), εἰσέρχομαι (ներս գամ, մտնեմ)․ ἄγω (ածեմ, բերեմ), εἰσάγω (ներածեմ), εἰσαγωγή (ներածութիւն), եւայլք։

Յօդ․ 93․ — ἐκ նախադրութիւնն՝ որ ձայնաւորէ յառաջ ἐξ ի կը փոխուի, միշտ սեռական հոլովով կը դրուի եւ բացառական կ'ընէ, սակայն պատ-ճառ-ի նշանակութեամբ․ ինչպէս, ἐκ τῆς αἰκίας

(տունէն դուրս), ἐκ τῆς πόλεως (քաղաքէն դուրս), ἐκ τῆς θαλάσσης (ծովէն դուրս), եւայլք։

Այս նախադրութիւնն ալ բարդուած բառին միեւնոյն նշանակութիւնը տալէ յետոյ՝ շատ անգամներ սաստկութեան նշանակութիւնն եւս կը յաւելու անոնց վրայ. ինչպէս, θέτω (դնեմ). ἐκθέτω (բացատրեմ). ἄγω (ածեմ), ἐξάγω (արտածեմ), ἐξαγωγή (արտածութիւն). μανθάνω (սորվիմ), ἐκμανθάνω (լաւապէս սորվիմ), եւայլք։

Ծանօթ. Ա. — Երբեմն այս ἐκ նախադրութիւնը կը կրճատի եւ միայն սեռականը կը դրուի. ինչպէս. τινὲς τῶν ἀνθρώπων (մարդոց ոմանք), τινὲς τῶν φίλων (բարեկամաց ոմանք), փոխանակ՝ τινὲς ἐκ τῶν ἀνθρώπων (մարդոցմէ ոմանք), τινὲς ἐκ τῶν φίλων (բարեկամներէն ոմանք) ըսելու։

Յօդ. 94. — Σύν նախադրութիւնն ալ՝ ἐκ ի պէս տրական հոլովով կը գործածուի, եւ է, ճիշդ Հայերէնին գործիականին նման. ինչպէս, σὺν Θεῷ (Աստուծմով), σὺν τοῖς ἀνθρώποις (մարդոցմով), σὺν τοῖς ἄλλαις (ուրիշներով մէկտեղ), եւայլք։

Ծանօթ. Ա. — Այս σύν նախադրութեան տեղ μέ կամ ὁμοῦ μέ մասնիկներով հայցական հոլով ալ կը գործածեն. օրինակ, μὲ τὸν Θεόν, μὲ τοὺς ἀνθρώπους, ὁμοῦ μὲ τοὺς ἄλλους, եւայլք։

Երբ բարդութեամբ դրուի, միենոյն նշանակութիւնն ունի, որպէս Հայկական կէց, քող, շող, մասնիկներն. զորօրինակ, ἀδελφός (*եղբայր*), συνάδελφος (*եղբայրակից*). θέτω (*դնեմ*), συνθέτω (*բաղադրեմ*), σύνθεσις (*բաղադրութիւն*). δεσμός (*կապ*), σύνδεσμος (*շաղկապ*), συνδέω (*շաղկապեմ*), *եւայլք*։

Ծանօթ. Ա. — *Թէև տառից փոփոխութեան վրայ երկարօրէն խօսիլն ստուգաբանական մասին թողուցած ենք, սակայն ուսանողաց դիւրութեան և հոս անհրաժեշտ պէտք լինելուն համար*, ἐν *և* σύν *նախադրութեանց՝ բարդութեան ատեն* ν *գրերուն փոփոխութեան վրայ հետեւեալ կանոնները նշանակել պատշաճ համարեցինք*։

Ἐν *և* σύν *նախադրութեանց* ν *գիրը՝ բարդեալ գտնուած առեններն երբ* γ, κ. χ, *և* ξ *գրերու քով պատահին*, γ *գրի կը փոխուի, երբ* β, π, φ, *և* ψ *գրերուն քով պատահին*, μ *գրին, իսկ երբ* λ *կամ* ρ *գրերուն քով լինին; յայնժամ* ν *գիրն* λ *ի կամ* ρ *ի կը փոխուի. ինչպէս*, συγ-γενής, συγ-κατοικῶ, συγ-χαίρω, ἐγ-ξέω, ἐμ-βαίνω, συμ-βουλή, συμ-πράττω, συμ-φρονῶ, ἔμ-φρων, συμ-ψηφίζω, συλ-λέγω, συρ-ράπτω, *եւայլք*։ *Կը բացառուի* ἐν *նախադրութեան* ν *գիրն որ երբ* ρ *գրով սկսող բառից հետ բարդուի, փոփոխութիւն մը չը կրեր*։

Ցոյց. 95. — Πρὸς *նախադրութիւնը հայցական հոլովով կը դրուի և Հայկական* առ *և* դէպ'ի *մասնիկներու նշանակութիւնը կ'ունենայ. ինչպէս*, πρὸς τὸν Θεὸν (*առ Աստուած*), πρὸς σέ (*առ քեզ*), πρὸς τὸν οὐρανόν (*դէպ 'ի երկինք*), *և այլք: Այս նախդիրը հարցմանց մէջ* պատճառ, համար *կը նշանակէ. ինչպէս*, πρὸς τί ὑπερηφανεύεσαι (*ինչու կամ ինչ բանին համար կը հպարտանաս*), πρός τί ἦλθες (*ինչ պատճառաւ եկար*), *և այլք:*

Ծանօթ. Ա. — *Նախնի Հելլենականին մէջ* πρὸς *նախդիրն ուրիշ հոլովներով ալ կը դրուի զանազան իմաստներով, սակայն արդի լեզուն՝ մի քանի ոճերու մէջ միայն սեռականով և տրականով կը գործածէ. որպէս*, πρὸς Θεοῦ (*Աստուծոյ համար*), πρὸς τούτοις (*ասոնց հետ միասին*), πρὸς τοῖς ἄλλοις (*ուրիշներով հանդերձ*), *և այլք:*

Ուրիշ բառերով բարդուած ատեն, այս πρὸς *նախադրութիւնը սոյն բառերու վերայ Հայկական* առ, առաջի, մօտ, քով *և միանգամայն* առաւելութեան *նշանակութիւնները կը յաւելու. ինչպէս*, πίπτω, (*անկանիմ*), προσπίπτω (*առջեւն իյնամ, երկրպագանեմ*). ἔρχομαι (*գամ*), προσέρχομαι (*դէպի մեկուն գամ, այսինքն դիմեմ*). κεῖμαι (*ըլլամ, գըտնուիմ*), πρόσκειμαι (*քովը գտնուիմ*). φέρω (*բերեմ*), προσφέρω (*առբերեմ, մատուցանեմ*). μαρ-

τυρῶ (*վկայեմ*), προσμαρτυρῶ (*լաւապէս վկայեմ*), *եւայլք* ։

Ցող. 96. — Πρὸ *նախադրութիւնը միշտ սեռական հոլովով կը գործածուի եւ կը նշանակէ* առաջ, կանխաւ, նախ. *ինչպէս*, πρὸ τοῦ πολέμου (*պատերազմէն առաջ*), πρὸ τοῦ οἴκου (*տանն առջև*), πρὸ τῶν ὀφθαλμῶν μου (*աչացս առջև*), *եւայլք* ։

Նոյն նշանակութիւնքն ունի բարդուած ատեն ալ. ինչպէս, τρέχω (*վազեմ*), προτρέχω (*առաջ վազեմ*). λέγω (*ասեմ*), προλέγω (*կանխասեմ*), προτάσσω (*նախադասեմ*), πρόλογος (*յառաջաբան*), πρόοδος (*յառաջադիմութիւն*), *եւայլք* ։

ԵՐԿՎԱՆԿ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Ցող. 97. — Ἀνά. *Այս նախադրութիւնը հայցականով կը գործածուի եւ կը նշանակէ* ժամանակի տեւողութիւն. *ինչպէս*, ἀνὰ πᾶσαν ἡμέραν (*ամէն օր շարունակ*), ἀνὰ πᾶν ἔτος (*ամէն տարի շարունակ*), ἀνὰ πᾶσαν Κυριακήν (*ամէն կիւրակէ շարունակ*), *եւայլք* ։

Դ *Թուական անուանց առջև դրուելով՝* բաժանման ձեւ *մը կը ցուցնէ. ինչպէս*, ἔρχονται ἀνά τρεῖς (*երեք երեք կ'ուգան*), εἰς ἕκαστον μαθητὴν ἔδωσα ἀνὰ ἕν βιβλίον (*իւրաքանչիւր աշակերտին մէյմէկ գիրք տուի*), *եւայլք* ։

Բարդութեամբ կը նշանակէ, 1. կրկնութեան. βαπτίζω (*մկրտեմ*), ἀναβαπτίζω (*կրկնամկրտեմ*). 2. վարէն վեր. βαίνω (*քայլեմ*), ἀναβαίνω (*վեր երթամ*). 3. վեր, վերայ. φέρω (*բերեմ*), ἀναφέρω (*վերաբերեմ*). συνιστῶ (*հաստատեմ*), ἀνασυνιστῶ (*վերահաստատեմ*). 4. սաստկութեան, βοῶ (*կոչեմ*), ἀναβοῶ (*սաստիկ կոչեմ*). τρέπω (*դարձնեմ*), ἀνατρέπω (*տակն 'ի վերայ կ'ընեմ*), *եւայլք*։

Յոդ. 98. — Κατά. *Այս նախադրութիւնը սեռական և հայցական հոլովներով կը գործածուի, և սեռականով կը նշանակէ՝* 1. դէմ, հակառակ. ὁμιλῶ κατὰ τοῦ ἀδελφοῦ σου (*եղբօրդ դէմ կը խօսիմ*), μὴ ὁμίλει κατ' ἐμοῦ (*մի՛ խօսիր ինծի դէմ*). 2. վերէն վար. βαίνω (*քայլեմ*), καταβαίνω (*վար կը քայլեմ, կ'իջնամ*), ὁδεύω κατὰ κρημνοῦ (*գահավիժէն վար կ'ընթանամ*), *եւայլք*։

Իսկ հայցականով կը նշանակէ՝ 1. ըստ, համաձայն. κατὰ τὴν γνώμην μου (*ըստ իմ կարծեաց*), κατὰ τοὺς λόγους σου (*խօսքերուդ համաձայն*). 2. ժամանակի տեւողութեան. κατὰ πᾶν σάββατον (*ամէն շաբաթ շարունակ*), κατὰ πᾶσαν ὥραν (*ամէն ժամ շարունակ*). 3. տեղ. κατὰ τὴν ἀγοράν (*շուկային կողմը*), κατά τὴν 'Ανατολήν (*դէպ 'ի Արեւելք, Արեւելից կողմն*)։

Ծանօթ. Ա. — *Շատ անգամներ պարբերու-*

թեան մը մէջ κατὰ *նախդիրը կը կրճատի և միայն անուան հայցականը կը մնայ*. *օրինակ*, ὁ Σωκράτης ἦτο μέγας τὴν σοφίαν *կըսեն*, *փոխանակ ըսելու* κατὰ τὴν σοφίαν (*Սոկրատէս մեծ էր իմաստութեամբ*, *կամ ըստ իմաստութեան*)։

Բարդութեամբ եղած ատեն ᴅᴇᴍ, *վերութեան և ստորոգութեան կը նշանակէ*. λαλῶ (*խօսիմ*), καταλαλῶ (*դէմ, հակառակ կը խօսիմ*), κατάφωτος (*լուսովլի*), κατάδηλος (*յոյժ յայտնի*), στρέφω (*դարձնեմ*), καταστρέφω (*կործանեմ*). πατῶ (*կոխեմ*), καταπατῶ (*կոխկրտեմ*)։

Յօդ. 99. — Διά. *Այս նախադրութիւնն ալ սեռական և հայցական հոլովներով կը դրուի, և սեռականով կը նշանակէ*՝ 1. *միջոց, մէջէ*. ἔρχομαι διὰ θαλάσσης (*ծովին միջոցաւ կուգամ*), διέρχομαι (*մէջէն կ'անցնիմ*). 2. *միշտ, յաւէտ*. δι' ὅλης τῆς ζωῆς μου θέλω εἶσθαι εὐγνώμων (*բոլոր կենացս մէջ երախտապարտ պիտի լինիմ*), διὰ παντός (*առ յաւէտ*)։

Իսկ հայցականին քով դրուած ատեն կը նշանակէ համար, պատճառ. διὰ σὲ ἦλθον (*քեզի համար եկայ*), διὰ πὸν ἀδελφόν μου σᾶς ἐζήτησα (*եղբօրս համար ձեզ փնտռեցի*) διὰ τὸν φίλον σου ἐτιμωρήθης (*բարեկամիդ պատճառաւ պատժուեցար*)։

Բարդութեամբ գտնուած ատեն կը նշանակէ՝ 1. *տեւողութեան*. μένω (*մնամ*), διαμένω (*նոյն վի-*

ճակին մէջը մնամ, յարատեւեմ)։ 2. մէջ մէջը (փոխ)․ μέτρον (*չափ*), διάμετρος (*տրամաչափ, տրամագիծ*)․ θέσις (*դիրք*), διάθεσις (*տրամադրութիւն*), λόγος (*խօսք, բան*), διάλογος (*տրամախօսութիւն, խօսակցութիւն*)․ 3. տարբերութիւն․ λύω (*քակեմ*), διαλύω (*լուծեմ*)․ πράττω (*գործեմ*), διαπράττω (*սաստկապէս գործեմ*)․ σαφηνίζω (*բացատրեմ*), διασαφηνίζω (*լաւապէս բացատրեմ*), *եւայլք*։

Յօդ. 100. — Μετὰ. *Այս նախադրութիւնն ալ սեռական և հայցական հոլովներով կը գործածուի և սեռականով եղած ատեն կը նշանակէ՝* ընդ, միասին, հետ․ ἦλθον πρὸς ὑμᾶς μετὰ τοῦ ἀδελφοῦ μου (*եկայ ձեզի եղբօրս հետ*), μετὰ τῆς μητρός μου (*մօրս հետ մէկտեղ*)։

Ծանօթ. Ա. — *Խօսակցութեան մէջ փոխանակ* μετὰ *նախդիրը գործածելու* μὲ *կամ* μαζὴ μὲ *և կամ* ὁμοῦ με *բառերը հայցականով կը գործածեն․ օրինակ,* ἦλθον μὲ τὸν ἀδελφόν μου, μαζὴ μὲ τὸν ἀδελφόν μου *կամ* ὁμοῦ μὲ τὸν ἀδελφόν μου *կ՚ըսեն*։

Իսկ հայցականով դրուած ատեն կը նշանակէ՝ յետոյ, ետքը․ μετὰ τὸν ἀδελφόν μου (*եղբօրմէս յետոյ*), μετὰ τὴν μητέρα μου ἦλθον (*մօրմէս ետքն եկայ*), μετὰ τρία ἔτη (*երեք տարիներէ յետոյ*), *եւայլք*։

Բարդութեամբ գտնուած ատեն կը նշանակէ՝ 1. մասնակցութիւն. ἔχω (*ունիմ*), μετέχω (*մասնակցիմ*). λαμβάνω (*առնում*), μεταλαμβάνω (*հաղորդիմ*). 2. փոփոխութիւն. θέτω (*դնեմ*), μεταθέτω (*փոխադրեմ*). βάλλω (*դնեմ*), μεταβάλλω (*փոփոխեմ*), μορφῶ (*կերպարանեմ*), μεταμορφῶ (*կերպարանափոխեմ*). 3. Ետեւ — ետոյ. մէջ տեղը. πύργος (*աշտարակ*), μεταπύργιον (*երկու աշտարակաց մէջ տեղը*). 4. կրկին, ետ. φέρω (*բերեմ*), μεταφέρω (*կրկին, վերստին բերեմ*). καλῶ (*կոչեմ*), μετακαλῶ (*ետ կոչեմ*), *եւայլք*։

Յօդ. 101. — Παρὰ. *Այս նախադրութիւնը սեռական, տրական և հայցական հոլովներով կը դրուի, և երբ սեռականով դրուի, կը նշանակէ՝* քովէն (*բացառական*). ἐστάλη παρὰ τοῦ Θεοῦ (*Աստուծոյ քովէն կամ Աստուծմէ ղրկուեցաւ*), ἔλαβεν ὁ πατήρ μου παρὰ τοῦ Σεργίου ἕν βιβλίον (*հայրս Սարգիսէն գիրք մ'առաւ*)։

Տրականով դրուած ատեն կը նշանակէ՝ մօտը, քովը (առ). παρὰ τῷ Θεῷ (*Աստուծոյ քով*), παρὰ τῷ πατρί μου (*հօրս քով*), παρ' ἡμῖν (*առ մեզ, մեր քովը*), *եւայլք*։

Իսկ հայցականով դրուած ատեն կը նշանակէ՝ 1. դէմ. παρὰ τὸν νόμον (*օրինաց դէմ*), παρὰ τὴν θέλησίν μου (*կամացս դէմ*), 2. քան, թէ. προτιμῶ

τὸν τίμιον θάνατον παρὰ τὴν ἄτιμον ζωήν (կը նախապատուեմ պատուաւոր մահը՝ քան թէ անպատիւ կեանքը)։

Ուրիշ բառերու հետ բարդուած ատեն կը նշանակէ՝ մօտ, քով. κεῖμαι (գտնուիմ), παράκειμαι (քովը գտնուիմ), κάθημαι (նստիմ), παρακάθημαι (քովը նստիմ). զանցառութիւն. βλέπω (տեսնեմ), παραβλέπω (զանց առնեմ), παρορώμενος (անտես առեալ), ևայլն։

Յօդ. 102. — Ἀντὶ նախադրութիւնը սեռական հոլովով միայն կը դրուի և կը նշանակէ՝ փոխանակ, տեղ. μὴ ἀπόδιδε κακὸν ἀντὶ κακοῦ (մի՛ հատուցաներ չար փոխանակ չարի), ἀντὶ ν'ἀγαπᾷς μισεῖς τὸ καλόν (փոխանակ սիրելոյ կ'ատես զբարին)։ ևայլն։

Բարդութեամբ եղած ատեն՝ վերոյիշեալ նշանակութենէ զատ, կը նշանակէ նաև ընդդէմ, հակառակ. ինչպէս, πράττω (գործեմ), ἀντιπράττω (դէմ, հակառակ գործեմ), λέγω (ասեմ), ἀντιλέγω (ընդդիմաբանեմ), ἀντιλογία (առարկութիւն, ընդդիմաբանութիւն), ևայլն։

Յօդ. 103. — Ἐπὶ նախադրութիւնը սեռական և երբեմն հայցական հոլովով կը գործածուի և կը նշանակէ՝ 1. վերայ. ինչպէս, ἐπὶ τῆς τραπέζης (սեղանին վերայ), ἐπὶ τῆς γῆς (երկրիս վերայ), ἐπὶ τὸ

μνῆμα (*գերեզմանին վերայ*)․ 2. *Ժամանակ*․ ἐπὶ τῆς βασιλείας τοῦ Μεγάλου Πέτρου (*Մեծն Պետրոսի թագաւորութեան ատեն*), ἐπὶ τῶν ἡμερῶν σας (*ձեր աւուրց մէջ*), *եւայլն*։

Ծանօթ․ Ա․ — *Այս նախդիրն երբեմն սրտական հոլովով ալ կը դրուի և այն ատեն Հայերէն գործիական հոլովին նշանակութիւնը կ'ունենայ*․ *զորօրինակ*, ἐπὶ τῇ ἐλπίδι (*յուսով*), ἐπὶ σκοπῷ (*նպատակաւ*), ἐπὶ μισθῷ (*վարձով*), ἐπὶ πᾶσι τούτοις (*այս ամէնով հանդերձ*), *եւայլն*։

Ծանօթ․ Բ․ — *Այս* ἐπὶ *նախդիրը շատ անգամներ հայցականով դրուած ատեն կը նշանակէ նաև ժամանակէ տեւողութիւն*․ *ինչպէս*, ἐπὶ δύω ἡμέρας ἐκοπίασα (*երկու օր շարունակ աշխատեցայ*), ἐπὶ ἔτη ὁλόκληρα ὑπέμεινα (*ամբողջ տարիներ համբերեցի*)։

Բարդութեամբ գտնուած ատեն կը նշանակէ նաև վրէ, մօտ, վերօրէն․ *ինչպէս*, ἐπίλογος (*վերջաբան*), ἐπίθετον (*մակդիր*), ἐπιφέρω (*մակաբերեմ*), ἐπιστρέφω (*վերադառնամ*), ἐπισκευάζω (*վերանորոգեմ*), *եւայլն*։

Յօդ․ 104․ — Περὶ *նախադրութիւնը սեռական և հայցական հոլովով կը գործածուի*, *և սեռականով գտնուած ատեն կը նշանակէ*՝ *յաղագս*, *վրան*, *համար*․ ὁμιλῶ περὶ τοῦ πατρός μου (*հօրս համար կը*

խօսիմ), ὁ διδάσκαλος ὡμίλησε σήμερον περὶ ἠθικῆς (*վարդապետն այսօր խօսեցաւ յաղագս բարոյականութեան*). *Իսկ հայցականով կը նշանակէ՝ պ՟ր, շ՟րջ. ինչպէս*· γράφω (*գրեմ*), περιγράφω (*պարագրեմ*), περιγραφή (*պարագրութիւն*), περὶ τὴν τράπεζαν (*սեղանին շուրջը*), περὶ τὴν πόλιν (*քաղաքին շուրջը*), *ևայլք*·

Յօդ. 105. — Ἀμφί *նախադրութիւնն արդի Յունականին մէջ միշտ բարդութեամբ կը գործածուի և* περὶ *նախադրութեան նշանակութիւններէն զատ, Հայկական երկ մասնիկին պէս կրկին կը նշանակէ. ինչպէս*, βίος (*կենցաղ*), ἀμφίβιος (*երկակենցաղ*. στόμα (*բերան*), ἀμφίστομος (*երկսայրի*), *ևայլք*·

Յօդ. 106. — Ἀπὸ *նախադրութիւնը սեռականով կը նշանակէ բացառական սակայն ’ի վեր մասնիկին իմաստովն. ինչպէս*, ἀπὸ τοῦ θανάτου τῆς μητρός μου (*մօրս մահուանէն ’ի վեր*), ἀπὸ τῆς ἡμέρας ἐκείνης (*այն օրէն ’ի վեր*), ἀπὸ δύω ἐτῶν (*երկու տարիներէ ’ի վեր*), *ևայլք*· *Իսկ հայցականով պարզապէս Հայկական բացառականին իմաստն ունի. ինչպէս*, ἀπὸ τὸν Θεόν (*Աստուծմէ*), ἀπὸ τὴν ἀδελφήν μου (*քրոջմէս*), *ևայլք*·

Բարդութեամբ հեռու, առ, փոխում կը նշա-

նակէ . ինչպէս, κέντρον (կեդրոն), ἀπόκεντρος (ապակեդրոն), βάλλω (դնել), ἀποβάλλω (մերժել), πέμπω (խրկել), ἀποπέμπω (ճանբել, վռնտել), և այլք։ Նաև ամբողջութեան կը նշանակէ . ինչպէս, δεικνύω (ցուցնել), ἀποδεικνύω (ապացուցանել), և այլք։

Յօդ. 107. — Ὑπὸ նախադրութիւնը սեռական և հայցական հոլովներով կը դրուի, և սեռականով բացասականը կը նշանակէ, սակայն միշտ կրաւորական բայերէ յետոյ . ինչպէս, ἀγαπῶμαι ὑπὸ τῶν γονέων μου (կը սիրուիմ ծնողներէս), ἐπέμφθησαν ὑπὸ τοῦ ἡμετέρου φίλου (խրկուեցան մերին բարեկամէն), և այլք։ Իսկ հայցականով տակը, ներքև . ինչպէս, ὑπὸ τὴν τράπεζαν (սեղանին տակ), ὑπὸ τὸν οὐρανόν (երկնից ներքև), և այլք։

Բաղդատութեամբ՝ Հայկական ԸՆԴ մասնիկին իմաստ ունի . ինչպէս, θέτω (դնել), ὑποθέτω (ենթադրել), ὑπόθεσις (ենթադրութիւն), և այլք։ Նաև սակաւութեան, նուազութեան իմաստ ալ ունի . ինչպէս, λευκός (ճերմակ), ὑπόλευκος (ճերմկեկ) . μέλας (սև), ὑπόμελας (սեւկեկ) . βρέχω (թրջել), ὑποβρέχω (քիչ թրջել), և այլք։

Յօդ. 108. — Ὑπέρ նախադրութիւնը սեռական և հայցական հոլովներով կը գործածուի, և

սեռականով կը նշանակէ վասն, 'ի նպաստ, պաշտպա-նութեան. *ինչպէս*, ὑπὲρ ἡμῶν (*վասն մեր*), ὑπέρ τῆς ἀδελφῆς μου ὁμιλῶ (*'ի պաշտպանութիւն քրոջս կը խօսիմ*), ὑπέρ τῶν πτωχῶν ἐργάζομαι (*'ի նպաստ աղքատաց կը գործեմ*), ὑπέρ πάντων (*վասն ամենեցուն*), *եւայլք*.

Իսկ հայցականով կը նշանակէ՝ վեր, վեր 'ի վե-րոյ, քան, քան զ... *ինչպէս*, τοῦτο εἶναι ὑπὲρ τὴν δύναμίν μου (*այս իմ զօրութենէս վեր է*), μή ὁμίλει ὑπὲρ τὴν ἀξίαν σου (*մի' խօսիր արժանիքէդ վեր*), *եւայլք*.

Բարդութեամբ եւս միեւնոյն նշանակութիւնքն ունին. ինչպէս, 6άλλω (*դնեմ*), ὑπερ6άλλω (*գեր 'ի վերոյ դնեմ*). ἔχω (*ունիմ*), ὑπερέχω (*գերազանցեմ*), ὑπέρτιμος (*գերապատիւ*), ὑπέργερος (*շատ ծերունի*), ὑπέρμετρος (*չափազանց*), ὑπέρτατος (*ամենագերագոյն*), *եւայլք*.

ԳԼՈՒԽ. Ե.

ՄԱԿԲԱՅԻՑ ՎՐԱՅ

Յօդ. 108. — *Մակբայներն, որպէս անունէն ալ կ՚երեւի, բայց որոշիչ նախդիրներն են. ինչպէս*, γράφω ταχέως (*կը գրեմ արագապէս, արագութեամբ*), καλῶς ἐπράξατε (*բարեպէս, լաւ գործեցիք*), *և այլք։ Նաև նոյն որոշիչ յատկութիւնն ունին երբ ածականէ մ՚առաջ գրուին. ինչպէս*, λίαν καλόν (*յոյժ բարի*), σφόδρα δριμύ (*սաստիկ կծու*), *և այլք։*

Տեղական, քանական և զատական մակբայները սեռական հոլովով կը դրուին. ինչպէս, ἔξω τῆς οἰκίας (*տունէն դուրս*), ἐντός τῆς ἐκκλησίας (*եկեղեցւոյն մէջ*), κάτω τοῦ οὐρανοῦ (*երկինքէն վար*), ἄνω τῆς θαλάσσης (*ծովէն վեր*). 2. ἅπαξ τοῦ ἔτους (*տարին անգամ մը*), πολλάκις τῆς ἡμέρας (*օրուան մէջ շատ անգամներ*), δίς τῆς ἑβδομάδος (*շաբաթն երկու անգամներ*). 3. ἄνευ ὑμῶν (*առանց ձեզի*), ἄνευ τοῦ ἀδελφοῦ μου (*առանց եղբօրս*), ἐκτός τῆς μητρός μου (*բացի մօրմէս*), *և այլք։*

Ծանօթ. Ա. — *Յունական լեզուին մէջ առանց ի նշանակութեամբ երկու բառ կան,* ἄνευ *և* χωρίς *առաջինը միայն անուանց հետ կը դրուի, իսկ երկրորդը բայից հետ ստորադասականով, զորինակ,* ἄνευ τοῦ πατρός μου (*առանց հօրս*), χωρίς νὰ θέλω (*առանց ուզելու*), χωρίς νὰ σὲ εἰδῶ (*առանց քեզ տեսնելու*), χωρὶς νὰ ἐντρέπησαι (*առանց ամաչելու*), *ևայլք*:

Ծանօթ. Բ. — *Աշխարհիկ լեզուին մէջ այս* χωρίς *բառն երբեմն անուանց սեռական և հայցականին հետ կը գործածեն. ինչպէս,* χωρίς τοῦ πατρός σου, χωρὶς ἐμέ, χωρὶς τὴν μητέρα σου, *ևայլք. սակայն այս տեսակ գործածութիւնը՝ քերականական կանոնաց հակառակ լինելով, գրականութեան մէջ երբէք ներելի չէ*:

ԳԼՈՒԽ Զ.

ՇԱՂԿԱՊԱՑ ՎԵՐԱՅ

Յօդ. 109. — *Շաղկապները՝ բառը բառի և խօսքը խօսքին հետ կապող մասնիկներն են: Առաջին մասին՝ շաղկապներուն գլխոյն մէջ նշա-*

նակեալներուն մի քանիին վերայ հոս ևս խօսիլ պատշաճ կը համարինք ։

Μὲν *շաղկապին տեղէն ընդհանրապէս* δὲ *մասնիկը կը յաջորդէ և Հայերէն եւ , բայց , իսկ բառերուն նշանակութիւնն ունի . ինչպէս* ἐγὼ μὲν κλαίω , σύ δέ γαλᾶς (*թէև ես կ'ուլամ, իսկ դու կը խնդաս*) ,ἐγὼ μὲν 'πάγω, σύ δὲ ἔρχεσαι (*թէև ես կ'երթամ, իսկ դու կ'ուգաս*) . *սակայն* δὲ *մասնիկին տեղ շատ անգամներ* ἀλλά , ὅμως (*այլ, սակայն*) *բառերը կը դրուին . ինչպէս* ἐγὼ μὲν κλαίω , ἀλλά *կամ* ὅμως σὺ γελᾶς , ἐγὼ μὲν ὑπάγω , ἀλλά *կամ* ὅμως σὺ ἔρχεσαι , *ևայլք ։*

Ընդհանրապէս այս ἐὰν , ἂν (*եթէ*) , ἵνα (νὰ) ὅπως (*որպէս , որպէս զի*) , μὴ (*մի՛ , ոչ*) , ὅταν (*երբ , երբոր*) *շաղկապներն ստորադասականով կը դրուին . ինչպէս .* ἐὰν *կամ* ἄν θέλῃς (*եթէ կ'ուզես*) , ἵνα ἔλθῃ (*որպէս զի գայ*) , ὅπως πράξῃ (*որպէս գործէ*) , ὅταν ὑπάγωσι (*երբ երթան*) , ὅπως θέλῃς οὕτω πρᾶξον (*որպէս կամիս , այնպէս գործէ*) ։

Ծանօթ. Ա. — *Ցուցարէնին մէջ երկու* ὅταν *և* ὅτε *բառեր կան , որք երբ , երբոր բառից նշանակութիւնն ունին . սակայն* ὅτανը *ապառնիի համար և* ὅτεն *անցելոյն համար կը գործածուի . ինչպէս ,* ὅταν ὁ πατήρ σου ἔλθῃ γράψον πρὸς ἐμέ (*երբ հայրդ գայ՝ գրէ ինծի*) , ὅταν ὁμιλῇς μὴ φώναζε (*երբ կը*

խօսիս, մի՛ կանչեր), ὅταν ἦσαι καλός, πάντες σὲ ἀγαπῶσι (*երբ բարի ես ամենայն ոք զքեզ կը սիրեն*). 2. ὅτε ἦλθες εἰς τὴν οἰκίαν μου, δέν ἤμην ἐκεῖ (*երբ տունս եկար, հոն չէի*), ὅτε ἔπραξας τὴν ἀρετήν ἐκείνην ὁ κόσμος σὲ ἐπήνεσε (*երբ այն առաքինութիւնը գործեցիր, աշխարհ զքեզ գովեց*), *ևայլն*:

ԳԼՈՒԽ Է.

ՁԱՅՆԱՐԿՈՒԹԵԱՆՑ ՎԵՐԱՅ

Յօդ. 110. — *Ձայնարկութիւնք* (Ἐπιφωνήματα) *կ՚ըսուին այն մասնիկներն, որոցմով մարդս կիրքն, այսինքն՝ բարկութիւնը, վախը կամ իղձը կը յայտնէ: Այս մասնիկները սովորաբար սեռական հոլովով կը գործածուին. ինչպէս*, ὢ τοῦ θαύματος! (*ո՜վ սքանչելեացս*), ὢ *կամ* ἆ τὸν ἀχρεῖον! (*ո՜հ անպիտանին*), οἴμοι τῆς δυστυχίας! (*վա՜յ դժբախտութեանս*), φεῦ τῆς ἀθλιότητος! (*ափսո՜ս թշուառութեանս*), εἴθε (*երանի՜, իցի՜ւ թէ*), *ևայլն*:

Ծանօթ. Ա. — *Այս* εἴθε *ըղձական մասնիկը միշտ* νὰ *մասնիկով ստորադասական եղանակաւ կը գործածուի. զորօրինակ*, εἴθε νὰ ἤμην ἐκεῖ (*երանի՜ թէ*

հօն ըլլայի), εἴθε νὰ βοηθήσῃ ὁ Θεός! (*Լցնու թէ Աստուած օգնէ*), εἴθε νὰ ἠξιούμην (*Երանի՜ արժանանայի*), *եւայլն*։ *Աշխարհիկ լեզուին մէջ* εἴθε*ին տեղ շատ անգամներ* ἄμποτε *բառը կը գործածեն*. *ինչպէս*, ἄμποτε νὰ ἔβλεπον τὴν μητέρα μου (*Երանի՜ թէ տեսնէի մայրս*), *եւայլն*։

Ծանօթ. Բ. — *Այս* μέχρι *և ձայնաւորէն առաջ* μέχρις, ἕως, ὡς ἄμα *մասնիկներն ալ հետեւեալ հոլովներով կը գործածուին*.

1. Μέχρι *կամ* μέχρις (*մինչև*) *սեռականով*. μέχρι τῆς ὥρας ἐκείνης (*մինչև այն ժամ*), μέχρις ἑσπέρας (*մինչև երեկոյ*), μέχρι τοῦδε (*մինչև ցարդ*), *եւայլն*։

2. ἕως *կամ* ὡς (*մինչև*), *հայցականով և բայերով կը գործածուի*. *ինչպէս*, ἕως *կամ* ὡς τὴν δευτέραν (*մինչև երկուշաբթի*), ἕως τὴν ἡμέραν ἐκείνην (*մինչև այն օրը*), ἕως τώρα (*մինչև հիմայ*), ἕως νὰ ἔλθω (*մինչև որ գամ*), *եւայլն*։

3, ἄμα *կը նշանակէ* (*ընդ*), [illegible], [illegible], [illegible]. *ինչպէս*, ἄμα ἦλθε (*գալուն պէս*), ἄμα ἔφαγε (*ուտելուն պէս*), *և տրականով*, ἄμα τῇ ἐλεύσει αὐτοῦ (*իր գալստեամբն*, *իր գալստեան անմիջապէս յետոյ*), ἄμα τῇ ἀναχωρήσει αὐτοῦ (*անոր մեկնմամբն*), *եւայլն*։

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ

Յօդ. 111. — *Ստուգաբանութիւն* Ἐτυμολογία *կ'ըսուի քերականութեան այն մասն՝ որ բառից մասունքն ստոյգ քննութեամբ կը զատէ ։ Բայց մենք աստ երկարօրէն քննութիւնները զանց առնելով՝ ուսանողաց համար ամենակարեւոր տեսնուած բաներու վերայ միայն պիտի խօսինք ։*

ԳԼՈՒԽ Ա.

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ԲԱՂԱՁԱՅՆԻՑ

Յօդ. 112. — *Թէեւ երկրորդ մասին մէջ բաղաձայն տառերուն բաժանման ցուցակ մը դրած ենք, սակայն աստ եւս զայն կրկնել պատշաճ կը համարինք ուսանողաց դիւրութեանը համար ։*

	Μέσα	Ψιλά	Δασέα	Διπλᾶ	Ἀμετάβολα
	Միջակք	Նուրբք	Թաւք	Կրկնակք	Անփոփոխք
Շրթնայինք	β,(ς),	π,(ς),	φ,(ς),	ζ,	λ,
Կոկորդայինք	γ,(ς),	κ,(ς),	χ,(ς),	ξ,	μ,
Ատամնայինք	δ,(ς),	θ,(ς),	τ,(ς),	ψ,	ν,

Յօդ. 113. — *Նուրբ բաղաձայններն երբեմն թաւի կը փոխուին երբ անոնց յաջորդ բառը թաւ* (ʽ) *նշան ընդունող ձայնաւորով սկսի. ինչպէս*, οὐχ ὁσίως, ἀφ᾽ ἡμῶν, μεθ᾽ ἡμῶν *և ոչ* οὐκ ὁσίως, ἀπ᾽ ἡμων, μετ᾽ ἡμῶν,

2. *Երբ* σ *գիրը* β, π, φ, *շրթնայիններու քով գտնուի, այն ատեն* ψ *ի կը փոխուին, իսկ երբ* γ, κ, χ, *կոկորդայիններուն քով գտնուի,* ξ *ի կը փոխուին, վասնորոյ և կրկնակ գրեր անուանեցան ։*

3. *Այս* β, π, φ, *գրերը բառի մը մէջ եղող* μ *գրին քով երբ գտնուին, իրենք ալ* μ *գրի կը փոխուին. ինչպէս*, τρίβω (*շփեմ*), τρίμμα (*շփուած*), βλέπω (*տեսնեմ*), βλέμμα (*հայեցուած*), γράφω (*գրեմ*), γράμμα (*գրուած*), *և ոչ* τρίβμα, βλέπμα, *և* γράφμα,

4. *Նմանապէս* κ *և* χ *կոկորդայինները* γ *գրի կը փոխուին երբ բառի մը մէջ* μ *գրին քով գտնուին. ինչպէս*, πλέκω (*հիւսեմ*), πλέγμα (*հիւս-*

ուածք), βρέχω (թրջել), βρέγμα (թրջուածք) և ոչ πλέκμα և βρέκμα. (Տես և § 79)։

5. ν գիրը շրթնային բաղաձայններուն՝ այսինքն β, π, φ և ψ գրերուն քով μ գրի կը փոխուի. ինչպէս, σύμβουλος, ἔμπειρος, ἔμφρων, ἔμψυχος և ոչ σύνβουλος, ἔνπειρος, և այլք։ Իսկ երբ կոկորդային բաղաձայններուն քով գտնուի, այսինքն γ, κ, χ և ψ ին, այն ատեն γ գրի կը փոխուի. ինչպէս, συγγενής, συγκαλῶ, ἐγχώριος, πάγξενος, և ոչ συνγενής, συνκαλῶ, ἐνχώριος, πάνξενος.

6. ν գիրը ատամնային, այսինքն δ, θ, τ գրերուն քով փոփոխութիւն մը չը կրեր. ինչպէս, ἐνδύω, συνθέττω, ἔντονος, և այլք։

7. Այս ν գիրը երբ անփոփոխ կամ [illegible] (ὑγρά) կոչեալ, այսինքն λ. μ, ρ գրերուն քով նախադաս գտնուի, ինքն ալ նոյն գրերուն կը փոխուի. ինչպէս, συλλέγω, σύλλογος, ἐμμένω, συρράπτω, παλίρροια, և ոչ συνλέγω, ἐνμένω, πολίνροια, և այլք, (Տես և § 94. Ծանօթ. Ա.)։

8, ἐν նախադրութեան ν գիրն երբ σ և ζ գրերէն առաջ բարդեալ գտնուի, յայնժամ փոփոխութիւն մը չը կրեր. ինչպէս, ἐνσάρκωσις, ἔνζυμος, և այլք. սակայն συν նախադրութեան ν ին ζ գրէն առաջ երբ գտնուի, կը ջնջուի. ինչպէս, συζῶ, σύζυγος և այլոց մէջ. բայց երբ σ գրէն առաջ գտնուի՝ որուն

յաջորդ գիրը ձայնաւոր մ'ըլլայ, այն ատեն ինքն ալ σ ի կը փոխուի. ինչպէս, σύσσιτος, σύσσωμος, և այլք, բայց երբ σ էն յետոյ բաղաձայն մ'ըլլայ, յայնժամ կը ջնջուի. ինչպէս, συστρέφω, συστέλλω, եայլք:

3. δ, θ, τ տառամնայինները σ գրէն առաջ կը ջնջուին, որպէս հինգերորդ հոլովման վերայ ձեւացող առաւելավանկ ըստւած անուանց յոգնակի տրականներուն մէջ տեսանք. ἐλπίς – ἐλπίδος, յգ. տրկ. ἐλπίσι. ὄρνις – ὄρνιθος յգ. տրկ. ὄρνισι. νεότης – νεότητος, յգ. տրկ. νεότησι, եայլք. (Տես և § 51) Գեր. Բ.):

ԲԱՐԵՀՆՉԱԿԱՆ Ν.

Յօդ. 114. — Հելլենք իրարու քով գտնուող երկու ձայնաւորաց անախորժ հնչմանէ փախչելու համար, երբեմն անոնց մէջև ν գիր մը կը դնեն որ Εὐφωνητικόν Բարեհնչական ν կ'ըսուի, և որ կը գործածուի այսպէս.

1. Բային եզակի և յոգնակի երրորդ դէմքերն՝ որք ε և ι կը յանգին, երբ անոնց յետադաս բառը ձայնաւորով կ'սկսի, այս բարեհնչական ν գիրը կ'առնուն. ինչպէս, ἔλεγεν εἰς ἐκεῖνον

(կ'ըսէր անոր), λέγουσιν οἱ ἄνθρωποι (մարդիք կ'ըսեն), εἶπεν ὁ Θ:ός (Աստուած ըսաւ), ևայլք։

2. Այս ν գիրը կ'առնուն առաւելավանկ անուանց յոգնակի տրականներն, որք միշտ՝ σι կը յանգին. ինչպէս, ἐν μησίν εἴκοσι, τοῖς λέγουσιν ὅτι, τοῖς μισοῦσιν ἐμέ, ևայլք,

3. Այս ν գիրը կը դրուի ընդհանրապէս α բացասական մասնիկին, երբ անով բարդուելու բառը ձայնաւորով կ'սկսի. ինչպէս, ἄξιος (արժանի), ἀνάξιος (անարժան). ἱκανός (բաւական, կարող), ἀνίκανος (անբաւական). ἰσχυρός (զօրաւոր, հզօր), ἀνίσχυρος (անզօր, տկար), ևայլք։

Ծանօթ. Ա. — Այս կանոնէն կը բացառուին սա մի քանի բառերն, ἀόρατος (անտեսանելի), ἀόμματος (անակն, կոյր), ἄοπλος (անզէն), ἄϋλος (աննիւթական), և ոչ ἀνόρατος, ἀνόματος, ևայլք։

Ծանօթ. Բ. — Այս ο ὕτω, μέχρ:, ἄχρι մասնիկներուն յաջորդ բառն երբ ձայնաւորով սկսի՝ վերջերնին ς գիր մը կ'առնուն. ինչպէս, οὕτως εἶπε (այսպէս ըսաւ), μέχρις կամ ἄχρις ἡμῶν (մինչև մեզ). οὐ մասնիկն ալ՝ որ ոչ կը նշանակէ, ձայնաւորէ առաջ κ գիր մը կ'առնու. οὐκ οἶδα (ոչ գիտեմ), οὐκ ἐνταῦθα (ոչ աստ), οὐκ ἔχει (ոչ ունի), ևայլք։

ԱՊԱԹԱՐՑ

Ցոյց. 115. — *Ապաթարցն*[1] Ἀπόστροφος, *բառի մը վերջաւորութենէ կրճատեալ ձայնաւորին տեղը կը դրուի. ինչպէս*, ἀπ᾽ ἐκεῖνον, παρ᾽ αὐτοῦ, κατ᾽ ἐκείνων, ἐφ᾽ ἡμῶν, *եայլք։ Այս նշանը կը գործածուի նաև երբ յօդերուն ձայնաւորներուն՝ անուանց ձայնաւոր սկզբնատառերը միանան. ինչպէս*, τὸ ὄνομα — τοὔνομα, τοῦ ἀνδρός — τἀνδρός, τὸ ἐναντίον — τοὐναντίον, *եայլք. նոյնպէս*, καὶ ἐγώ — κἀγώ, καὶ ἐκεῖνος — κἀκεῖνος *բառերը։*

ԳԼՈՒԽ Բ.

ՎԵՐԱՑԵԱԼ ԱՆՈՒԱՆՔ

Ցոյց. 116. — *Վերացեալ* Ἀφῃρημένον *կ'ըսուին այն բառերն, որք առարկայի մը պարզ յատկութիւնը կը յայտնեն և որք Հայերէնին մէջ ընդ-*

---

[1] *Յունական* Ἀπόστροφος *բառին իմաստին աւելի ճիշդ իմաստը պիտի տար՝ եթէ փոխանակ «Ապաթարց» գրելու՝ «Ապադարձ» գրուէր, թէև ռ գիրը լծորդ համարուի Հայկական աթութայից մէջ Ր գրոյն։*

հանրապէս «-ընէ-» կը յանգին, սակայն Յունարէ-
նին մէջ զանազան վերջաւորութիւններ ունենալով՝
հետեւեալ կանոններով կը ձեւանան. —

1. ής յանգեալ սակաւակիր ամփոփեալ ա-
ծական անուանց վերջաւորութիւնն εια ի փոխելով՝
և չեշտերնին մակվերջընթերին վերայ առնելով կը
ձեւանան. ինչպէս, ἀληθής (ճշմարիտ), ἀλήθεια
(ճշմարտութիւն). εὐγενής (ազնիւ), εὐγένεια (ազ-
նուութիւն), ևայլք։

2. εύω յանգեալ բայից վերջաւորութիւնն εία ի
փոխուելով և չեշտը միևնոյն տեղը մնալով վե-
րացեալը կը ձեւանայ. ինչպէս, λατρεύω (պաշ-
տեմ), λατρεία (պաշտամունք). παιδεύω (կրթեմ),
παιδεία (կրթութիւն). θεραπεύω (դարմանեմ), θερα-
πεία (դարման), ևայլք։

3. ους յանգելոց վերջաւորութիւնն οια փոխ-
ուելով և չեշտը մակվերջընթերին վերայ մնալով՝
վերացեալը կը ձեւանայ. ինչպէս, εὔνους (բարե-
միտ), εὔνοια (բարեմտութիւն, համակրանք). ἄνους
(անմիտ), ἄνοια (անմտութիւն), ևայլք։

4. τος յանգեալ անուանց τ գիրը σ ի փոխ-
ուելով և ία վերջաւորութիւնն աւելցուելով՝ վե-
րացեալ կը ձեւանան. ինչպէս, ἀνόητος (անմիտ),
ἀνοησία (անմտութիւն). δύσπεπτος (դժուարամարս),
δυσπεψία (դժուարամարսութիւն). ἄπρακτος (ան-

գործ), ἀπραξία (*անգործութիւն*), *եւայլք*: *Սակայն* στος *յանգելոց* τ *գիրը* σ *ի չը փոխուիր*, *այլ միայն* ία *վերջաւորութիւնն առնելով կը ձեւանան*. *ինչպէս*, ἄχρηστος (*անպիտան*), ἀχρηστία (*անպիտանութիւն*). ἄπιστος (*անհաւատ*), ἀπιστία (*անհաւատութիւն*), *եւայլք*:

5. υς *յանգելոց վերջին* ς *գիրը վերցնելով և* της *յանգը դնելով՝ վերացեալ կը ձեւանան*, *և հինգերորդ առաւելավանկ հոլովման վրայ կը հոլովուին*. *ինչպէս*, ἡδύς (*քաղցր*), ἡδύτης (*քաղցրութիւն*). γλυκύς (*անուշ*), γλυκύτης (*անուշութիւն*). ταχύς (*շուտ*), ταχύτης (*շուտութիւն*), *եւայլք*, *որոց սեռականները կ՚ըլլան* ἡδύτητος, γλυκύτητος, ταχύτητος:

6. ων *յանգեալ առաւելավանկ անուանց սեռականներուն* ς *գիրը վերցնելով և* σύνη *վերջաւորութիւնը դրուելով կը ձեւանան*. *ինչպէս*, εὐγνώμων — εὐγνώμονος (*երախտագէտ*), εὐγνωμοσύνη, (*երախտագիտութիւն*). ἄφρων — ἄφρονος (*անխելք*), ἀφροσύνη (*անխելքութիւն*). νοήμων — νοήμονος (*սրամիտ*), νοημοσύνη (*սրամտութիւն*), *եւայլք*.

Յօդ. 117. — ος *յանգեալ ածական անուանք վերացեալի վերածուելու համար հետեւեալ երեք վերջաւորութեանց մին կ՚առնուն*. *ինչպէս*.

1. ια. σοφός — σοφία, κακός — κακία, πονηρός — πονηρία, ևայլք։

2. ότης. ἀγαθός — ἀγαθότης, ἴσος — ἰσότης, τίμιος — τιμότης, ևայլք։

3. σύνη. δίκαιος — δικαιοσύνη, καλός — καλοσύνη, ևայլք։

Այս վերացեալներուն ամէնքն ալ սեռով իգական լինելով՝ ուրաքանչիւրն իրեն յանգին համաձայն կանոնաւորապէս կը հոլովուին։

Ուսանողաց վարժութեանը համար հոս մի քանի ածականներ կը դնեմք, որոց վերացեալներն՝ ըստ վերոյիշեալ կանոնաց, պարտին ձեւացնել։

Ἄδικος	Անիրաւ.	Βραχύνους,	Կարճամիտ.
Ἄτακτος,	Անկարգ.	Ἀβλαβής,	Անվնաս.
Βέβαιος,	Ստոյգ.	Ἀπρεπής,	Անվայել.
Ἀθάνατος,	Անմահ.	Ἄχρηστος,	Անպիտան.
Ἄνοστος,	Անհամ.	Εὐπρεπής,	Վայելուչ.
Σεβάσμιος,	Յարգելի.	Εὔπιστος,	Դիւրահաւան.
Μεγαλόφρων,	Մեծամիտ.	Νόστιμος,	Համեղ.
Ἐλεήμων,	Ողորմած.	Νήπιος,	Մանուկ.
Ἄνομος,	Անօրէն.	Λεπτός,	Նուրբ.
Παχύς,	Գէր.	Δεινός,	Ճարտար.
Βραχύς,	Կարճ.	Πονηρός,	Խորամանկ.

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 118. — ης *յանգեալ ածականաց վերացեալներն երբեմն* ία *վերջաւորութեամբ կը յանգին փոխանակ* εια *ի և այն ատեն չեշտերնին վերջընթերին վերայ կը պահեն. ինչպէս*, εὐτυχής (*բարեբախտ*), εὐτυχία (*բարեբախտութիւն*). εὐγενής (*ազնիւ*), εὐγενία (*ազնուութիւն*). πένης (*աղքատ*), πενία (*աղքատութիւն*), *ևայլք*:

Շատ անգամներ ածականներուն չէզոքներն իբր վերացեալ գոյական կը գործածուին. ինչպէս, θέλω τὸ καλόν σας (*ձեր բարութիւնը կ'ուզեմ*), τὸ γλαφυρόν τῆς γλώσσης (*լեզուին պերճութիւնը*), τὸ ἄστατον τῆς τύχης (*բախտին անհաստատութիւնը*), τὸ ἀληθές τῶν λεγομένων μου (*ասացուածոցս ճշմարտութիւնը*), ὁμολογῶ τὸ δίκαιον (*արդարութիւնը կը խոստովանիմ*), *ևայլք*:

Նոյնօրինակ գործածութիւնը Հայերէնի մէջ ևս շատ յաճախ է. ինչպէս, փոխանակ ըսելու՝ ճշմարտութիւնը կը խոստովանիմ, բարութիւնը կը գործեմ, *կ'ըսուի*, ճշմարիտն խոստովանիմ, գործեմ զբարին, *ևայլք*:

ԳԼՈՒԽ Գ.

ԲԱՅԱԾԱՆՑ ԳՈՅԱԿԱՆՔ

Յօդ. 119. — *Բայածանց կ'ըսուին այն գոյական անուանք, որք ուղղակի բայից արմատներէն կը ձեւացուին, և հետեւեալ կերպիւ կը կազմուին.*

1. *բայից արմատին վրայ* ευς, της, τηρ *և* τωρ *վերջաւորութիւնքը դրուելով՝ բային իմաստը գործադրողը կը նշանակեն. ինչպէս*, γράφω (*գրեմ*), γραφεύς (*գրիչ, գրագիր*). γεννῶ (*ծնեմ*), γοννεύς (*ծնիչ, ծնող*), δικάζω (*դատեմ*), δικαστής (*դատիչ, դատաւոր*). ἐξετάζω (*քննեմ*), ἐξεταστής (*քննիչ*). μανθάνω (*ուսանիմ*), μαθητής (*ուսանող*). ἐλαύνω (*վարեմ*), ἐλατήρ (*վարիչ*). σώζω (*փրկեմ*), σωτήρ (*փրկիչ*). διδάσκω (*ուսուցանեմ*), διδάκτωρ (*ուսուցիչ*), *ևայլք*.

Ծանօթ. Ա. — ευς *և* τὴρ *վերջաւորող բառերը միշտ իրենց վերջաւորութեանց վրայ կը շեշտուին, իսկ* ωρ *յանգեալները վերջընթերնուն վրայ. ինչպէս*, γονεύς, γραφεύς, σωτήρ, ῥήτωρ, διδάκτωρ, *ևայլք*.

Ծանօթ. Բ. — *Այս* ευς, της *և* τηρ *յանգելոց*

իգականներն εια (*կամ* ις *և* ισσα) τρία, τειρα *կը վերջանան. ինչպէս*, ἱερεύς (*երէց*), ἱέρεια (*երիցուհի, քրմուհի*). βασιλεύς (*թագաւոր*), βασιλίς *կամ* βασίλισσα (*թագուհի*). ποιητής (*բանաստեղծ*), ποιήτρια (*բանաստեղծուհի*). σωτήρ (*փրկիչ*), σώτειρα (*փրկչուհի*), *ևայլք: Սակայն* της *յանգերոց իգականներուն մեծագոյն մասը* τις *սեռ.* ιδος *կը վերջանան. ինչպէս*, πολίτης (*քաղաքացի*), πολίτις (*քաղաքացուհի*). ἐργάτης (*գործաւոր*), ἐργάτις (*գործաւորուհի*), *ևայլք:*

2. *Երբ բայից արմատներուն վրայ* η, ος, μη, μος *և* τος *վերջաւորութիւնքն աւելցուին, իրեն նշանակութեամբ գոյական կըլլան. ինչպէս*, τρίβω (*շփեմ*), τριβή (*շփումն*). ἐλέγχω (*յանդիմանեմ*). ἔλεγχος (*յանդիմանումն*). γινώσκω (*ճանաչեմ*), γνώμη (*կարծիք, ճանաչումն*). δέω (*կապեմ*), δεσμός (*կապումն*). πίνω (*ըմպեմ*), πότος (*ըմպումն*), *ևայլք:*

Ծանօթ. Գ. — *Ոևէ բառ՝ որուն արմատն* ε *կամ* ει *գրերն են, անուան փոխուած ատեններն* ο *գրի կը փոխուին. զորօրինակ*, λέγω — λόγος, σπείρω — σπόρος, τρέπω — τροπή, στρέφω — στροφή, τρέφω — τροφή, *ևայլք:*

3. σις *և* σία *վերջաւորող գոյականները բազմաթիւ են, և կը նշանակեն ներգործութիւն կամ գործողութիւն որք այսպէս կը ձևանան.* —

1. *Միավանկ բայից կատարեալներուն վերջաւորութեան* ις *մասնիկն աւելցնելով. ինչպէս,* θέτω (*դնեմ*), *կտր.* ἔθεσα – θέσις (*դնելն, դիրք*). δίδω (*տամ*), *կտր.* ἔδωσα – δόσις (*տալն*). καίω (*այրեմ*), *կտր.* ἔκαυσα – καῦσις (*այրում*). παύω (*դադրիմ*), *կտր.* ἔπαυσα – παῦσις (*դադարումն*), *ևայլք*։

2. *Երբ միավանկ բայերը բարդ լինին, յայնժամ սովորաբար* σία *վերջաւորութիւնը կ՚առնուն. ինչպէս,* ἐπιστατῶ (*վերակացու լինիմ*), *կտր.* ἐπεστάτησα – ἐπιστασία (*վերակացութիւն*)։

3. *Այս վերջաւորութիւնը կ՚առնուն կրաւորական բայերն ալ, որոց կատարեալին* θην *յանգը վերցուելով՝* σις *կը դրուի. ինչպէս,* ποιοῦμαι (*ստեղծուիմ*), *կտր.* ἐποιήθην – ποίησις (*ստեղծումն*). λύομαι (*քակուիմ*), *կտր.* ἐλύθην – λύσις (*քակումն*). εὑρίσκομαι (*գտնուիմ*), *կտր.* εὑρέθην – εὕρεσις (*գիւտ*). κτῶμαι (*ստանամ*), *կտր.* ἐκτήθην – κτῆσις (*ստացումն*), *ևայլք*։

4. *Այս* ις *վերջաւորութիւնը կ՚ընդունին* ξα *և* ψα *յանգեալ կատարեալներն. ինչպէս,* πράττω (*գործեմ*), *կտր.* ἔπραξα – πρᾶξις (*գործ*). λέγω (*ասեմ*), *կտր.* ἔλεξα – λέξις (*բառ*). τύπτω (*զարնեմ*), *կտր.* ἔτυψα – τύψις (*հարուած*). λήγω (*յանգիմ*), *կտր.* ἔληξα – λῆξις (*յանգումն*). βλέπω (*տեսանեմ*), *կտր.* ἔβλεψα – βλέψις (*նկատումն*), *ևայլք*։

5. μα յանգեալ չէզոք բայածանց գոյականները սովորաբար կրաւորական բայերուն ընդունելութեանց յարակատարին աճումներն և կրկնումները թողլով կը ձեւանան և կը նշանակեն գործողութեան մը արդիւնքը· ինչպէս, γράφομαι (գրուիմ), յրկ· γεγραμμένος – γράμμα (գրութիւն կամ գրուած, գիր)· βλέπομαι (տեսնուիմ), յրկ. βεβλεμμένος – βλέμμα (հայեցուածք)· γεννῶμαι (ծնիմ), յրկ· γεγεννημένος – γέννημα (ծնունդ)· πράττομαι (գործուիմ), յրկ· πεπραγμένος – πρᾶγμα (գործ, բան)· νοοῦμαι (հասկցուիմ), յրկ· νενοημένος – νόημα (իմաստ)· ἀκούομαι (լսուիմ) յրկ· ἠκουσμένος – ἄκουσμα (լսուած), ևայլք։

6. ζ նկարագիր ունեցող բայերէն ածանցեալ գոյականները թէ σις և թէ σία կրնան յանգիլ· ինչպէս, γυμνάζω (մարզեմ), նրր· ἐγύμνασα – γύμνασις և γυμνασία (մարզումն)· ἐργάζομαι (գործեմ), նրր· εἰργάσθην – ἐργασία (գործողութիւն), ևայլք· սակայն այս կանոնը շատ բացառութիւններ ունի, որք միայն վարժութեամբ կը սորվուին։

Բայերէն ածանցեալ հետեւեալ երեք գոյական անուններն ևս կը ձեւանան.

1. ἤριον, և կը նշանակէ տեղի (Հայերէն արան)· ինչպէս, ἐργάζομαι (գործեմ), ἐργαστήριον (գործարան)· ἐκπαιδεύω (կրթեմ), ἐκπαιδευτήριον (կրթարան)· ἀκροάζομαι (ունկնդրեմ), ἀκροατήριον (տեղի ունկնդրութեան), ևայլք։

2. τρον կը նշանակէ գործիք . ինչպէս, ἀρόω (աւրօրեմ), ἄροτρον (արօր) . κατοπτρίζομαι (հայելիի մէջ նայիմ), κάτοπτρον (հայելի) . φέρομαι (բերուիմ, կրուիմ), φέρετρον (գահոյք, քեբեվեր), և այլք ։

3. στρα և կը նշանակէ թէ գործիք և թէ տեղի . ինչպէս, ξύω (քերեմ), ξύστρα (քերիչ) . παλαίω (մրցեմ), παλαίστρα (մրցարան) . ὀρχοῦμαι (պարեմ), ὀρχήστρα (պարելու տեղի), և այլք ։

ԱԾԱՆՑՈՒՄՆ ԱԾԱԿԱՆԱՑ

Ցող. 120. — *Ածանցեալ ածականաց մեծագոյն մասն ος կը յանգի, յորմէ առաջ զանազան գրեր կը գտնուին և որոցմէ կը ծագին հետեւեալ ածականաց վերջաւորութիւնքն ։*

1. ιος վերջաւորութիւն կը դրուի գոյական անուան արմատին վերայ և կը նշանակէ պատկանում, որպէս Հայերէնային մասնիկն . ինչպէս, οὐρανός (երկինք), οὐράνιος (երկնային) . ἐπίγειος (երկրային), οἰκεῖος (տնային), ποτάμιος (գետային), θαλάσσιος (ծովային), և այլք ։

2. αῖος վերջաւորութիւնն որ կը նշանակէ երկրի, քաղաքի կամ տեղի մը վերաբերողն, որպէս Հայերէն

ոյ մասնիկն. ինչպէս, ἀγορά (շուկայ), ἀγοραῖος (շուկացի). Ἀθῆναι (Աթէնք), Ἀθηναῖος (Աթէնացի), Ῥώμη (Հռովմ), Ῥωμαῖος (Հռովմայեցի), եւայլք։

3. ικος վերջաւորութիւնն՝ որ նոյնպէս պատկանում կամ վերաբերութիւն կը նշանակէ և Հայերէն ական մասնիկին իմաստն ունի. ինչպէս, πατήρ, սեռ. πατρός — πατρικός (հայրական), ἀδελφός — ἀδελφικός (եղբայրական), ξένος — ξενικός (օտարական), δοῦλος — δουλικός (ծառայական), τραπεζίτης (սեղանաւոր), τραπεζιτικός (սեղանաւորական), եւայլք։

Ծանօթ. Ա. — Երբ αῖος վերջանայ բառ մը՝ այն ատեն ι գրին վրայ այս (¨) տրոհական նշանը դրուելով՝ ικός մասնիկը կ'աւելցուի. ինչպէս, Ἀθηναῖος — ἀθηναϊκός ; ἀρχαῖος — ἀρχαϊκός, Ῥωμαῖος — ῥωμαϊκός, եւայլք։

4. ινος վերջաւորութիւնը անուանց յանգին տեղը դրուելով կը նշանակէ նիւթ, յորմէ շինուած է բան մը, որպէս Հայկական եայ կամ եղէն մասնիկներն. ինչպէս ξύλον (փայտ), ξύλινος (փայտեղէն). πέτρα (քար), πέτρινος (քարեղէն). χαλκός (պղինձ), χάλκινος (պղնձեղէն). μόλυβδος (կապար), μολύβδινος (կապարեայ), եւայլք։

5. ιμος վերջաւորութիւնն, որ անուանց յանգին տեղը դրուելով՝ ներգործելու կամ կրելու յար-

մարութիւնը կը նշանակէ, ինչպէս Հայերէն ելի կամ ալի մասնիկներն. ինչպէս, τρέφω (սնուցանեմ), τροφή (սնունդ), τρόφιμος (սնանելի). πίνω (ըմպեմ), πότος (ըմպումն), πότιμος (ըմպելի). σπείρω (սերմանեմ), σπόρος (սերմ), σπόριμος (սերմանելի), χρῆσις (գործածութիւն), χρήσιμος (գործածելի), և այլք։ Այս ιμος յանգն ունեցող ածականք, բարդածականաց պէս, իգական վերջաւորութիւն չունին, այլ յօդով միայն կը տարբերին։

6. Այս τος և τέος վերջաւորութիւնքը կրաւորական բայից կատարեալներուն արմատին վրայ կը դրուին և τοςը կրողն և τέοςը կրելի– պարտաւորեալն կամ արժանին կը նշանակեն. ինչպէս, πράττομαι (գործուիմ), ἐπράχθην – πρακτός (գործեալ), πρακτέος (գործուելի). ποιοῦμαι (շինուիմ), ἐποιήθην – ποιητός (շինեալ), ποιητέος (շինուելի). ἀγαπῶμαι (սիրուիմ), ἠγαπήθην – ἀγαπτός (սիրեցեալ), ἀγαπητέος (սիրուելի). προτιμῶμαι (նախապատուիմ), προετιτήθην – προτιμητός (նախապատուեալ), προτιμητέος (նախապատուելի), և այլք։

7. ώδης վերջաւորութիւնը գոյական անուանց արմատին վրայ կը դրուի և նմանեան կամ լիութեան իմաստը կը յաւելու, ինչպէս Հայկական ոտ կամ ոտ մասնիկներն. ինչպէս, αἷμα (արիւն), սեռ. αἵματος – αἱματώδης (արիւնոտ), ἄμμος (աւազ), ἀμ-

μώδης (*աւազուտ*) . θρίξ (*մազ*), *սեռ.* τριχός — τριχώδης (*մազոտ*) . πέτρα (*քար*), πετρώδης (*քարուտ*), *և այլք*։ *Այս* ωδης *մասնիկը կը նշանակէ նաև նմանութիւն.* γυνή (*կին*), *սեռ.* γυναικός — γυναικώδης (*կանացի*), λέων (*առիւծ*), *սեռ.* λέοντος — λεοντώδης (*առիւծանման*), *և այլք*։

Ծանօթ. Բ. — *Այս նմանութեան իմաստով գործածեալ* ωδης *մասնիկին տեղ՝ շատ անգամ* ειδής *մասնիկն ալ կը գործածուի. ինչպէս,* γυναικώδης *և* γυναικοειδής, λεοντώδης *և* λεοντοειδής, ἀμπελοειδής (*այգենման*), πετροειδής (*քարանման*), *և այլք*։

8. ήριος *վերջաւորութիւնը գոյականներուն արմատին վրայ դրուելով՝ Հայկական -իչ մասնիկին նշանակութիւնն ունի. ինչպէս,* σωτήρ (*փրկիչ*), σωτήριος (*փրկարար*). λυτήρ (*լուծիչ*), λυτήριος (*լուծարար*). καταστροφεύς (*կործանիչ*), καταστρεπτήριος (*կործանարար*), πειστήριος (*համոզարար*), *և այլք*։

ԱԾԱՆՑՈՒՄՆ ՄԱԿԲԱՅԻՑ

Ցող. 121. — *Որպէս ըսինք, ո՛ և է ածական անուն, որոյ սեռականին* ν *գիրը* ς *գրի փոխուի՝ մակբայ կ'ըլլայ. ինչպէս,* εὐτυχήν — εὐτυχῶς,

Մբ. εὐτυχῶς, εὐγενής – εὐγενῶν, *Մբ.* εὐγενῶς, ἀπρε-πής – ἀπρεπῶν, *Մբ.* ἀπρεπῶς, *ևայլք*։

2. δόν *կամ* ηδόν *մասնիկներն ո՛ւէ անուան արմատին վերայ դրուելով, մակբայի նշանակութիւն կ՚ուտան և նմանութեան կամ եղանակի իմաստը կ՚ունենան. ինչպէս*, ἀγέλη (*հօտ*), ἀγεληδόν (*հօտանման*). σωρός (*խումբ*), σωρηδόν (*խմբովին*). ἀναφανδόν (*յայտնի երևանակաւ, յայտ յանդիման*), ἀστραπή (*կայծակ*), ἀστραπηδόν (*կայծակնաման*), *ևայլք*։

3. ιστί *վերջաւորութիւնն՝ ազգային անուանց յանգերուն տեղը դրուելով,* [illegible]*, այսինքն Հայկական երէն մասնիկին նշանակութիւնը կ՚ունենայ. ինչպէս*, Ἕλλην (*Հելլէն*), Ἑλληνιστί (*Հելլէններէն*). Ἀρμένιος (*Հայ*), Ἀρμενιστί (*Հայերէն*). Ἄγγλος (*Անգղիացի*), Ἀγγλιστί (*Անգլիերէն*). Γάλλος (*Գաղղիացի*), Γαλλιστί (*Գաղղիերէն*), *ևայլք*։

Գիտ. Ա. — *Երբ Յոյնք կ՚ուզեն յայտնել մէկու մը ո՛ւէ մարդու կամ ազգի կուսակից լինելը կամ նմանիլն, այն ատեն նոյն անձին կամ ազգին անուան վերջաւորութեան վերայ* ίζω *յանգը դնելով կը բայացնեն զայն. ինչպէս*, ἀγγλίζω (*անգլիանամ, այսինքն Անգլիացիի մը պէս կը վարուիմ, կամ այն ազգին կուսակիցն եմ*), Γάλλος – γαλλίζω (*գաղղիանամ*), Ἕλλην – ἑλληνίζω (*յունանամ*), Ἀρμένιος – ἀρμενίζω (*հայանամ*), *ևայլք. սա-*

կայն, որպէս ըսինք. միշտ նմանողութիւն կամ կուսակցութիւն կը նշանակէ և ոչ խսկապէս ըլլալն. որպէս, φιλιππίζω (փիլիպպոսի կուսակիցն եմ), ἰταλίζω (իտալացւոց կուսակիցն եմ), և այլք.

ՓԱՂԱՔՇԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՔ

Յօդ. 122. — *Փաղաքշական* Ὑποκοριστικά կ'ըսուին այն բառերն որք գովելու կամ արհամարհելու նպատակաւ, նախատիպ բառին նշանակութիւնը կը փոքրկացուն, որպէս Հայերէնին մէջ սովորաբար այսպիսի բառեր ձևացնելու համար իկ, ուկ և ակ մասնիկները կը գործածուին. Այսպիսի փաղաքշական անուանք հետևեալ վերջաւորութիւններով կը շինուին.

1. ίσχος. զորօրինակ, ἄνθρωπος – ἀνθρωπίσχος (մարդուկ), ῥήτωρ – ῥητορίσχος (ճարտասանիկ), νεανίας – νεανίσχος (պատանեակ), στέφανος – στεφανίσχος (պսակիկ), և այլք.

2. άριον. զորօրինակ, παιδίον – παιδάριον (տղեկ), ἄνθρωπος–ἀνθρωπάριον (մարդուկ), γυνή, սեռ. γυναικός – γυναικάριον (կնիկիկ). ποῦς, սեռ. ποδός – ποδάριον (ոտիկ), և այլք.

3. ιον. զորօրինակ, ῥύαξ (առու), սեռ. ῥύακος

— ῥυάκιον (*առուակ*)․ σῶμα (*մարմին*), «ե»․ σώματος — σωμάτιον (*մարմնիկ*), *եւայլք*։

Ծանօթ. Ա. — *Արդի Յունարէնին մէջ այս* ιον *վերջացող փաղաքշականներուն, որպէս նաեւ գրեթէ բոլոր սոյն վերջաւորութեամբ չէզոք անուանց* ον *յանգը կը կրճատուի․ ինչպէս* ῥυάκι, ποδάρι, παιδί, *եւայլք։ Պէտք է գիտնալ նաեւ թէ՝ ռամիկ լեզուաւ բոլոր փաղաքշականներն* άκι *կը վերջացնեն․ ինչպէս,* σωματάκι, παιδάκι, πουλάκι, ποδαράκι, *եւ այլք․ Արական եւ իգական յատուկ անուանց փաղաքշականներն ալ* άκης *եւ* άκη *կը յանգին խօսեալ լեզուին մէջ․ ինչպէս* ὁ Δημητράκης, ὁ Γεωργάκης, ὁ Χρηστάκης, ὁ Ἀναστασσάκης, *փոխանակ՝* ὁ Δημήτριος, ὁ Γεώργιος, ὁ Χρῆστος *եւ* Ἀναστάσιος *ըսելու․ իսկ իգականներուն՝* Κατιγκάκη, Ἑλεγκάκη, *եւ* ιτσα *մեծաւ մասամբ,* Ἑλενίτσα, Μαριγίτσα, Ἀναστασίτσα. *սակայն այսպիսի վերջաւորութեանց եւ ոչ մին արդի գրական լեզուն ընդունած է երբեք*։

4. ίς․ *զորօրինակ*, πινακίς (*պնակիկ*), θεραπαινίς (*պզտիկ սպասուհի*), κορασίς (*պզտիկ աղջիկ*), γλωττίς (*լեզուակ*), *եւայլք*,

---

ՄԵԾԱՑՈՒՑԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՔ

Յօդ. 123. — *Փաղաքշականներուն հակառակ*, Մեծացուցական Μεγεθυντικά *մասնիկներ ալ կան, որք ծաղրելու նպատակաւ նախատիպ բառին իմաստը կը մեծցունեն, և հետեւեալ կերպով կը ձեւանան.*

1. αρᾶς. *զորօրինակ*, χείλη (*շրթունք*), χειλαρᾶς (*մեծ կամ կախեալ շրթունք ունեցող*), κοιλία (*փոր*), κοιλαρᾶς (*մեծ կամ ուռեցեալ փոր ունեցող*). πόδιον (*ոտք*), ποδαρᾶς (*մեծ ոտք ունեցող*), *ևայլք*:

2. ακας. *զորօրինակ*, μυστάκιον (*պեխ*), μυστακᾶς (*մեծ և անվայել պեխ ունեցող*), μέθυσας *գինով*, μεθύστακας (*անդադար գինով եղող*), *ևայլք*:

Գիտ. Ա. — *Այս* ᾶς *վերջաւորութիւնը ռամիկ լեզուաւ վաճառեալ իրաց յանգին վերայ դրուելով՝ նոյն իրերը վաճառողին իմաստովը կը գործածեն. ինչպէս*, ψωμίον (*հաց*), ψωμᾶς (*հացավաճառ*). τυρίον (*պանիր*), τυρᾶς (*պանրավաճառ*). ὀξύδιον (*քացախ*), ὀξυδᾶς (*քացախավաճառ*). ὀψάριον (*ձուկ*), ὀψαρᾶς (*ձկնավաճառ*), *փոխանակ ըստ կանոնի՝* τυροπώλης, ὀξυδοπώλης, ὀψαροπώλης *ըսելու*:

ՊԱՐՈՒՆԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՔ

Ցոյց. 124. — Պարունական Περιεκτικά կ'ըսուին այն բառերն, որք կը նշանակեն տեղ մը՝ յորում կը գտնուին բազում նոյնատեսակ իրեր կամ անձեր, որ Հայկականին մէջ սովորաբար սոյն իմաստով արան, աստան, նոց և ուտ մասնիկներով կը ձեւանայ։ Յունարէնին մէջ հետեւեալ վերջաւորութիւնները կ'ունենան.

1. ών. զորօրինակ, δένδρον (ծառ), δενδρών (ծառաստան). ρόδον (վարդ), ροδών (վարդենիք, վարդաստան). ἄμπελος (այգի), ἀμπελών (այգեստան). κυπάρισσος (նոճի), κυπαρισσών (նոճիաստան), ևայլք։

2. ίτης. զորօրինակ, γυναικανίτης (կանանոց), ἀνδρωνίτης (առնանոց), ևայլք։

3. εῖον. այս վերջաւորութեամբ՝ թէև նոյնատեսակ իրաց պարունակողը չը նշանակեր, սակայն կրնան պարունական համարուիլ. զորօրինակ, μουσεῖον (թանգարան), σχολεῖον (դպրատուն), νοσοκομεῖον (հիւանդանոց), χαλκεῖον (պղնձարան), μακελεῖον (սպանդանոց), τελωνεῖον (մաքսատուն), ևայլք։

4. ιον. զորօրինակ, ἐργαστήριον (գործարան, խանութ), πλυντήριον (լուացարան), ἀκροατήριον (ունկնդրարան), ևայլք։

ՀԱՅՐԱՆՈՒՆԱԿԱՆՔ

Յօդ. 125. — Հայրանուանական Πατρωνυμικόν կ'ըսուին անունք, որք հօր մը յատուկ անունէն կ'ածանցին և որդւոյն կը նշանակեն, որպէս է Հայկականին եան մասնիկը։ Այս տեսակ անունները Յունարէնին մէջ հետեւեալ վերջաւորութիւնները կ'առնուն.—

1. Երբ յատուկ անուն մը ιος յանգի, անոր ος վերջաւորութիւնն άδης մասնիկի կը փոխուի. զորօրինակ, Γεώργιος (Գէորգ), Γεωργιάδης (Գէորգեան). Γρηγόριος (Գրիգոր), Γρηγοριάδης (Գրիգորեան). 'Αρτέμιος (Արտեմ), 'Αρτεμιάδης (Արտեմեան), ևայլք։

2. Երբ յատուկ անուն մը ος վերջաւորութենէն յառաջ բաղաձայն գիր ունի, այն ատեն հայրանունականն ίδης կը յանգի. զորօրինակ, Πέτρος (Պետրոս), Πετρίδης (Պետրոսեան). Παῦλος (Պօղոս), Παυλίδης (Պօղոսեան). 'Αλέξανδρος (Աղեքսանդր), 'Αλεξανδρίδης (Աղեքսանդրեան), ևայլք։ Նմանապէս այս ίδης վերջաւորութիւնը կ'առնուն Յունական բառից յանգը չունեցող (Տես § 40. Ծան. Ա.) օտարական անուններն. ինչպէս, 'Αβραάμ (Աբրահամ), 'Αβρααμίδης (Աբրահամեան). 'Ισαάκ (Իսահակ), 'Ισαακίδης (Իսահակեան), ևայլք։

Ծանօթ. Ա. — *Այն յատուկ անուններն՝ որք* αος *կը յանգին, երկու* α *արտասանելու անախորժ հնչմանէ փախչելու համար,* ιδης *մասնիկը կ'առնուն և ոչ* άδης. *զորօրինակ,* Νικόλαος (*Նիկողոս*), Νικολαΐδης (*Նիկողոսեան*). Χαρίλαος (*Բարիլայոս*), Χαριλαΐδης (*Բարիլայոսեան*), *ևայլք*.

Ծանօթ. Բ. — *Հայրանունականներն՝ իգականներուն համար մասնաւոր վերջաւորութիւն մը չունին արդի Յունականին մէջ, այլ միայն հօրն անուան սեռականը կը գործածուի. զորօրինակ,* Ἑλένη Γεωργίου (*Հեղինէ Գէորգին*), Μαρία Γρηγορίου (*Մարիամ Գրիգորին*), *ևայլք*։

3. *Կենդանեաց ձագեր նշանակողներն իրենց արմատին վրայ* ιδεύς *վերջաւորութիւնը դրուելով կը ձեւանան, որպէս է Հայերէնին մէջ* կորիւն *կամ* ձագ *բառն. զորօրինակ,* λύκος (*գայլ*), λυκιδεύς (*գայլակորիւն*). λέων (*առիւծ*), *սեռ.* λέοντος — λεοντιδεύς (*առիւծակորիւն*). ἀετός (*արծիւ*), ἀετιδεύς (*արծուաձագ*), *ևայլք*։

ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՆ ԲԱՌԻՑ

Յօդ. 126. — *Հելլենք, որպէս և Հայք, ունելով երկու գաղափարներ միասին յայտնել, որոցմէ մին կը սահմանէ զմիւսն, կը բաղադրեն սահ-*

մանելի գաղափարին նշանակութիւնն. ունեցող բառը՝ սահմանող գաղափարը յայտնող բառին հետ. ինչպէս, ναῦς (*նաւ*) *և* μάχομαι (*մարտնչիմ*), *կ'ըլլայ* ναυμάχος (*նաւամարտ*), ναυμαχία (*նաւամարտութիւն*), *յորմէ և* ναυμαχῶ (*նաւամարտիմ*)։ *Ուրեմն.* —

1. *Երբ բարդեալ բառին՝ բարդիչ մասանց մին բայ է, յայնժամ բային գաղափարը գերազանցող և սահմանող է, թէ՛ նախադասեալ և թէ՛ յետադասեալ լինի այն բարդութեան մէջ. ինչպէս,* φέρω (*կրեմ*), πόνος (*վաստակ*), φερόπονος (*վաստակիր*). παῖς (*մանուկ*), ἀγάγω (*կրթեմ, մարզեմ*), παιδαγωγός (*մանկավարժ*), *ևայլք*։

2. *Երբ բարդուելի բառին նախադասեալն անուն մ'է, յայնժամ անոր հոլովական վերջաւորութիւնն* ο *գիրը կ'ըլլայ, որ ձայնաւորով սկսեալ բառից առջև կը կրճատի. ինչպէս,* σῶμα, *սե.* σώματος — σωματοφύλαξ (*թիկնապահ*). δίκη (*դատ*), γράφω — δικογράφος (*դատագիր*). κρέας (*միս*), πωλῶ — κρεοπώλης (*մսավաճառ*). νομός (*գաւառ*), ἄρχω — νομάρχης (*գաւառապետ*). ἔθνος (*ազգ*, ἐθνάρχης (*ազգապետ*), *ևայլք*։ *Սակայն երբ անունն* υς *և* ους *կը յանգի, այն ժամանակ սովորաբար* ς *գիրը կրճատուելով բարդութիւնը կ'ըլլայ. ինչպէս,* εὐθύς (*ուղիղ*), εὐθύδικος (*ուղղադատ*). πολύς (*շատ*),

πολυφάγος (*շատակեր*) • βοῦς (*կով*), βουκέβαλος (*կովագլուխ, ցլագլուխ*), *եւայլք* •

3. μα *յանգեալ չէզոքներն երբեմն բարդութեան ատեն իրենց* α *գիրն* ο *գրի կը փոխեն* • *ինչպէս*, αἷμα (*արիւն*), αἱμοβόρος (*արիւնարբու*) • *Այս տեսակ բարդութիւնը հազուագիւտ լինելով՝ միշտ սեռականէն կը բարդուին, որպէս կ'ըլլան բոլոր ածանցեալներն* • *ինչպէս* γράμμα – γράμματος – γραμματόφιλος (*գրասէր*), ᾆσμα – ᾄσματος – ἀσματολόγος (*երգաբան*), πνεῦμα – πνεύματος – πνευματομάχος (*հոգեմարտ*), *եւայլք* •

4. *Երբ բարդուելի բառին նախադասեալը բայ մ'է, երբեմն անոր վերջաւորութիւնն* ε *կամ* σι *յանգերը կ'առնուն* • *ինչպէս*, ἄρχω – τύπος *կ'ըլլայ՝* ἀρχέτυπος (*առաջնատիպ*), φέρω – πόνος = φερέπονος (*վաստակակիր*), λύω – κόμη = λυσίκομος (*հերարձակ*), στρέφω – δίκη = στρεψίδικος (*թիւրադատ, դատը թիւրող*, [illegible]), *եւայլք* •

Ծանօթ. Ա. — Ἄρχω (*իշխեմ*) *բային բարդեալներէն մի քանին* σ *կամ* ε *գրերը չեն ընդունիր* • *ինչպէս*, ἀρχιερεύς (*քահանայապետ*), ἀρχιεπίσκοπος (*արքեպիսկոպոս*), ἀρχίατρος (*բժշկապետ*), *եւայլք* •

5. *Անհոլով բառերը բարդութեան ատեն փո-*

փոխութիւն մը չեն կրեր։ ինչպէս, ἐκβαίνω, ἐξέρχομαι, προάγω, παλίμβουλος, προτρέχω, προσβάλλω, ἄκακος, ἄπαις, δυσκολία, εὐάρεστος, εὔβατος, δύσβατος, եւայլք։

6. Մեծաւ մասամբ՝ բայից օժանդակութեամբը բարդեալ անուանց մէջ, բայն երկրորդ բարդելի մաս լինելով՝ անունական վերջաւորութիւն կ՚առնու եւ առաջին բարդելին գործողութեան մը առարկայն կը նշանակէ. ինչպէս, ἔργον – λάβω = ἐργολάβος (գործառու), ἵππος – τρέφω = ἱπποτρόφος (ձիաբոյծ), ἄνθρωπος – κτείνω = ἀνθρωποκνόνος (մարդասպան), եւայլք։

Ծանօթ. Բ. — Այսպիսի բարդութեանց մէջ ος վերջաւորութիւնը յոյժ սովորական է, սակայն կան նաեւ ας եւ ης վերջաւորութիւններ, որք առաջին հոլովման վերայ կը ձեւանան. զորօրինակ, βιβλίον – πωλῶ = βιβλιοπώλης (գրքածախ), ὄρνις, սեռ. ὄρνιθος – θήρα = ὀρνιθοθήρας (հաւորս), νόμος – θέτω = νομοθέτης (օրէնսդիր), եւայլք։

Գիտ. Ա. — Որեւէ բառ՝ որուն սկզբնատառը ρ գիրն է եւ բարդուող մասը ձայնաւորի կը յանգի, այն ատեն այն ρ գիրը կը կրկնուի, ինչպէս, πρό եւ ῥίζα = πρόρριζα (արմատէն), ἐπί եւ ῥῆμα = ἐπίρρημα (մակբայ), եւայլք. Նոյնը կ՚ըլլայ հեգական աճման

ատեն. ինչպէս, ῥίπτω — ἔρριπτον — ἔρριψα, ῥάπτω — ἔρραπτον — ἔρραψα, *ևայլք*։

Գիտ. Բ. — *Բարդ բառերն իրենց շեշտը մակվերջընթերնուն վերայ կը բարձրացընեն միշտ, եթէ երկու վանկէն աւելի են, իսկ երբ երկվանկ ըլլան, այն ատեն վերջընթերնուն վերայ կը շեշտուին. զորօրինակ*, φιλόθεος, σύντροφος, σύνοδος, πρόδρομος, ἄτακτος, ἄπαις, ἄπους, ἆνους, *ևայլք*։

Ծանօթ. Գ. — *Ներգործական բայէ և անունէ բարդեալներն, որք* ος *վերջաւորութիւնն ունին, (բացի* τος *և* νος *վերջաւորութիւններէ) վերջընթերնուն վերայ շեշտուած ատեն կը նշանակեն ներգործութիւն. ինչպէս*, λιθοβόλος (*քարկոծող*), πατροκτόνος (*հայրն սպաննող*), παιδοκτόνος (*զաւակներն սպաննող*). *իսկ մակվերջընթերնուն վերայ շեշտուած ատենները՝ կը նշանակեն կէր, կրեւ. ինչպէս*, λιθόβολος (*քարկոծեալ*), πατρόκτονος (*հօրմէ սպանեալ*), παιδόκτονος (*զաւակներէն սպանեալ*), *ևայլք*. *Սակայն երբ բառին վերջընթերն երկար է, շեշտը այն ատեն յանգին վերայ կը դրուի և սոսկապէս ներգործութիւն կը նշանակէ. ինչպէս*, παδαγωγός, ὁδηγός, ἀργυραμοιβός, *ևայլք*։

ԳԼՈՒԽ Դ.

ՆՈՒՐԲ ԿԱՄ ԹԱՒ ՆՇԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ԲԱՌԵՐ

Յօդ. 127. — *Որպէս երկրորդ մասին մէջ (Տես § 44) ըսինք, Հելլէն լեզուն երկու հագագային, այսինքն՝ առոգանութեան նշաններ ունի* (᾿) *Նուրբ* Ψιλή, *և* (῾) *Թաւ* Δασεῖα, *որք ձայնաւորով կամ երկբարբառով սկսող բառից սկիզբը կը դրուին հետեւեալ կանոնաց համեմատ։* —

1. *Ուղղականին հագագային նշանը բոլոր հոլովներուն մէջ ալ կը պահուի. ինչպէս,* ἄνθρωπος — ἀνθρώπου — ἀνθρώπῳ — ἄνθρωπον, *յգ.* ἄνθρωποι. ἅγιος — ἁγίου — ἁγίῳ — ἅγιον, *յգ.* ἅγιοι, *ևայլք։*

2. *Ձայնաւորով սկսող բայից ներկային ինչ հագագային նշան ունենայ, նոյնը կը մնայ բոլոր միւս ժամանակներուն մէջ. ինչպէս,* ἐλπίζω — ἤλπιζον — ἤλπισα, ἑλκύω — εἵλκυον — εἵλκυσα, *ևայլք։*

ՆՈՒՐԲ (᾿) ՀԱԳԱԳԱՑԻՆՆ ԸՆԴՈՒՆՈՂ ԲԱՌԵՐ

Յօդ. 128. — 1. *Բացասական* α *գիրը միշտ նուրբ նշան կ'ընդունի. ինչպէս,* ἀθάνατος (*անմահ*), ἄπιστος (*անհաւատ*), ἄδικος (*անիրաւ*), *ևայլք։*

2. Բայց հեղական աճումները նուրբ նշանը կ'ընդունին. ինչպէս, λύω – ἔλυον – ἔλυσα, τρίβω – ἔτριβον – ἔτριψα, ևայլք:

3. Ձայնաւորով սկսեալ բոլոր բառերն, որք հետեւեալ կանոններուն չեն հետեւիր և թաւ նշան ընդունող բառից ցուցակէն դուրս են, նուրբ հագագայինը կ'ընդունին:

ԹԱՒ ՀԱԳԱԳԱՅԻՆ ԸՆԴՈՒՆՈՂ ԲԱՌԵՐ

Յօդ. 129. — 1. Բոլոր բառերն որք ρ և υ տառերով կ'սկսին, թաւ նշան կ'առնուն. ինչպէս, ῥῆμα, ῥέω, ὕδωρ, ὕμνος, ևայլք(1):

2. Սոսկ ձայնաւոր կամ երկբարբառ եղող յօդերն. ὁ, ἡ, οἱ, αἱ:

3. Նոյնպէս, ἅπαξ, ἕν, εἷς, ἕξ և ἑπτὰ յորմէ ἕβδομος թուականները:

---

(1) Այս թաւ հագագային նշանն ընդունող բառից Հայերէնի տառադարձութեանն ատեն, միշտ հ գիրը կ'աւելցուի, յորմէ կ'երեւի որ սոյն բառը Յունականին մէջ թաւանիշ է. զորօրինակ, Ὅμηρος (Հոմերոս), Ἱπποκράτης (Հիպպոկրատէս), Ῥώμη (Հռովմ), ῥήτωρ (հռետոր), Ὕδρα (Հիդրա), եւայլք:

4. Էական դերանուանց առաջին դէմքին յոգնակիներն. ἡμεῖς, ἡμῶν, ἡμῖν, ἡμᾶς։

5. Այս οὗτος αὕτη ցուցականները։

6. Նմանապէս οἷος, ὅσος, ὅς, որոց իգականներն οἵα, ὅση, ἥ յարաբերականներն և ὅθεν, ὅπως, ἅμα, ἅπας, ἵνα բառերն և մասնիկները։

Վերոյիշեալներէ զատ՝ հագագային թաւ նշանն առնող բառից այբ և բէնի կարգով ցուցակ մը դնել պատշաճ համարեցինք ի դիւրութիւն ուսանողաց։

A

Ἅβρα,	Աղախին.	Ἅμιλλα,	Մրցումն.
Ἁβρός,	Փափուկ.	Ἅμα,	Նոյն ատեն, պէս, հետ.
Ἁγνός,	Մաքուր.		
Ἅγιος,	Սուրբ.	Ἁπαλός,	Կակուղ.
Ἅδης,	Դժոխք.	Ἅπαξ,	Միանգամ.
Ἁδρός,	Ստուար.	Ἁπλοῦς,	Պարզ.
Αἷμα,	Արիւն.	Ἅπτομαι,	Դպչիմ.
Ἅλας,	Աղ.	Ἅρμα,	Կառք.
Ἁλίσκω,	Որսամ.	Ἁρμόζω,	Յարմարիմ.
Ἅλυσις,	Շղթայ.	Ἁρπάζω,	Յափշտակեմ.
Ἅμαξα,	Կառք, սայլ.	Ἁψίς,	Կամար, բոլորակ.
Ἁμαρτάνω,	Մեղանչեմ.		

E

Ἑβραῖος	Եբրայեցի.	Ἕπομαι,	Հետեւիմ.

Ἕδρα, Աթոռ.
Εἱμαρμένη Ճակատագիր.
Εἱρκτή Բանտ.
Ἕκαστος, Իւրաքանչիւր.
Ἑκών Կամայ.
Ἑλένη, Հեղինէ.
Ἕλλην, Հելլեն, Յոյն.
Ἕλιξ, Ոլորան.
Ἑλκύω, Իրեն քաշեմ, ձգեմ.
Ἑορτή, Տօն, հանդէս.
Ἑρμηνεύω, Մեկնեմ.
Ἑρμῆς, Հերմէս.
Ἕρπω, Սողամ.
Ἑστιῶ, Կոչունք ընեմ.
Ἑταῖρος, Ընկեր.
Ἕτερος, Ուրիշ.
Ἕτοιμος, Պատրաստ.
Εὑρίσκω, Գտնամ.
Ἕωλος, Օթեկան, պայաթ
Ἕως, Այգ, 2. մինչեւ.

H

Ἥβη, Պատանեկութիւն.
Ἡγοῦμαι, Առաջնորդեմ.
Ἡδύνω, Քաղցրացնեմ.
Ἡλικία, Տարիք.
Ἥλιος, Արեւ.
Ἡμέρα, Օր. ցերեկ.
Ἥμισυ, Կէս.
Ἡνίον, Սանձ.
Ἧπαρ, Լեարդ.
Ἡρακλῆς, Հերակլէս.
Ἡρώδης, Հերովդէս.
Ἥρως, Դիւցազն.
Ἡσίοδος, Հիսիոդոս.
Ἥσυχος, Հանդիստ.
Ἡττῶμαι, Յաղթուիմ.
Ἥφαιστος, Հեփեստոս.

I

Ἱδρύω, Կառուցանեմ.
Ἱδρώς, Քրտինք.
Ἱέραξ, Որի, (ադմաճա).
Ἱερός, Նուիրական.
Ἱκανός, Բաւական.
Ἵλεως, Ողորմած.
Ἱμάς, Փոկ.
Ἵμερος, Ցանկութիւն.
Ἵππος, Ձի.
Ἵπταμαι, Թռչիմ.

Ἱκετεύω,	Պաղատեմ.	Ἵσταμαι	Կայնիմ, կենամ.
Ἱλαρός,	Զուարթ.	Ἱστορία,	Պատմութիւն.

Ο

Ὁδός,	Ճամբայ.	Ὁπλή,	Սմբակ.
Ὁλκάς,	Բեռնակիր նաւ.	Ὅπλον,	Զէնք.
Ὅμιλος,	Կաճառ.	Ὁρίζω,	Սահմանեմ։
Ὁμαλός,	Կանոնաւոր, հարթ.	Ὅρκος,	Երդումն.
		Ὅρος,	Սահման.
Ὅμοιος,	Նման.	Ὁρῶ,	Տեսնեմ.
Ὅμως,	Բայց, սակայն.	Ὅσιος,	Սուրբ.
Ὁμοῦ,	Միասին, հետ.	Ὥρα,	Ժամ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՔ

ԵՐԿԱՐ, ՍՈՒՂ ԵՒ ԵՐԿԱՄԱՆԱԿ ՁԱՅՆԱՒՈՐԱՑ ՎԵՐԱՅ

Յօդ. 130 — *Որպէս երկրորդ մասին մէջ ըսինք, ըստ Հելլէն քերականութեան, ձայնաւոր գրերն երեքի կը բաժնուին, այսինքն* η, ω, Երկար, Μακρά, ε, ο, Սուղ Βραχέα *և* α, ι, υ Երկամանակ Δίχρονα։ *Այս պատճառ կը համարինք ասոնց և ի մասնաւորի երկամանակ ձայնաւորաց երբ երկար և երբ սուղ նկատելոյն վերայ յատկապէս խօսիլ։*

1. *Ածական անուան մը արականին սեռականն*

երբ երկար վերջաւորութեամբ կը յանգի, այն ածականին իգականն ալ երկար յանգ կ'ունենայ. իսկ երբ արականին սեռականը սուղ վերջաւորութիւն կ'ունենայ, անոր իգականին յանգն ալ սուղ է. ինչպէս, δίκαιος, սեռ. δικαίου, իգ. δικαία. ἅγιος — ἁγίου, իգ. ἁγία. ταχύς — ταχέος, իգ. ταχεῖα. λαλῶν — λαλοῦντος, իգ. λαλοῦσα, ևայլք։

2. ης յանգող ածական անուանց վերացեալներուն εια վերջաւորութեան α գիրը սուղ է. ինչպէս, ἀληθής — ἀλήθεια, εὐγενής — εὐγένεια, εὐσεβής — εὐσέβεια, ևայլք։

3. εια յանգող երկվանկ բառից և εύω յանգեալ բայերէն յառաջ եկեալ վերացեալներուն α վերջաւորութիւնն երկար է. ինչպէս, χρεία, μνεία, πρεσβεύω — πρεσβεία, λατρεύω — λατρεία, ևայլք։

4. αια յանգող իգական գոյականաց α յանգը սուղ է. ինչպէս, γραῖα. μαῖα, Νίκαια, ևայլք։

5. ους ածականաց οια վերացեալներուն α յանգը սուղ է. ինչպէս, εὔνους — εὔνοια, ἄνους — ἄνοια, ևայլք։

6. υια վերջացող իգական բառից α յանգը սուղ է. ինչպէս, μυῖα, ևայլք։

7. ρα յանգող բառից երբ վերջընթերը ձայնաւոր մ'է, α գիրն երկար է, իսկ երբ երկբարբառ՝ սուղ է. ինչպէս, χήρα, χώρα. ὥρα, σφαῖρα,

μοῖρα, πεῖρα, եւայլք, բացի αὔρα (Թեթև հողմ) բառէն, որուն α յանգն երկար է։

8. Չէզոքներուն α, ι, υ յանգերը միշտ սուղ են. ինչպէս, βῆμα, στρῶμα, σῶμα, μέλι, σίνηπι, ἄστυ, ἡδύ, եւայլք։

9. ας յանգող իգական և չէզոք անուանց α գիրը սուղ է. ինչպէս, τὸ γῆρας, ἡ παστάς, եւայլք։

10. Բոլոր երկբարբառներն երկար են, բացի αι և οι երկբարբառներէն, որք երբ բառի մը վերջը գտնուին սուղ են։

11. Բոլոր α յանգող իգական անուանց α գիրը սուղ է, երբ հոլովուած ատեններն α գիրը սեռականին մէջ η գրի կը փոխուի. ինչպէս, μοῦσα — μούσης, γλῶσσα — γλώσσης, μέλισσα — μελίσσης, ποιοῦσα — ποιούσης նոյնպէս և հայցականը μοῦσαν, γλῶσσαν. μέλισσαν, եւայլք։

12. ιτις և υτις (որոց սեռ. δος կ'ըլլայ) յանգող իգականներուն վերջընթերն երկար և վերջաւորութիւնը սուղ է. ինչպէս, ἡ πολῖτις - πολίτιδος (քաղաքացուհի), πρεσβῦτις — πρεσβύτιδος (երիցուհի), եւայլք։

ԿԱՆՈՆՔ ՇԵՇՏԵԼՈՒ ՎԵՐԱՑ

Յօդ. 131. — Ինչպէս այլ տեղ ըսինք, Հելլէն լեզուն երեք տեսակ շեշտ ունի. (´) Ὀξεῖα Շեշտ,

(`) Βαρεῖα Բութ և (῀) Περισπωμένη Ոլորակ։ Ուսանողը ուղիղ չեշտելու համար պարտի հետեւեալ կանոնները գիտնալ. —

1. Բառից մակվերջընթերներն երբ չեշտուին՝ միշտ (´) չեշտ կ'ընդունին. ինչպէս, ἄθλιος, ἅγιος, μέτριος, τίμιος, և այլք։

2. Սուղ վանկի մը վերայ չեշտուած ատեն, միշտ (´) չեշտը կը դրուի. ինչպէս, μέρος, λόγος, ἄρτος, և այլք։

3. Երկար վերջաւորութիւն ունեցող բառերն երբ վերջընթերնուն վերայ չեշտուին, (´) կ'առնուն. ինչպէս, ἥρως, ἀγήρως, ἐκτείνω, ἀνθρώπου, և այլք։

Ծանօթ. Ա. — Βαρεῖα Բութը (`) միայն բառի մը վերջաւորութեան վերայ կրնայ դրուիլ չեշտին տեղն, երբ այն բառը կապակցութիւն մ'ունի իրմէ ետքն եղող բառին հետ. ինչպէս, ὁ καλὸς καὶ ἐπιμελὴς μαθητὴς προοδεύει (բարի և փութաջան աշակերտը կը յառաջադիմէ), և այլք։

Գէտ. Ա. — Երբ բառի մը վերջաւորութիւնն երկար է, մակվերջընթերին վերայ չը չեշտուիր, վասն որոյ և եթէ երրավանկ կամ բազմավանկ բառի մը մակվերջընթերին վերայ չեշտեալ է, այն բառը հոլովուած ատեն՝ երբ վերջաւորութիւնն երկարի,

շեշտը վերջընթերին վրայ կիջեցնէ . ինչպէս , ὁ ἄνθρωπος – ἀνθρώπου – ἀνθρώπῳ – ἄνθρωπον – ἄνθρωπε. *յգ.* οἱ ἄνθρωποι – ἀνθρώπων – ἀνθρώποις – ἀνθρώπους – ἄνθρωποι ։

Ծանօթ Բ. — *Այս կանոնէն կը խոտորին չորրորդ հոլովման վրայ ձեւացով Ատտիկական կոչեալ և սակաւակիր* ις *յանգող ամփոփեալ անուններն , որոց սեռականներուն վերջաւորութիւնքը թէև երկար ձայնաւոր է , սակայն մակվերջընթերնուն վրայ կ'առնուն իրենց շեշտն . ինչպէս,* πόλις – πόλεως – πόλεων , ὄφις – ὄφεως – ὄφεων , *ևայլք* ։

Իսկ Περισπωμένη *(ոլորակ)* (˜) *կ'ընդունին .* —

1. *Այն անուններն՝ որք սեռական և տրական հոլովներնուն յանգին վրայ կը շեշտուին . ինչպէս.* ὁ ἀγαθός – τοῦ ἀγαθοῦ – τῷ ἀγαθῷ , τῶν ἀγαθῶν – τοῖς ἀγαθοῖς , *ևայլք* ։

2. *Այն բառերն՝ որոց երկար վանկ ունեցող վերջընթերին վրայ կը շեշտուին և յանգերնին սուղ են, միշտ* Περισπωμένη *(ոլորակ)* (˜) *կ'առնուն . ինչպէս ,* χοῖρος , τεῖχος , σῶμα , χῆρος , *ևայլք* ։

3. *Նոյնպէս ոլորակ կընդունին բոլոր համակիր ամփոփեալ անուանց վերջաւորութիւններն ։ ինչպէս ,* ἡ μνα(άα)ᾶ – τῆς μνᾶς – τῇ μνᾷ – τὴν μνᾶν . *յգ.* αἱ μναῖ – τῶν μνῶν – ταῖς μναῖς – τὰς μνᾶς , *ևայլք* ։

4. *Նմանապէս ոլորակ նշանը կ'ընդունին իրենց*

վերջաւորութեանց վրայ շեշտ ընդունող բայերն · ինչպէս , τιμῶ – τιμᾷς – τιμᾷ , τιμηθῶ – θῇς – θῇ , πατῶ – πατεῖς – πατεῖ , πατηθῶ – θῇς – θῇ , λυθῶ – λυθῇς – λυθῇ , եւայլք ։

5. Հելլենական չեղող անունները՝ երբ իրենց վերջաւորութեանց վրայ կը շեշտուին , ոլորակ նշանը կընդունին · ինչպէս , Κοσμᾶς , Θωμᾶς , Λουκᾶς , Ἰησοῦς , Μωσῆς , եւայլք ։

6. Ո՛ և է բառ՝ որ ευ կամ ου կը յանգի և շեշտը վերջաւորութեանը վրայ կառնու , ոլորակ կ'ընդունի · ինչպէս , βασιλεῦ , γονεῦ , βοῦ , ποῦ , եւ այլք , բացի ἰδού (աւասիկ) բառէն ։

7. Բոլոր միավանկ բառերն՝ որք υς ους և ως կը յանգին , ոլորակ կ'ընդունին · ինչպէս , μῦς , δρῦς , βοῦς , πλοῦς , φῶς , եւայլք , բացի πούς (ոտն) բառէն ։

Գիտ. Բ. — Այն բառերն՝ որք իրենց մակվերջընթերին վրայ շեշտեալ են և կամ վերջընթերնուն վրայ ոլորակ առած են , երբ իրենցմէ յետոյ μοῦ , σοῦ , τοῦ , τῶν , μᾶς , σᾶς , τὶς , τὶ բառերը կան , յայնժամ ասոնք առանց շեշտի միալով՝ նախադաս բառէն յանգին վրայ շեշտ մի ևս կ'աւելցուի · ինչպէս , ὁ ἄνθρωπός μου , τὸ ποτήριόν σας , ὁ οἶκός του , τὸ μῆκός των , ἄξιός τις , ἄλογόν τι , եւայլք , բայց երբ նախադաս բառն իւր շեշտը

վերջաւորութեան կամ վերջընթերին վերայ ունենայ, այն ժամանակ վերոյիշեալ բառերն միայն անշեշտելի կը մնան. ինչպէս, ὁ λόγος του, ἡ μήτηρ των, τοῦ πατρός σας, ξένος τις, καλός τις, *եւայլն*.

ԳԼՈՒԽ Զ.

ՀԱՒԱՔՈՒՄՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱՑ

Յօդ. 132. — *Ուսանողք՝ թէեւ հոլովեալ անուանց եւ խոնարհեալ բայից վերջաւորութեանց, որպէս նաեւ դերանուանց, մակբայից, շաղկապից, եւ բազում ուրիշ բառերուն եւ մասնիկներուն ուղղագրութեան մասին բաւական հմտութիւն ստացած են, սակայն մենք՝ առաւել դիւրութիւն ընծայելու մտօք, պատշաճ համարեցինք ուղղագրութեան ընդհանուր կանոնաց հաւաքումմը եւս յաւելուլ հոս, որ է հետեւեալն.* —

1. *Այն անուններն որք* ία *կը յանգին եւ շեշտերնին վերջընթերնուն վերայ կառնուն*, ι *գրով կը գրուին եւ յանգերնին երկար է. զորօրինակ*, κακία, σοφία, εὐτυχία, εὐσπλαγχνία, *եւայլն*.

2. *Այն անուններն որք* εια *կը յանգին եւ շեշ-*

ածրնին մակվերջընթերնուն վերայ կառնուն, ε երկբարբառով կը գրուին և յանգերնին սուղ է. զորօրինակ, ἀλήθεια, εὐγένεια, εὐσέβεια, և այլք։

3. εύω յանգեալ բայերէն εια վերացեալներն ալ թէև ει երկբարբառով կը գրուին, սակայն յանգերնին երկար է. զորօրինակ, βασιλεύω — βασιλεία, λατρεύω — λατρεία, παιδεύω — παιδεία, վասնորոյ և չեշտերնին վերջընթերնուն վերայ կը դրուի։

4. υς յանգող արականաց իգականներն εια կը վերջանան և յանգերնին սուղ է. զորօրինակ, γλυκύς — γλυκεῖα, ἡδύς — ἡδεῖα, βραχύς — βραχεῖα, և այլք։

5. ους յանգեալ ածականաց վերացեալներն οια կը վերջանան և յանգերնին սուղ է. զորօրինակ, εὔνους — εὔνοια, ἀγχίνους — ἀγχίνοια, և այլք։

6. ότης յանգեալ վերացեալներն ο գրով կը գրուին. զորօրինակ, ὁσιότης, ἀγαθότης, ἁγιότης, λαμπρότης, և այլք։

7. Այն բաղդատական և գերադրական ածականներն՝ որք ότερος, ότατος և վերացեալ οσύνη կը յանգին, ο գրով կը գրուին երբ իրենց նախադաս վանկն երկար է, իսկ երբ սուղ է՝ ω գրով. ինչպէս, δικαιότερος, δικαιότατος, δικαιοσύνη, ἱερώτερος, ἱερώτατος, ἱερωσύνη, և այլք։

8. ωτης յանգող արական անուններն երբ ω գրէն առաջ ձայնաւոր գիր ունին, ωով կը գրուին, իսկ եթէ բաղաձայն՝ ο գրով. զորօրինակ, στρα-

τιώτης, ἀπηλιώτης, ἀγρότης, ևայլք, բացի θιασώτης (հետեւող) բառէն որ ω գրով կը գրուի փոխանակ ο գրոյն ։

1․ αίνω յանգող բոլոր բայերն αι երկբարբառով կը գրուին․ զորօրինակ, μαραίνω, ξηραίνω, ὑφαίνω, μωραίνω, բացի μένω և στένω բառերէն՝ որք ε գրով կը գրուին ։

10․ ίζω յանգեալ բոլոր բայերն ι գրով կը գրուին․ զորօրինակ, ἐλπίζω, θερίζω, συρίζω, ևայլք, բացի ἀθροίζω, որ οι ով δανείζω, ει ով և χρήζω, որ η գրով կը գրուին ։

11․ ίνω յանգեալ երկվանկ բայերն ι գրով կը գրուին․ զորօրինակ, κρίνω, κλίνω, ևայլք, բացի πλύνω (լուալ) բայէն, որ υ ով կը գրուի ։

12․ ύνω յանգեալ երրավանկ և բազմավանկ բայերն υ գրով կը գրուին․ զորօրինակ, ἀμύνω, μολύνω, ἀπαλύνω, λαμπρύνω, ևայլք ։

13․ Այն անուններն որք ε և ει վերջընթեր ունեցող բայերէն ծագած են, ο գրով կը գրուին․ զորօրինակ, λέγω — λόγος, νέμω — νόμος, στέλλω — στόλος, φθείρω — φθορά, σπείρω — σπορά, ևայլք ։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ներկայ գործոյս 35 և 90րդ. յօդուածներուն մէջ որպէս տեսանք, Հելլէն լեզուն տասն և ութ նախադրութիւններ ունի, զորս նաև իբր նախադաս մասնիկ գործածելով՝ անոնցմով կը կազմէ ածանցեալ բառեր (գոյական, ածական, բայ և մակբայ)։ Այս կերպ կազմեալ յունական բառերն, որոց թիւը շատ մեծ է յոյն լեզուին մէջ, Հայկական դպրականութեան նախնիք՝ թէև ի Հայ թարգմանեցին Հայ լեզուին յատուկ հարազատ բառերով և իւրեն սեպհական ձևերով, այնպէս որ մեր նախադրութեամբ և արմատներով շինուած բառից դէմ Ոսկեդարու կոչեալ Հայերէնն ընդհանրապէս կը ներկայացնէ արմատ բառեր կամ լեզուին յատուկ ոգւոյն յօրինեալ բարդութիւններ և կամ քով քովի դրուած առանձին բայ և մակբայ. այսու ամենայնիւ յայտ է թէ «երկրորդ» կամ «կրտսեր» կոչեալ թարգմանիչք և մատենագիրք ձեռնարկեցին Հայերէնի մէջ գործածել յունակերպ կազմութիւն ունեցող բառեր, զորս ինքեանք շինեցին հետևելով յունին, և այսպէս ոչ փոքր քանակութիւն նմանօրինակ բառից ի հանդէս եկաւ, որք ճշդիւ կը համապատասխանեն յոյն բառերուն

իւրեանց ձեւովն և կազմութեամբն: Առ այս իբրև նախադաս մասնիկ գործածեալ յունական նախադրութեանց իւրաքանչիւրին համարժէք հայ մասնիկներ սահմանեցին, որոցմով դիւրաւ յունական բառերը վերածուեցան հայերէնի: Այս կերպը «Հելլենաբանութիւն» կոչուեցաւ և թէև Հայ լեզուին հարազատ ոգւոյն հակառակ ճանչցուեցաւ, սակայն ոչ նուազ մէջ մտան և մնացին նոյն արուեստով կազմեալ բազմաթիւ բառեր և անկէ յետոյ այդ մասնկանց գործածութիւնը սովորական եղաւ:

Արդի աշխարհաբար հայերէնը զանոնք կը ճանաչէ իբրև մասն լեզուին կազմական տարերց և անոնցմով շինեալ բառերուն վրայ չը նայիր իբրև օտարակերպ: Ահա այս տեսակէտով իրենց ունեցած կարեւորութեանը համար և մեր այս վաստակն օգտակարագոյն կացուցանելու փափաքով, պատշաճ համարեցինք յաւելուլ աստ յունական նախադրութեանց տասն և չորսին և անոնց համապատասխան Հայ մասնիկանց մի բաղդատական ցուցակ՝ օրինակներով հանդերձ:

Εν և εἰς = Ներ. զորօրինակ, ἔργον (գործ), ἐνεργῶ (ներգործել). κλείω (փակել), ἐγκλείω (ներփակել). πνέω (շնչել), ἐμπνέω (ներշնչել), ἔμπνευσις (ներշնչութիւն). ἄγω (ածել), εἰσάγω

(**ներածեմ**), εἰσαγωγή (**ներածութիւն**), **եւայլք**։

Ἐκ = **արտ, բաց**. **զորօրինակ**, φέρω (**բերեմ**), ἐκφέρω (**արտաբերեմ**). ἄγω (**ածեմ**), ἐξάγω (**արտածեմ**), ἐξαγωγή (**արտածութիւն**). θέτω (**դնեմ**), ἐκθέτω (**բացադրեմ**), **եւայլք**։

Σύν = **բաղ, շաղ, շար**. **զորօրինակ**, θέτω (**դնեմ**), συνθέτω (**բաղադրեմ**), σύνθεσις (**բաղադրութիւն**). δεσμός (**կապ**), σύνδεσμος (**շաղկապ**). ἔχω (**ունիմ**), συνέχεια (**շարունակութիւն**). τάσσω (**դասեմ**), συντάσσω (**շարադասեմ**), **եւայլք**։

Πρός = **առ, վեր**. **զորօրինակ**, ὥρα (**ժամ**), προσωρινός (**առժամեայ**). βάλλω (**արկանեմ**), προσβάλλω (**առարկանեմ եւ առարկեմ**). θέτω (**դնեմ**), προσθέτω (**վերադրեմ**). ἄγω (**ածեմ**), προσάγω (**վերածեմ**), προσαγωγή (**վերածութիւն**), **եւայլք**։

Πρό = **արտ**. **զորօրինակ**, φέρω (**բերեմ**), προφέρω (**արտաբերեմ**). ἄγω (**ածեմ**), προάγω (**արտածեմ**), **եւայլք**։

Ἀνά = **վեր**. **զորօրինակ**, ἄγω (**ածեմ**), ἀνάγω (**վերածեմ**). πέμπω (**առաքեմ**), ἀναπέμπω (**վերառաքեմ**). γνωρίζω (**ճանաչեմ**), ἀναγνωρίζω (**վերաճանաչեմ**). βαπτίζω (**մկրտեմ**), ἀναβαπτίζω (**վերամկրտեմ**), **եւայլք**։

Διά = **տրամ, տար, ընդ**. **զորօրինակ**, λόγος (**բան**,

խօսք), διάλογος (տրամախօսութիւն). μέτρον (չափ), διάμετρος (տրամաչափ, տրամագիծ). θέσις (դիրք), διάθεσις (տրամադրութիւն). λύω (լուծեմ), διαλύω (տարալուծեմ). φωνῶ (ձայնեմ), διαφωνῶ (տարաձայնեմ), եւայլք։

Μετά = յետ, փոխ. զորօրինակ, τρέπω (փոխեմ), μετάτρέπω (յեղափոխեմ). θέτω (դնեմ), μεταθέτω (փոխադրեմ), եւայլք։

Παρά = առ, ապ. զորօրինակ; θέτω (դնեմ), παραθέτω (առդնեմ). δέχομαι (ընդունիմ), παραδέχομαι (առընդունիմ). νόμος (օրէնք), παράνομος (ապօրէն), եւայլք։

Ἐπὶ = վեր, մակ. զորօրինակ, φέρω (բերեմ), ἐπιφέρω (վերաբերեմ). σκοπός (դիտող, տեսող); ἐπίσκοπος (վերատեսուչ, եպիսկոպոս). φυλάσσω (պահեմ), ἐπιφυλάσσω (վերապահեմ). ὀνομάζω (անուանեմ), ἐπονομάζω (մականուանեմ). θέσις (դիրք), ἐπέθετον (մակդիր), եւայլք։

Περί = պար, շուրջ. զորօրինակ, ἔχω (ունիմ), περιέχω (պարունակեմ). γράφω (գրեմ), περιγράφω (պարագրեմ). ὁρίζω (սահմանեմ), περιορίζω (պարասահմանեմ). βλέπω (հայիմ, տեսանեմ), περιβλέπω (շրջահայեմ), եւայլք։

Ἀπὸ = ապա, ապ. զորօրինակ, δεικνύω (ցուցանեմ) ἀποδεικνύω (ապացուցանեմ), ἀπόδειξις (ապա-

ցոյց). στροφή (**դարձ**), ἀπόστροφος (**ապադարձ**)(1). κέντρον (**կեդրոն**), ἀπόκεντρος (**ապակեդրոն**). ἡνίον (**երասան**), ἀφηνίασις (**ապերասանութիւն**), **եւայլք**։

Ὑπὸ = ԸՆԴ, ՍՏՈՐ. **զորօրինակ**, πίπτω (**անկանիմ**), ὑποπίπτω (**ենթարկիմ**). θέτω (**դնեմ**), ὑποθέτω (**ենթադրեմ**). ὑπόθεσις (**ենթադրութիւն**). κεῖμαι (**կայանամ**), ὑπόκειμαι (**ենթակայանամ**), ὑποκείμενον (**ենթակայ**). γράφω (**գրեմ**), ὑπογράφω (**ստորագրեմ**). τάσσομαι (**դասուիմ**), ὑποτάσσομαι (**ստորադասուիմ**), ὑποτακτική (**ստորադասական**). διαιρῶ (**բաժանեմ**), ὑποδιαιρῶ (**ստորաբաժանեմ**), **եւայլք**։

Ὑπέρ = ԳԵՐ (ԳԵՐԱԶԱՆՑ). **զորօրինակ**, τιμή (**պատիւ**), ὑπέρτιμος (**գերապատիւ**). βαίνω (**երթամ, անցանիմ**), ὑπερβαίνω (**գերազանցեմ**). ἄνθρωπος (**մարդ**), ὑπεράνθρωπος (**գերմարդկային**), φυσικός (**բնական**), ὑπερφυσικός (**գերբնական**). θετικός (**դրական**), ὑπερθετικός (**գերադրական**), **եւայլք**։

ԾԱՆՕԹ. — Շատ անգամներ ՅԱՐ ***մասնիկն եւս գործածուած է՝*** 1. σὺν ***նախդրին տեղ. ինչպէս***. δέω (**կցեմ**), συνδέω (**յարակցեմ**). πλέκω (**հիւսեմ**), συμπλέκω (**յարահիւսեմ**). 2. πρὸς ***նախդրին տեղ. ինչպէս***; ὄνομα (**ա-**

---

(1) ***Տես Յօդ.*** 115, ***Ծանօթ.***

նուն), προσωνυμία (յարանունութիւն)․ θέτω (դնել), προσθέτω (յարադրել)․ 3. παρὰ նախդրին տեղ․ ինչպէս, τείνω (ձգել), παρατείνω (յարաձգել)․ δεῖγμα (օրինակ, ցոյց), παράδειγμα (յարացոյց)․ 4. ἐκ նախդիրին տեղ․ ինչպէս, ἀκολουθῶ (հետեւիլ), ἐξακολουθῶ (յարատեւել), եւ ուրիշ նոյնօրինակ բազում մասնիկներ եւ բառեր գործածուած են Հելլենականին նախդիրներով բարդեալ բառից ճիշդ եւ հարազատ իմաստը պահելու դիտմամբ։

ԴԻՏՈՂ. — Ըստ որում Հելլենականին մէջ նախադրութիւնք վերոյիշեալ նշանակութիւններէն ի զատ բարդեալ բառից վերայ սաստկութեան իմաստն եւս կը յաւելուն, Հայ Թարգմանիչք, ըստ իմ կարծեաց, սոյն իմաստն եւ զօրութիւնը պահելու դիտմամբ, զ. ըն, ընդ եւ յ մասնիկները բառից վերայ աւելցուցած են․ ինչպէս, φθείρω (եղծանել), διαφθείρω (զեղծանել)․ θαυμάζω (արմանալ), ἀποθαυμάζω (զարմանալ)․ πίπτω (ընկենուլ), καταπίπτω (զընկենուլ)․ ἀγκαλίζομαι (գրկել), ἐναγκαλίζομαι (ընգրկել եւ ընդգրկել)․ χείρ (ձեռն), ἐγχειρίζω (ընձեռել)․ τράχηλος (վիզ), ἐκτραχηλίζομαι (ընդվզիլ)․ ἔναντι (դէմ), κατέναντι (ընդդէմ)․ ὁλικός (հանրական), καθολικός (ընդհանրական, Կաթողիկոս)․ αὐξάνω (աւելուլ), ἐπαυξάνω (յաւելուլ)․ τύχη (բախտ, աջողութիւն), ἐπιτυχία (յաջողութիւն)․ ἀποστέλλω (ուղարկել), ἐξαποστέλλω (յուղարկել)․ τίμιος (արգոյ), ἔντιμος (յարգոյ), եւայլք։

ԾԱՆՕԹ. — Դիտելու արժանի է թէ՝ որպէս Հայերէնին մէջ զ գիրը բառից սկիզբը դրուելով շատ անգա

ստորոգութեան իմաստ մը կը յաւելու անոնց վերայ, նոյնպէս Հին Հելլենականին մէջ ζα մասնիկն երբեմն բառից սկիզբը դրուելով նոյն իմաստը կուտայ. ինչպէս, λευκός (սպիտակ), ζάλευκος (շատ սպիտակ, ճերմերմակ). πότης (արբեցող), ζαπότης (շատ արբեցող). πλοῦτος (հարստութիւն), ζάπλουτος (շատ հարուստ), եւայլք։

ԾԱՆՕԹ. — Նախնի մատենագիրք՝ Յունական յատուկ անունները հայացընելու համար՝ հետեւեալ տառադարձութիւնները կընէին. այսինքն՝

α,	ա.	ι,	յ, ի.	ῥ, ρ, (4)	հռ, ռ, ր.
β,	բ.	κ,	կ.	σ,	ս, շ.
γ,	գ.	λ,	ղ, լ.	τ,	տ.
δ,	դ.	μ,	մ.	υ,	իւ, ւ, ի.
ε,	ե, է.	ν,	ն.	φ,	փ.
ζ,	զ.	ξ,	քս, չ.	χ,	ք.
η,	է, ե.	ο,	ո, օ.	ψ,	փս, ս, պս.
θ,	թ.	π,	պ.	ω,	ով, ո.

1. Հայ մատենագիրները սովորաբար Յունական անուանց սեռականները իբր ուղղական կը գործածեն.

2. Երկու ρ գրերն ալ ռ-ի կը փոխուին. իսկ այն բառերը որք այս (ʽ) նշանը ընդունող ձայնաւորներով կսկըսին, Հայերէնին մէջ հ գիրը կառնեն. ինչպէս՝ Ἱπποκράτης Հիպպոկրատէս եւայլք։

ՎՐԻՊԱԿՔ

77	8	ἰδικός μον	ἰδικός μου
175	7	τολμῶμαι	τιμῶμαι
175	8	τολμᾶσθαι	τιμᾶσθαι
176	3	λύεηθαι	λύεσθαι
186	17	ἐσεβέσθην	ἐσεβάσθην
188		*յաւել*, χάνω, *կոր.* ἔχασα *կորուսնցնեմ.*	
200	3	*աշխարհաբառին*	*աշխարհաբարին*
203	24	αἰκίας	οἰκίας
204	16	ἐχ *ի պէս*	ἐν *ի պէս*
213	18	ἐπίθετον	ἐπίθετον
216	15	ὑπέργερος	ὑπέργηρος
217	16	ἄνευ ὁμῶν	ἄνευ ὑμῶν
227	11	ἰσχυρός	ἰσχυρός
228	15	*ճիշտ իմաստը պի-տի տար*	*աւելի յարմար բացատ-րութիւնը պիտի տա*
239	15	ἄμμος	ἄμμος
242	20	*որոյ գեռականին*	*որոյ յոգնակի սեռա-կանին*
240	21	εὐτυχήν	εὐτυχῶν
249	1	βουκέβαλος	βουκέφαλος

ԳՐԱՏՈՒՆ
Պ. Պ. ՊԱԼԵՆՑ
Կ. Պոլիս, Զագմաջըլար Եօղուշու, Թիւ 20

	Ղրշ.	Փրյ.
ԱՅԲԲԵՆԱՐԱՆ, Պ. Թէրզեան	1	20
Աշխ. ԳՈՐԾՆ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹ. Ա. Մ. Պէօքճեան		
Տրցամ Ա. Մասունք բանի կամ Բառեր :	2	
» *Բ. Ստորաբաժանումն բառերու* .	2	20
» *Գ. Ձեւափոխութիւն բառերու* .	2	20
ԱՐՁԱԳԱՆՔ ԲԱՌԻՑ, Ա. Մ. Գարագաշեան . . .	10	
ԲԱՌԱՐԱՆ Անգղ: Հայ. Տաճկ. Մ. Միհեանեան . . .	50	
» Հայ. Գաղղ. Կ. Ոսկեան	27	
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՆԳՂԻԱՐԷՆ ԼԵԶՈՒԻ		
Հետեւողութեամբ Տր. Թօմսոն Լաափէի	12	20
ՀԱՄԱՌ. ՀԱՅ. ՔԵՐԹ. *Գաղղ մաս.* Մ. Գ. Մոզեան	4	
ՆՈՐ ԸՆԹԱՑՔ *Գաղղ. ի Հայ Թարգ.* Կ. Ոսկեան,		
Մասն Ա. — Ե. կազմեալ	16	
ՈՃՈՅ՝ ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ, ԱՌԱԿՔ *Ֆրանս. լեզուի*		
Յ. Թ. Հինօյեան	10	
ՑԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ ԱՐԴԻ՝ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ, *Համդերձ ծանօթութեամբ, չափական եւ շեշտեալ ոտանաւորներու վրայ* . . . . Մ. Գասապեան	3	
ՔԵՐԱԿԱՆ ՕՍՄԱՆԵՐԷՆ (*կէս ժամու մէջ ուսանելի*),		
Տ. Զօլաքիօխ	1	20
» **ԳԱՂՂ.** *Օլէնտօրֆ*, Ա. Մ. Գարագաշ	15	
Նոյնին բանալին	5	
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԱՂՂ. *Է. Օթթօյի, Մասն Ա.* . . .	7	
» » » » » *Բ.*	8	
Նոյնին բանալին . . .	4	
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԱՂՂ. Շիշմանեան	4	

Գին 10 Ղրուշ

معارف عموميه نظارت جليله‌سنك ٢٨ جمادى الاخر ٣١٢ و ١٣ كانون اول
٣١٠ تاريخلى و ٦٨٨ نومرولى رخصتنامه‌سيله نشر اولنمشدر